

Յ. ԱՐԱՐԱՎԻ

ՅԱՓԵՏՍԱԿՈՒՄ  
ԲՈԳԻԵՐ



ՅԱՓԵՏԱԿԱՆՈՒՄ  
ԲՈԳԻԵՐ



ՎԵՅ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԵՐ

Կողքի գծագրութիւն՝  
ԳԵՐԱՄ ՇԻՐՎԱՆԵԱՆ

Տողաշարութիւն, դասաւորում և տպագրութիւն՝  
ՏԻԳՐԱՆ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ,  
**DICK ART DESIGN**  
2795 Bates, suite 208  
Montreal, Que. H3S 1B5  
(514) 739-6900

## ՅԱՌԱԶԱԲԱՆ

Ներկայ պատմուածքների շարքը՝ «Յափշտակուած Հոգիներ» վերնագրով պատկանում է գրչին Յ. Ուրարտացիի, իսկական անունով՝ Գարասէֆէրեան։ Այս տոհմը յայտնի է եղել Վասպուրական աշխարհում, որպէս պետական - վարչական գործերի հմուտ եւ օրինապահութեամբ ծառայել է Օսմանեան պետութեան։ Սակայն, ինչպէս յայտնի է Օսմանեան պետութեան պատմութիւնից, Քրիստոնեայ հայ տարրը ենթակայ է եղել աննկարագրելի կողոպուտների, բռնութեան եւ ջարդերի, անիրաւութիւնների, որոնց զոհ են զնացել բռլոր հայերն անխտիր, նոյնիսկ պետական հաւատարիմ պաշտօնեաներ եւ զինուորականներ։ Այդպիսիներից է եղել Գարասէֆէրեան տոհմը, որի դեկավարները ջարդուել են, անգրօրէն, ենիչէրիների եւ զինուորական վարիչների կողմից։

Վեց «Յափշտակութիւններ»ի պատմութիւնը յուղիչ, ցնցող դրուագներ են արեւմտահայերի կեանեից, որոնց ընթացքում վկաներն ենք դառնում հայի գոհունակութեան, երբեմն հրաշքով ազատուելուն, հայկական զգացմունքների պահպանման բարոյականկրօնական բարձր սկզբունքներին եւ նոյնիսկ արդար վրէժինդրութեան, հայկականութեան վերադարձին։

Յ. Ուրարտացին հետաքրքրական ձեւով եւ սահուն գրչով նկարագրում է մէկ տոհմի ապրած ողիսականը իր ցնցող էջերով։ Թուրքիոյ բռնակալ, ջարդարար ժաղավականութեան արիւնոտ էջերն են որ տողանցում են մեր աչքերի առջևից։

Նման պատմութիւններ կարդալիս մարդ ակամայ կրկնում է հայ վշտի երգիչ Ա. Սհարոնեանի խօսքը՝ «Այստան չարիք քէ ձեզ ներեն մեր որդիք, բող ողջ աշխարհ հային կարդայ նախատինք»:

Այո՛, այդ չարիքն աններելի է, մանաւանդ որ ցեղասպանը զդում չի արտայայտում։ Հայ ժողովուրդը պահանջատէրն է իր հայրենի հողերի, իր կորուստների, իր մարդկային եւ ազգային իրաւունքների։ Եւ հայ ժողովուրդի պայքարը չպիտի դադարի, մինչեւ այն օրը, երբ կը տիրանայ իր իրաւունքներին, կը կերտի Ազատ, Անկախ եւ Ամրողջական Հայաստան, Միացեալ հայութեամբ, ու իր հայրենի հողի վրայ բոհիչք կուտայ իրեն յատուկ հանճարին։

Այս պատմուածքները բող կարդայ հայ նոր սերունդը եւ ոգեշնչուի հայ ժողովուրդի իտեալներով։

Թէհրան, 1971

Ա. ԱՄՈՒՐԵԱՆ

# ՅԱՓԾՏԱԿՈՒԱԾ ՀՈԳԻՆԵՐ

**Վկայութիւն Առաջին**

## ՄԱՇՅ ԻՄ

«Կոտորա՛ծ, կոտորա՛ծ, կոտորա՛ծ,  
Քաղաքներուն մէջ եւ քաղաքներէն դուրս,  
Եւ բարբարոսները արիւնով դառնան  
Մեռեալներուն եւ ոգեվարներուն վրայէն . . .»

ՍԻԱՄԱՆԹՈ

Գլուխ Ա.

## ԵՂԵՐԱՊԱՏՈՒՄ

Հայկական Մեծ Եղեռնի նախօրեակին, Ժէօն  
թրքական կառավարութեան պատերազմական նախա-  
րար արիւնակցակ Էնվեր Փաշան, հետեւեալ հրամանն  
էր արձակել. —

«Ներկայ կացութեան թերումով, կայսերական  
հրամանով, որոշուած է Հայ ցեղի ոչնչացումը հետեւ-  
եալ անհրաժեշտ միջոցառումներով. —

1. Մինչեւ հինգ տարեկան մանուկներից զատ,  
Օսմանեան հպատակութիւն ունեցող եւ Օսմանիոյ  
սահմանների վրայ ապրող ՀԱՅ անուն կրող պաշի-  
պողութներին, Քաղաքներից ու գիւղերից դուրս  
հանելով, պէտք է կոտորել:

2. Կայսերական բանակի մէջ ծառայող բոլոր ՀԱՅ անհատներին, գաղտնի, իրենց զօրաբաժիններից զատել, ընդհանուրի աշխերից հեռու, ծածուկ վայրերում գնդակահարել . . .

Ընդհանուր պատերազմական նախարար՝ Էնվեր»:

*Այս հրամանից մի քանի ամիսներ յետոյ, 1915 թ. Սեպտեմբեր 16-ին, Հալէպի Կուսակալին ուղղուած թալէաթի հրամանգրում հրահանգուած էր. —*

«Նախապէս հաղորդուել է, թէ կառավարութիւնս, իրքիհատի հրամանով, որոշել է բուրքիոյ մէջ բնակուող ընդհանուր Հայութեան փնացնել: Այս հրամանին ու որոշման հակառակողները պետութեանս պաշտօնական կազմին մաս չեն կազմեր: Կին, տղայ, անկար նկատի չունենալով, փնացման միջոցները ինչՔան էլ եղերական լինեն, խղճի զգացմունքին ականջ չկախելով, Հայերի գոյութեան պէտք է վերջ տալ . . .

Կայսերական բուրքիոյ ներքին գործոց նախարար՝ ԹԱԼԷԱԹ»:

Եւ ահա, հարիւրաւոր տարիներ շարունակ, հայուարդար աշխատանքի արդիւնքները խլող, հայուազգային եւ կրօնական սրբութիւնները պղծող բռնագրաւիչ թուրք ժողովուրդը, նոյնքան վայրենի ու գաղանաբարոյ քիւրտ ասպատակիչների հետ, հաճոյքով ընդունեցին այդ հրէշային հրամանները եւ իսկոյն գործադրման անցան:

Նախ հազարաւոր հայ ընտրեալների, աքսորի պատրուակի տակ, բանտարկեցին, քշեցին բնակավայրերից հեռու - ամայի վայրերում գանկահարեցին ու գնդակահարեցին: Միեւնոյն ժամանակ, թրքական բանակում զօրակոչուած հարիւր-հազարաւոր հայ ծաղիկ երիտասարդութեան, զիշերով, զօրանոցնե-

բում, իրենց անկողիններում յանկարծակիի բերելով, ձեռներնին կապկապած, նոյնպէս քշեցին հեռաւոր ամայի վայրերում, գնդակահարեցին ու սուխնահարեցին:

Վերջում, անպաշտպան մնացած երեխաներին, կանանց ու զառամեալներին տեղահանեցին, դէպի հարաւ, դէպի անապատները քշեցին, դէպի անխուսափելի մահը:

Թալանեցին եւ ապա կրակի ճարակ դարձրին հազարաւոր հայ գիւղեր ու քաղաքներ, զարաստեղծ վանքեր ու եկեղեցիներ, դպրոցներ ու բազմահազար մշակութային օճախներ:

Խորտակեցին այն աղբիւրը, որից ջուր էին խմում, յօշոտեցին այն մարմինը, որի վրայ դարեր շարունակ մակարոյծի պէս կպած նրա արիւնն էին ծծել:

Աքսորի մահասփիւռ ճամբաններում գեղեցիկ հայ կոյսերին ու կանանց յափշտակեցին, բռնաբարեցին: Գետեղերքների մօտով քշուող խլեակներից՝ անթիւ կոյսեր ու կանայք, խենէլ դահիճների առեւանգումից ազատուելու համար, ինքնակամ, իրենց գետերի փրփրադէզ ալիքներին յանձնեցին:

Գլուխ Բ.

## ՄՆԱՑՈՐԴԱՅ ՅԱՓԾՏԱԿՈՒՄ

Տեղահանուածներից ողջ մնացած խլեակները անցան Տէր ԶՕՐի անապատով, այնտեղն էլ թողնելով սովին ու հիւանդութիւններին զոհ դարձած իրենց հարազատների դիակները, կիզիչ արեւի ու գիշատիչների քմահաճոյքին:

Մահուան, արիւնի եւ անասելի տառապանքների ճամբաններով անցած այս խլեակների մնացորդացները մտան արաբական երկիրների սահմանները: Սրանցից մէկ խումբը կանգ առեց իրաքի սահմանում, Տիգրիս թափուող մի գետակի ափին:

Արշալոյսն արդէն բացուել էր:

Կիզիչ արեւն զգացնել էր տալիս իր ներկայութիւնը, բայց գիշերային պաղութիւնից պաշտպանւելու համար իրենց քուրջերում փաթաթուած խլեակները՝ դեռ անշարժացած պառկած էին գետնին:

Գետակի ափից քիչ հեռու, երեք ձողիկների կատարներին ամրացուած մի զգգուռած շալի հովանու տակ, իրարու փաթաթուած ու կծկուած պառկել էին Սերաստացի վաճառական Գրիգոր Մորլեանի կինն ու երեխաները:

Ընտանիքի մայրը, 36-ամեայ Սաթենիկը, իր ոսկրացած ու ցեխապատ դէմքում խոր ընկած աչքերի յոգնատանջ, բայց գուրգուրալից հայեացքը սեւեռել էր իր կրծքին հպուած ու դեռ ննջող, նոյնպէս հիւծուած ու յոգնատանջ զաւակների վրայ: Ամենամեծը՝ 16-ամեայ Վարսենիկն էր, բարձրահասակ ու հասունացած մի գեղեցկուհի, բայց յափշտակումից զերծ մնալու համար, նոյնպէս ցեխապատ դէմքով. երկրորդը, 12-ամեայ Յակոբիկն էր, իսկ երրորդը, 10-ամեայ Երուանդիկը:

Սաթենիկի ամուսնու, Գրիգոր Մարլեանի մեծ խանութին ու պահեստները բռնազրաւելուց յետոյ, իրեն էլ բանտարկել էին եւ այլեւս յետ չէր վերադարձել:

Տեղահանութեան նախօրեակին, Սաթենիկը խելացի էր վարուել, ընտանիքով ամենամաշուած, հին ու անարժէք հագուստներ էին հագել:

Սաթենիկը զիտմամբ սկսել էր կաղալ, իր, որպէս թէ հիւանդ ոտքերին քուրջերից փաթաթան էր կապել, որոնց ծալքերում իրենց խնայած սեւ օրուան համար պահած ոսկիներն էր կարել:

Աքսորի ճանապարհին, իրենց հսկող ոստիկանները, որոնք իւրաքանչիւր զաւառն անցնելիս փոխւում էին, երկու անգամ ուղեցել էին Վարսիկին խլել, բայց Սաթենիկը իր գրապանում պահած, «վերջին» ոսկին յափշտակիչների երախը նետելով կարողացել էր ազատել Վարսիկին:

\* \* \*

Գաղթակայանի մօտակայ բնակավայրերի արար ժողովուրդը սկսել էր օգնել այս թշուառներին. կապոցներով ու սլաներով հաց ու արմաւ էին բերում ու բաժանում: Աւելի ունեւորները կենդանի ոչխարներ էին բերել, տեղում մորթում, մեծ կաթսաների մէջ եփում ու բաժանում:

Մանաւանդ արար տարեց կանայք՝ մեծ խնամքով ու զարմանալի զթառատութեամբ խնամում էին հիւանդներին եւ ծայրաստիճան հիւծուածներին: Այդ կերպ վարուել էր հրամայել այդ օրերին Իրաքի իշխան՝ բարեսիրու ու մարդասէր Ֆէյզալը, (հետագայում՝ Իրաքի Ֆէյզալ Ա. թագաւորը):

Օգնութեան եկած արարները ոչ միայն սննդամթերքներով, հագուստով եւ կիզիչ արեւից պաշտպանուելու համար փոքրիկ վրաններով էին օգնում, այլ եւ ոմանք ծնողազուրկ որբացած երեխաներին տանում՝ որդեգրում էին:

Այո՛, մէկ կողմից մարդասիրական արարք էր նման վերաբերմունքը, բայց միւս կողմից, հայութեան համար, դա մի նոր կորուստ էր, մնացորդաց յափրչտակում:

\* \* \*

**Մէկ շաբաթ էր անցել արդէն:**

Գետակի ափին կանգ առած այս թշուառականներից ծանր հիւանդներն ու կատարելապէս հիւծուածները կնքել էին իրենց մահկանացուն ու թաղուել, քիչ հեռու մի բլրակի ստորոտում, խսկ վերապրածները, չնայած մի քիչ հանգստացել ու կազզուրուել էին ու սովոր սպառնալիքից ազատուել, բայց իրենց անյայտ ապագան ու ողորմելի վիճակը յոյս չէին ներշնչում նրանց, դեռ անընդունակ էին իրենց ապագան անձամբ տնօրինելու:

Արար բնակչութեան կողմից բերուած փոքրիկ վրանների տակ, խսիրների ու ջուլերի վրայ անց էին կացնում իրենց անյուսալի օրերը:

Գետափից քիչ հեռու, երկու ժայռերի միջև գարնուած փոքրիկ վրանի տակ, տեղաւորուել էր Սաթենիկը իր երեխաներով: Նա դեռ թոյլ էր, Վարսենիկն էր խնամում մօրն ու եղբայրներին:

Կէս օր էր արդէն. նրանք, ովքեր ի վիճակի էին եփած ոչխարի մսով լի կաթսաներին մօտենալ, իրենց հասանելիք բաժինն ստանալ, արդէն հերթի էին կանգնել:

Այդ օր, Պաղտատից 15 քիլոմետր հեռաւորութեան վրայ, իր չքեղ ապարանքում ապրող Շէյխ իԲՆ ՍԱՅԻԾՆ էլ խլեակներին օգնութեան էր եկել. երկու ոչխարներ էր բերել, որոնց՝ իր ծառաներն արդէն մորթել, եփել ու սկսել էին բաժանել, Սաթենիկենց վրանից մի քանի տասնեակ քայլ հեռաւորութեան վրայ:

Շէյխ իրն Սայիտը՝ 40-ի էր մօտենում. բարձրահասակ էր, համակրելի ու տիրական արտա-

քինով։ Նա սննդի բաշխման վայրից քիչ հեռու կանգնած՝ դիտում էր շարժուող կմախքներին ու ցաւակցութեամբ իր գլուխը շարժում։

Ճիշդ այդ միջոցին, Վարսենիկը, մի թիթեղեայ մեծ տուփ ձեռքին, իրենց վրանից դուրս եկաւ։ Տեսնելով թանկագին հագուստներով պճնուած ու տիրական կեցուածքով կանգնած Շէյխին, ակամայ կանգ առեց, բայց երբ նկատեց, որ Շէյխն էլ մեծ ուշադրութեամբ իրեն է դիտում, իսկոյն սթափուեց ու իր քայլերն ուղեց գէպի սննդարաշխման վայրը։

Մէկ շարաթուան ընթացքում ստացած բաւարար սննդից Վարսենիկը կազդուրուել էր, դոյն էր եկել այտերին ու նրա եղնիկի նման խոշոր ու հմայիչ աչուները այլեւս վախ ու սարսափ չէին արտայայտում, այլ, իրենց կուսական անմեղ հայեացքով լրացնում էին նրա անթերի դէմքի գրաւչութիւնը։

Շէյխը, տարուածութեամբ, իր հայեացքով հետեւում էր Վարսենիկի քայլուածքին։ Նրա դէմքը վճռական արտայայտութիւն ստացաւ, եւ նա իր մտքում մտմտաց, — «Ինչ գնով էլ լինի՝ այս եղնիկը ինձ է պատկանելու», — եւ իր քայլերն ուղեց Վարսենիկենց վրանը։

Վարսենիկը դէպի բաշխման կայանը քայլելիս զգաց, որ Շէյխի սուր հայեացքը իրեն է հետեւում, ու կանանց յատուկ ներքին բնազդային ձայնը մի նոր անցանկալի գալիք յուշեց նրան։

Վրանի տակ, Սաթենիկը իր շուրջն առած Յակորիկին ու Երուանդիկին, նատել էր։

Շէյխը ներս կուանալով, վրանի բացուածքից, նախ ուշադրութեամբ դիտեց մօրն ու մանչուկներին, եւ ապա թուրքերէնով խօսեց՝

— Ներողութիւն, խանում։ դուք, ի հարկէ, մեր լեզուն չգիտէք, բայց թուրքերէն անշուշտ խօսում էք։ Ասացէք խնդրեմ, քիչ առաջ ձեր վրանից դուրս եկող օրիորդը ձեր դո՞ւստրն է։

Սաթենիկը տեսնելով մետաքսեայ ու բեհեղեայ

հագուստների մէջ պարուրուած, իւրայատուկ զլիսի փաթոյթ կրող տիրական ու խնամուած արտաքինով մարդուն, հասկացաւ նրա ովլ լինելը։ Նրա մայրական բնագդն էլ մի նոր գալիք վտանգ ահազանգեց։ Մէկ վայրկեան իր պրատող հայեացքը Շէյխի լուրջ ու խաղաղ դէմքին սեւեռելով, մեղմ ձայնով պատասխանեց, —

— Այո՛, Զերդ պայծառութիւն։

— Կարո՞ղ եմ ներս մտնել խանում, ձեզ հետ խօսելիք ունեմ, — ինքնավստահութեամբ հարցրեց Շէյխը։

Սաթենիկն իր անհանգստութիւնը մեծ կամքի ուժով զսպելով, թոյլ ձայնով պատասխանեց, —

— Անշուշտ կարող էք, Զերդ պայծառութիւն. մի՞թէ մենք մեր այս պայմաններում մարդկային արժէք ենք ներկայացնում, որպէսզի մեր ցանկութեան կարեւորութիւն տուող ըլլայ։

Սաթենիկի այս պատասխանը Շէյխը հասկացաւ, որ խելացի ու կիրթ կնոջ առջեւ է գտնուում։ Մի րոպէ նրա մարդկային խիղճը շարժուեց, երբ պատկերացրեց մօր մը հոգեկան վիճակը՝ իր նպատակի գործադրման պարագային, բայց իր որոշումը եւ այդ թշուառներին օգնելու իր համոզումը, որպէս փոխ-հատուցում իր արարքի, ըստ իր հասկացողութեան, իրաւունք տուին իրեն, որպէս բարերարի, յայտնել Սաթենիկին իր որոշումը, —

— Խանում, ես հաւանեցի ձեր աղջկան, կնութեան պիտի առնեմ, իսկ ձեզ եւ ձեր մանչերին քաղաք կը տեղափոխեմ, մի յարմար բնակարան կ'ունենաք, ամէն ինչով ձեզ կ'ապահովացնեմ, մինչեւ որ ձեր մանչերը ի վիճակի դառնան ձեր ապրուստը հոգալու։ Այսօր իսկ քաղաք կը տեղափոխուէք, անհրաժեշտ հագուստեղէն ու կահ-կարասիք կը ստանաք, հանգստաւէտ բնակարանում կը տեղաւորուէք ու իմ շարունակական հոգանաւորութիւնը կը վայելէք։ Զեր մազին անգամ կազող չի լինի։ Կին ծառաներիցս մէկը ձեզ այնքան ժամանակ կը

հոգայ, մինչեւ որ դուք կազդուրուէք եւ ի վիճակի լինէք՝ ձեզ ինքներդ հոգալ, որից յետոյ կարող էք երբեմն ձեր դուստրին այցելութեան գալ:

Ի՞նչ էր մնում Սաթենիկին անելու. ընդդիմանա<sup>՞ր</sup> բողոքէ<sup>՞ր</sup>: Ո՞վ կարող էր կասեցնել ամենազօր Շէյխին իր որոշման իրականացումից: Անգամ եթէ յաջողուէր իրեն պահել Վարսենիկին, ինչպէս կարող էին չորսով դիմանալ այդ անյուսատու պայմաններում, կը կորչէին . . .

\* \* \*

Նոյն երեկոյեան, Պաղտատի գլխաւոր փողոցներից մէկում ստացած կոկիկ ու մաքուր բնակարանում Սաթենիկը նստած, Ցակորիկին ու Երուանդիկին իր թեւերի տակն առած, միասին ողբում էին Վարսիկի յափշտակումը:

Գլուխ գ.

## ՎԵՐԱԴԱՐՁԸ

Վարսենիկի յափշտակումից 12 տարիներ էին անցել:

Աշխարհը խաղաղուել էր, կեանքը իր կանոնաւոր հունի մէջն էր մտել: Սաթենիկը կազդուրուել էր, հայ մօրն յատուկ գուրգուրանքով սպասարկում էր, արդէն ինքնուրոյն դարձած իր գաւակներին:

Յակորը նպարավաճառի փոքրիկ խանութ ունէր, իսկ երուանդը, դպրոցն աւարտելուց յետոյ, մի հայ վաճառականի խանութում աշխատում էր գործակատարի պաշտօնով:

Տնտեսապէս ապահովուած էին, բայց հոգեկան հանգստութիւն չունէին: Սաթենիկը չէր կարող մոռանալ հարազատների կորուստը, մանաւանդ Վարսենիկի յափշտակումը:

Շէյխ իրն Սայիտը առաջին 6 - 7 տարիներին կանոնաւորապէս հոգացել էր Սաթենիկին ու մանչերին, բայց իր տուած միւս խոստումը չէր կատարել - երբեք հնարաւորութիւն չէր տուել Սաթենիկին՝ այցելելու իր աղջկան:

Պազտատում մայրն էր կարօտամաշ լինում եւ Շէյխի ապարանքում՝ Վարսենիկը:

Շէյխի, Վարսենիկից ունեցած, մանչ զաւակ Ահմատը արդէն 10 տարեկան էր դարձել: Հայրը նրան չորս տարիներէ ի վեր բաժանել էր Վարսենիկից, դպրոց էր ուղարկել եւ յատուկ դաստիարակի հսկողութեան էր յանձնել, չէր ուզում, որ մօր ու զաւակի միջեւ հոգեկան կապը ամրանար:

Ահմատը շատ ընդունակ եւ խելացի պատանի էր, առողջ եւ աճող կազմուածքով, արտաքինով իր մօր գեղեցկութիւնն էր ժառանգել:

Շէյխը չնայած իր արար կանանցից էլ մանչ զաւակներ ունէր, բայց բոլորից աւելի սրամիտ ուներկայանալի Ահմատին էր սիրում, հետեւողականօրէն իսլամական ոգով դաստիարակում նրան:

Առաջին իսկ օրերից, երբ Ահմատն սկսել էր թոթովել, շէյխն արգիլել էր Վարսենիկին հայերէն խօսել իր որդու հետ: Բայց այնուամենայնիւ, Ահմատը հինգ տարեկան հասակում արդէն «Հայր Մեր» էր թոթովում:

Ահմատին իրենից անջատելուց յետոյ Վարսենիկն աւելի մելամաղձոտ էր գարձել, իր որդուն միայն հեռուից էր տեսնում:

Շէյխը, չնայած վերջին տարիներին կրկին երկու նոր արար երիտասարդ աղջիկներ էր կնութեան առել, բայց իր բացառիկ սրտագին վերաբերմունքը հանդէպ Վարսենիկի՝ չէր փոխել, միշտ նուէրներով էր այցելութեան գալիս եւ աշխատում էր մեղմացնել նրա վիշտը: Բայց ի զուր, նա տեսնում էր, որ Վարսենիկը օր ըստ օրէ աւելի էր մաշտում:

Մի օր էլ, երբ կրկին այցելութեան եկաւ, նկատեց, որ Վարսենիկի աչքերը լալուց կարմրել եւ ուռչել էին, դէմքը գունատուել ու նիհարել էր: Շէյխն այլեւս համոզուեց, որ Վարսենիկն այդ պայմաններում երկար չի կարող գիմանալ, ուստի, հակառակ իր ցանկութեան, Վարսենիկին առաջարկեց.

— Խանումս, ծանր է ինձ համար այս առաջարկն անել քեզ, բայց որովհետեւ ես չեմ ուզում, որ զուշարունակես այդ վիճակում ապրել, ուստի առաջարկում եմ քեզ, եթէ կամենում ես, կարող ես ձերոնց մօտ վերադառնալ, մշտապէս նրանց մօտ մնալ: Անշուշտ, քո ամբողջ կեանքի ընթացքում քեզ լի ու լի հոգալու եմ: Ձերոնք Պաղտատումն են, բարեկեցիկ վիճակ ունեն արդէն, եւ կարծում եմ, որ քեզ կ'ընդունեն ամենայն սիրով: Իսկ Ահմատը ինձ մօտ կը մնայ, գիտես որ նա իմ կեանքի իմաստն է, էութեանս մէկ մասը:

Վարսենիկն, անշուշտ, ուրախութեամբ ընդունեց

այդ առաջարկը, բայց, միեւնոյն ժամանակ գիտակցեց, որ իր մօր ու եղբայրներին վերագտնելով, միեւնոյն ժամանակ զրկուելու է իր որդուն - Ահմատին հեռուից տեսնելու հնարաւորութիւնից անգամ: Դրանից զատ, նա նաև գիտակցեց, որ իր եւ այդ բարի մարդու միջեւ հոգեկան որոշ կապ էր ստեղծուել:

\* \* \*

Երկու օր յետոյ, Վարսենիկն իր անձնական գոյքերով եւ բազմազան նուէրներով, Պաղտատ տեղափոխուեց՝ իր անջատուած սիրեցեալ հարազատներին՝ մօրն ու եղբայրներին միացաւ, որոնք անսահման ուրախութեամբ եւ սրտառուչ զրկախառնութեամբ ընդունեցին անսպասելիորէն իրենց միացող սրտակցին:

Գլուխ Պ.

## ԿԱՐՈՏԻ ԶԱՅՆԸ

1947 թուի ամառն էր:

Վարսենիկի վերադարձից յետոյ քսան տարիներ էին անցել:

Յակոբն ու Երուանդը շատոնց ի վեր արդէն ամուսնացել էին: Մաթենիկը բախտաւոր մեծ մայրիկ էր դարձել, չրջապատուած մէկ տասնեակ թոռնիկներով ու հոգատար զաւակներով: Նա իր կեանքի 68-րդ տարին էր ապրում, բայց դեռ չէր ուզում անգործ նստել, օգնում էր Վարսենիկին, որը անտրտունչ ու սիրով վարում էր տան տնտեսական աշխատանքները: Նա էլ արդէն 48-ի էր մօտենում, որոշել էր ցմահ իր հարազատների մօտ մնալ, հաշտուել իր ճակատագրի հետ: Միայն իր որդու, Ահմատի կարօտն էր քաշում. 20 տարիների ընթացքում, երբեք, երբեք, հեռուից անգամ, չէր տեսել իր մինուճար որդուն:

\* \* \*

Նոյն թուի Օգոստոսի 10-ին Երուանդը տուն վերադարձաւ՝ իր ձեռքում մի արարական թերթ բռնած: Լոռվենամբ Վարսենիկին մօտեցաւ եւ թերթի առաջին էջում տեղաւորուած մահազզը ցոյց տալով յայտնեց, որ Օգոստոսի 8-ին Շէյխ իրն Սայիթը իր մահկանացուն է կնքել, 71 տարեկան հասակում:

Երուանդը նկատեց, որ Վարսենիկի դէմքը նախ մոայլուեց եւ ապա խաղաղ ու երազուն արտայայտութիւն ստացաւ:

Եւ իսկապէս, Վարսենիկը նախ տիրեց, խղճահարւեց, բայց միեւնոյն ժամանակ, նրա մայրական զգացմունքներից բխած ներքին յուսազրող ձայնը շշնչաց. — «Դո՞ւ, ո՞վ մայր, շուտով կարող ես որդուդ գուրգուրանքը վայելել, լեռնացած կարօտդ առնել»:

Գլուխ Ե.

## ՄԱՌՅ ԻՄ

Շէյխ իրն Սայիտի ապարանքում սուզ էր:

Չորրորդ օրն էր, ինչ Շէյխը իր հոգին աւանդել էր ու հեռացել այս անցաւոր աշխարհից: Որդին, Ահմատ, որը բարձրագոյն կրթութիւն էր ստացել ու փաստաբան դարձել, ըստ Շէյխի թողած կտակի, իրեն պիտի յաջորդէր:

Թաղումից մէկ օր յետոյ Ահմատն սկսեց հօր արխիւն աչքէ անցկացնել: Արկղներից մէկում մի ծրար գտաւ, որի վրայ գրուած էր. — «Ինձ փոխարինող Ահմատ որդուս»:

Ցուզուած եւ անհամբերութեամբ ծրարը բացեց ու կարդաց. — «Որդիս, Ահմատ, երբ այս տողերը կը կարդաս, ես արդէն հրաժեշտ տուած կը լինեմ մարմնաւոր կեանքին: Վստահ եմ, որ դու համոզուած ես, թէ ես քեզանով պարծենալով եմ հեռանում կեանքից, վստահ լինելով, որ դու իմ արժանաւոր փոխանորդը կը դառնաս:

Ներիր ինձ, որ ես մանուկ հասակիցդ զրկեցի քեզ մայրական գուրգուրանքից: Հաւատացիր, ես այդպէս վարուեցի՝ քո ապագան ապահովացնելու, քեզ մեր մեծ Մարգարէի հաւատարիմ հետեւորդը դարձնելու նպատակով: Զէ որ մայրդ քրիստոնեայ է, ես չէի ուզում որ դու, այլ կրօնի ազդեցութիւնը կրէիր: Այժմ համոզուած եմ, որ դու, առանց հաւատքդ խաթարելու, կարող ես քրիստոնեայ մօրդ այցելել եւ անհատոյց մրացած որդիական պարտքդ կատարել:

Վերջին ողջոյնս հաղորդիր իրեն: Նա պատուական կին է եղել ինձ համար:

Ափսոսանքով հրաժեշտ եմ տալիս այս հրաշակերտ աշխարհին:

Քեզ օրհնող հայրդ՝ Շէյխ իրն Սայիտ - 5.7.1947թ.»

Ահմատը հօր նամակը կարդալուց յետոյ, մտախոհ սկսեց միւս թղթերն աչքէ անցկացնել: Մի բաց ծրարում մի լուսանկար գտաւ: Նկարում մի գեղեցկուհի իր ծնկներին ունէր իրեն չափազանց նման մանկիկ: Ահմատը նախ չանդրազարձաւ, բայց երբ նկարը շրջեց, ետեւի կողմում կարդաց: — «Որդիս Ահմատը իր մօր հետ: Ապրիլ, 1921 թ.»: Նա արագութեամբ կրկին դարձրեց լուսանկարը, իր ակնապիշ հայեացքը սեւեռեց իր հարազատ մօր - Վարսենիկի դէմքին: Մէկէն բացուեցին նրա մանկական տարիների մշուշապատ յիշողութեան ծալքերը: Իրեն ուղղուած Վարսենիկի տխուր ու երազուն աչքերում տեսաւ, վերյիշեց ու զգաց իր հանդէպ տածած մայրական գուրգուրանքի հմայքը: Ճի հզօր կարօտի խայթ զգաց իր սրտում ու ինքնաբերաբար, դողացող ձայնով, զարմանալի ճիշդ առողանութեամբ մրմնջաց: — «Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո . . .» եւ այլեւս յուզմունքից չկարողանալով չարունակել, հասունացած եւ զարգացած մարդուն ոչ յատուկ զգայնութեամբ, նրա սիրտը փխրուեց ու նկարը իր շրթունքներին հպելով մրմնջաց: — «Մայր իմ, ների՛ր ինձ»:

\* \* \*

Յաջորդ օր, առտու կանուխ, Ահմատն իր սպիտակ նժոյզը թամբել տուեց, հեծաւ ու դէպի Պաղտատ սլացաւ:

Առաւօտեան ժամը 7-ն էր, երբ նա Մսրլեանների տունը գտաւ եւ սկսեց դուռը ծեծել:

Նոյն վայրկեանին դուռը բացուեց: իր դէմն ելան Յակորն ու Երուանդը, որոնք աշխատելու էին գնում: Երկուսով յանկարձակիի եկած, չէմքում կանգ առին, իրենց ակնապիշ հայեացքը Ահմատի դէմքին սեւեռեցին: Ահմատի շշմեցուցիչ նմանութիւնը իրենց քրոջ հետ պապանծեցրել էր եղբայրներին:

Եղբայրների այս շփոթումը երկար պիտի տեւէր,

եթէ Ահմատը չմօտենար, նրանց իր գիրկն առնելով յուզմունքով չմրմնջար. —

— Օ՛, սիրելի քեռիներս, ինձ մայրիկիս քով առաջնորդեցէք, ոչինչ, այսօր ուշ գնացէք գործի, այսօր մեր ուրախութեան օրն է . . .

Երկու եղբայրներ շփոթումից սթափուեցին, Ահմատին մէջտեղ առած ներս մտան:

Վարսենիկը ճաշարահում, իր եղբայրներին մատուցած նախաճաշի պնակները ձեռքում բռնած ուղում էր լուսցարանին մօտենալ: Երբ եղբայրներն ու Ահմատը ներս մտան, նա կարկամած իր որդուն նայեց, ձեռքում բռնած պնակները վար ընկան, եւ իսկոյն իր բազուկները տարածած դէպի Ահմատը վագեց, նրան իր գիրկն առնելով գոչեց.

— Ա՞խ, որդիս, գիտէի, համոզուած էի, որ պիտի գայիր, իմ անդին պալիկս . . .

Ահմատ ծունկի գալով, մօր փէշերին փաթաթուեց եւ յուզուած ձայնով մրմնջաց.

— Ների՛ր ինձ, մա՛յր իմ, ների՛ր: Ես երէկ երեկոյեան միայն մոռացութեան մշուշից ազատուեցի, եռեսունամեայ տանջող երազից սթափուեցի: Ահա, այսօր եկել եմ քո ներողամտութիւնն ու օրհնութիւնը խնդրելու: Սրանից յետոյ ես պիտի գուրգուրամ վրադ այնպէս, ինչպէս դու էիր գուրգուրում վրաս մանկութեանս օրերին, Հարազատ, անուշիկ մայր իմ: Այսօրւանից սկսեալ, երբ ես ձեզ մօտ եմ՝ ես ձերն եմ, ձեր հարազատը. ինչ անունով ուզում էք, կարող էք ինձ կանչել, բայց, աղաչում եմ, թանկագին մայր իմ, ազնիւ քեռիներս, մտէք դրութեանս մէջ, ես չեմ կարող երախտամոռ լինել հօրս հանդէպ. ձեր շրջապատից դուրս՝ ես Շէյխ իրն Սայիտի որդին՝ Ահմատն եմ:

# ՅԱՓԵՏԱԿՈՒԱԾ ՀՈԳԻՆԵՐ

Վկացութիւն Երկրորդ

Գլուխ Ա.

## ԿԱՐԵՎԵՐ ՌԶ ՌՔ-ը

Հայկական Մեծ Եղեռնի օրերին, Տրապիզոն նահանգի հայ բնակչութիւնը դատապարտուեց այն հայարնակ նահանգների հայութեան ճակատագրին, որոնք գլխովին ոչնչացման էին ենթարկուել:

1915 թուի Ապրիլին, նահանգի ժէօն թրքական կառավարութիւնը, թուրք եւ քիւրդ ամբոխների օգնութեամբ, սկսել էր նահանգի բոլոր քաղաքներից ու գիւղերից տեղահանել հայութեան: Աքսորի պատրուակի տակ քչում, հեռացնում էին բնակավայրերից, օտար պետութիւնների ներկայացուցիչների աշքերից հեռու՝ հեռաւոր ձորերում ու կիրճերում սրախողխող անում:

Ապրիլի վերջերին էր, Տրապիզոն քաղաքի ու մերձակայ վայրերի հայ ընտանիքներից խլել էին 7-12 տարեկան հայ պատանիներին, դէպի ծովեղերքն էին քչել, ծովեղերքին կից խարխուլ ամբարներում փակել, որպէսզի մութն ընկնելուն պէս, բոլորին նաւեր լեցնէին, ծովափից հեռացնէին ու ծովը թափէին:

Տրապիզոն քաղաքի հայկական տներն արդէն կողոպտուել էին, դատարկուել: Խուժանն սկսել էր այդ տների դռներն ու պատուհանների փեղկերը հանել ու տանել:

Տրապիզոն քաղաքից 25 քիլոմետր հեռաւորութեան վրայ գտնուող Մաչկա գիւղի բնակիչ՝ թրքացած քիւրտ

Ապդըլը, գիշերով վեր կացաւ, իր երկականի եղան սայլը լծեց ու դէպի Տրապիզոն շտապեց՝ թալանին մասնակցելու:

Ցաջորդ օր կէսօրին Ապդըլը քաղաք հասաւ եւ շտապեց գեռ չկործանուած հայկական տներից, իր կաւաշէն տնակի համար, անվնաս մնացած ապակեպատ պատուհանների փեղկերը հանել ու իր սայլի վրայ բառնալ:

Նա լսել էր, որ ծովափին կից ամբարներում հարիւրաւոր հայ աղջիկներ ու տղաներ են փակուած: Որոշեց ծովափ իջնել, ամբարներից մի գեղեցիկ կավուրի աղջիկ ջոկել՝ իր 16-ամեայ լամուկ ֆնտոյին համար:

Սայլը դէպի ծովափ քշեց ու բարակներից մէկի առջեւ կանգ առեց:

Սայլի վրայից վար իջաւ, մօտեցաւ ամբարի դրան մօտ պահակ կանգնած ոստիկանին, նրա ձեռքում մի հինգ դուրուշնոց դրեց՝ իր նպատակը յայտնելով: Ամբարի դուռը բացուեց եւ Արդըլը ներս մտաւ:

Հարիւրաւոր հայ երեխաներ՝ սարսափահամար, կիսամերկ ու նուաղած, հողէ յատակի վրայ կծկուած ողբում էին ու մղկուում:

Արդըլը վայրագօրէն յարձակուեց աղջիկ երեխաների վրայ, մէկիկ, մէկիկ նրանց ծնօտները կոպութեամբ վեր բարձրացնելով դիտեց, շարքէ շարք անցաւ ու մօտեցաւ ամբարի վերի անկիւնում կծկուածներին:

Նկատեց՝ ընդհուպ կողք-կողքի, պատին կոթնած, երկու շիկահեր երեխաների: Մօտեցաւ, կոացաւ ու տեսաւ, որ մէկը աղջիկ էր, որի ծնօտից բռնելով դէմքը դէպի իրեն դարձուց աղջկայ գեղեցկութիւնից զմայլուած մանչուկին էլ նայեց եւ իսկոյն ճանչցաւ սրանց ով լինելը ու վայրագ քրքիջով կանչեց.

— Հէ՛յ, քաթպի լակուտներ, դո՞ւք էլ էք անկնատ ընկել:

Սրանք քոյլը ու եղբայր էին. քոյլը՝ Անուշը 12-ամեայ մի գեղեցկուհի էր, իսկ եղբայրը՝ Հայկը, 10-ամեայ, իր տարիքին անհամապատասխան ամուր

կազմուածքով մի պատանի:

Սրանք Տրապիզոն քաղաքի հայկական դպրոցի թուրքերէն լեզուի ուսուցիչ՝ Վահանի զաւակներն էին:

Վահանը մի ժամանակ աշխատել էր քաղաքային դատարանում, որպէս քարտուղար, որով ճանաչուել էր Քաթոլիկ Վահան անունով:

Վահանին եւ իր կնոջ երկու օր առաջ, հազարաւոր ների հետ քաղաքից դուրս էին քշել ու հեռաւոր ամայի վայրերում կոտորել:

Արդըլի նպատակը հասկանալով, քոյր ու եղբայրը իրարու փարուեցին:

Յափշտակիչը Անուշի թեւերից բռնելով վեր բարձրացրեց ու խստաձայն կանչեց.

— Վեր կաց, կավուրի աղջիկ, քեզ տանելու եմ, որդուս կինը պիտի դառնաս, որով կեանքդ փրկուած կը լինի: Միեւնոյնն է, կավուրներիդ վերջն է եկել. ձեր ծնողների լէշերը անյայտ դաշտերում գայլերն են յօշոտել . . .

Անուշն ու Հայկը այս գոյժը լսելով, սկսեցին աղիողորմ ձայնով լալ ու ողբալ: Անուշն իրեն յատակին նետեց, մազցելով սկսեց հեռանալ Արդըլից:

Արդըլը Անուշի վրայ յարձակուելով, նրա մազերից բռնելով վեր բարձրացրեց ու կանչեց.

— Վեր կաց, յիմար, եթէ հետո չգաս, այս երեկոյեան քեզ էլ միւսների հետ ծովն են նետելու, — եւ ապա Անուշին իր թեւի տակ առնելով ուզեց հեռանալ:

Կակծացող Հայկը անմիջապէս Անուշի փէշերից կախուելով կանչեց.

— Զէ, Անուշ, Աստուած սիրես, Մի՛ գնա, ինձ մենակ մի՛ թողնի . . .

Արդըլը կատաղած, ոտքի ուժեղ հարուածով, Հայկին դէպի ամբարի անկիւնը չպրտեց եւ Անուշին ամուր գրկած ամբարից դուրս եկաւ: Անուշն սկսեց աւելի բարձրաձայն լալ ու կանչել: Յափշտակիչը, ցաւ պատճառող կոպտութեամբ, ձեռքով Անուշի բերանը

*փակելով կանչեց .*

*— Կավուրի լակոտ, եթէ շարունակես լալ, դրան  
կանգնած ոստիկանը քեզ կը սատկեցնի :*

*Երբ նա իր սայլին մօտեցաւ, պահակ ոստիկանը  
նրա ետեւից կանչեց .*

*— Բարի վայելում, Կօջա :*

*Աբգըլը Անուշին իր թալանած պատուհանի  
փեղկերի միջեւ տեղաւորեց, մի մեծ դատարկ պարկով  
ծածկեց, ու սայլը դարձնելով տուն վերադարձաւ :*

Գլուխ Բ.

## ՄԻԱՅՆ ՄԷԿԸ ԱԶԱՏՈՒԵՑ

Արդէն մթնում էր:

Սկսեցին անաղմուկ ծովափին մօտենալ վեց նաւեր՝  
առանց առագաստների:

Թիավարներն իսկոյն ցամաք իջան, նաւերը պա-  
րաններով ծովափին ամրացուած ցիցերին կապեցին,  
երկայն ու լայն կամրջակ-աստիճանները նաւերի  
եզերքներին միացրին:

Այդ միջոցին ամրարների դռները բացուեցին,  
ոստիկանները, ամրոխի օգնութեամբ, ամրարների  
դռներից ներս խուժեցին, խարազանների ու ձեռնա-  
փայտերի շառաչիւնի տակ՝ հարիւրաւոր հիւծուած,  
կիսամերկ ու սրտաճմլիկ աղաղակներ արձակող  
երեխաններին դէպի նաւեր քշեցին:

Նաւերին միացուած կամրջակ-աստիճանների վրայ  
հերթով կանգնած դահիճները, դէպի իրենց քշուող  
անմեղներին, ոտներից ու վզներից բռնելով, իրարու-  
էին տալիս եւ անգթօրէն, կամրջակից դէպի նաւի  
յատակը շպրտում:

Երեխանների բարձրացրած վայնասունը դղրդաց-  
նում էր ամրող ծովեզերքը: Մովեզերքից բաւական  
հեռու գտնուող յունական թաղի յոյն բնակիչները,  
որոնք դեռ չէին արժանացել հայերի ճակատագրին,  
ամուր փակել էին իրենց տների դռներն ու  
պատուհանները, որպէսզի չլսէին հայ երեխանների  
բարձրացրած սրտաճմլիկ աղաղակները: Նաւերն արդէն  
լիցուել էին անմեղ նահատակուողներով:

Թիավարներն սկսեցին նաւերն հեռացնել  
ծովեզերքից:

Քիչ յետոյ լսուեցին՝ բռնութեամբ ծով նետուող  
երեխանների վերջին աղիողորմ ճիշերը:

Մի քանի երեխաներ, որոնք լողալ գիտէին, սկսեցին լողալով նաւերին մօտենալ՝ ազատուելու յոյսով, բայց, արիւնով արբած դահիճները թիերով ջախջախում էին մօտեցողների գանգերը եւ արիւնաներկ ալիքները կրկին հեռացնում էին նրանց անշնչացած դիակները ու խորասուզում:

Նաւերից մէկի եզերքին կծկուած Հայկը, տեսնելով իր բախտակիցների վախճանը, չուզեց դահիճների ձեռքով ծովը նետուել, արագութեամբ իր տեղից վեր կացաւ ու ծովը նետուեց:

Հայկը դեռ հինգ տարեկան հասակում սկսել էր լողալ. վերջին տարիներին այնքան էր յառաջդիմել, որ կարող էր չունչը երկար պահելով, խորասուզուած՝ հեռուներ, հեռուներ լողալ:

Այժմ էլ՝ իսկոյն խորասուզուեց եւ սկսեց արագութեամբ հեռանալ նաւերից:

Չնայած երկօրեայ անօթութեան եւ հիւծուածութեան, նա խորասուզուած լողաց ու հեռացաւ այնքան ժամանակ, մինչեւ որ նոր չնչառութեան կարիք զգաց. զգուշութեամբ դէպի ծովի մակերեսը բարձրացաւ, իր չուրջը նայեց, ոչ մի չարժում. նա ծովեզերեայ կառափնատնից բաւականին հեռացել էր, նկատուելու վախ չունէր: Այնուամենայնիւ, ապահովութեան համար, կրկին խորասուզուեց ու լողաց միշտ դէպի արեւելք: Երբ համոզուեց որ իրեն այլեւս վտանգ չի սպառնում, սկսեց ծովափին մօտենալ, եւ ապա ծովի մակերեսին բարձրացաւ, թարմ օդ ներշնչեց, զգուշութեամբ ափին մօտեցաւ, զուրս եկաւ ու խճաքարերի վրայ երկարուեց՝ իր չնչառութիւնը կանոնաւորելու: Քիչ հանգստանալուց յետոյ, սկսեց անդրագառնալ իր փրկութեան ծրագրին: Դեռ նաւի վրայ եղած միջոցին, դահիճների խօսակցութիւնից իմացել էր, որ Ռուսական բանակը հայ կամաւորական գնդերի հետ միասին առաջ են շարժում ու գտնում են Տրապիզոնից 40 քմ. հեռաւորութեան վրայ, — «Ուրի՞մն, միշտ դէպի արեւելքը . . . դէպի արեւելք պէտք է շարժուեմ . . .

» — մտմտաց նա: Դեռ նաւի վրայ այդ յոյսն էր նրան՝ կամքի ուժ ու դիմացկունութիւն ներշնչել:

Հայկն սթափուեց իր տարուածութիւնից, երբ զգաց, որ դոզում է:

Մովից փչող գիշերային պաղ քամին նրա միակ երկար թաց շապիկը սառցրել ու իր մարմնին էր փակցրել: Նա վեր կացաւ, սկսեց իր բազուկների արագ շարժումներով իր իրանի կողերին զարնել՝ արեան շնջառութիւնը կանոնաւորելու ու դոզը դադարեցնելու նպատակով եւ սկսեց իր առջեւն ընկած ժայռապատ կածանով առաջ շարժուել՝ միշտ դէպի արեւելք: Աստղերը եւ երկնակամարնի վեր նոր բարձրացող լուսինը լուսաւորում էին նրա բռնած ուղղութիւնը, որն առաջնորդում էր նրան դէպի լեռն ի վեր:

Ժամեր շարունակ քայլելով, նա հասաւ բարձունքի գագաթին եւ սկսեց լեռն ի վար իջնել: Քիչ յետոյ նա իջաւ ու քայլում էր մի երկարածիգ ձորի երկայնքով: Այդ միջոցին ամպերը մեծ ճեղքուածքով իրարմից բաժանուեցին եւ լուսինը յստակօրէն լուսաւորեց նրա բռնած ճամբան:

Նա նկատեց որ իր աջ կողմում, ժայռերի արանքում տրորուած խոտերի հետքը շարունակւում էր դէպի ցած, դէպի մի լայնատարած խորութիւն: Նա դիմեց դէպի այդ վայրը: Երբ հասաւ խորութեան եղերքին, զարհուրանքով կանգ առեց ու սարսուռով դիտեց իր աչքերի առջեւ բացուած սպանդանոցային պատկերը՝ դիակնե՞ր, դիակնե՞ր, դիակնե՞ր . . . մորթուած, յօշոտուած, դիստուած կանանց, երեխաների ու ծերերի արիւնալուայ դիակներ. ոմանք բոլորովին մերկ: Սրտադող, մէկիկ, մէկիկ դիտեց, զննեց նահատակների դէմքերը. յիշելով ամբարում լսած Արդրլի գոյժը, նա փնտուում էր իր ծնողներին . . . , բայց ոչ, բոլորն էլ անծանօթներ էին: Ահա մի երիտասարդ կին, բոլորովին մերկ, ստինքները կտրուած . . . նրա կողքին մի ծեր կին՝ թոնիրի շիշը կրծքում ցցուած, քիչ հեռու, մի ժայռի վրայ նետուած

գանկափշուր մի ծծկեր մանկիկ, արեան լճակներում փռուած ծերունիների դիակներ . . .

Հայկի դողը կրկնապատկուց, ատամները անզըս-պելիօրէն իրար զարնւում, եւ կանգնած տեղում ցնցւում էր. իրեն թւում էր, թէ իր մարմնի անդամ-ները ճգմւում էին, ջախչախուում, իրարմից բաժան-ւում . . . Վերջապէս սթափուց, ուզքի եկաւ, մի անդամ եւս իր շուրջը նայեց, ուզեց փախչել, հեռանալ, բայց երկու քայլ չառած՝ կանգ առեց. Սարսուռով նայեց արիւնով ծծուած մի ջուլի վրայ ընկած անզըսուի մի դիակի, բոլորովին սեւ հագնուած: Քիչ հեռու, մի ցցի վրայ տնկուած, ալեզարդ մօրուքով մի գլուխ էր տատանւում, մօտեցաւ եւ մէկէն, աւելի այլայլուած, իր գլուխը երկու ձեռներով բռնած գոչեց.

— Աստուած իմ, սա մեր Տէր Հայրն է . . .

Նա ճանաչեց իր դպրոցի կրօնի դասատու Տէր Աւետիքին ու լալազին ձայնով կանչեց,-

— Այո, Տէր Հայր, դու ես . . . Մենք հաւատում էինք քո խօսքերին . . . ներիր, Տէր Հայր, դու քո ամբողջ կեանքում ե՛ւ խարում էիր քեզ, ե՛ւ խարում էիր մեզ . . . Ռուր է . . . ռուր է էն Ամենակարողը . . . էն արդարագատը . . . ինչո՞ւ թոյլ տուեց այս բոլորը . . . Օ՛չ, Արարիչ, ներիր, ներիր . . . անաստուած էլ դարձայ . . .

Նա պատկառանքով մօտեցաւ, վերցրեց քահանայի գլուխը, բերեց դրեց քահանայի վզի մօտ, չոքեց գետնին, ջուլով ծածկեց դիակը:

Երբ ուզեց ոտքի կանգնել, նկատեց որ չոքել է մի վերմակի ճոթի վրայ, որի անկիւնը մի քիչ ներծծուած էր քահանայի վզից հոսած արիւնով: Այդ բոպէին Հայկ իր գլխում միտք յդացաւ՝ — հանել իր թաց շապիկը, փաթաթուել այդ չոր վերմակում, տաքցնել իր սառած մարմինը ու պաշտպանուել գիշերային պաղու-թիւնից:

Երբ վերմակն իր վրայ առաւ՝ իր աջ ափում դգաց,

Առանց զգուանք զգալու, այդ արիւնաթաթախ ճոթը փաթաթեց միւս չոր ճոթի մէջ, ամուր բռնելով մտմտաց, — «Պիտի մասունքի նման պահեմ այս, որպէս յիշատակ ու որպէս վրէժինդրութեան ու փոխ-հատուցման նշանաբան. Ո՛վ մոռանայ բուրքի այս արարքը, բող անիծեա'լ լինի յաւիտեանս յաւիտենից . .

Վերմակն աւելի ամուր սեղմելով իր դողացող մարմնին, Հայկն սկսեց հեռանալ այդ կառափնարանից: Իր առջեւ յայտնուած մի փոքրիկ ժայռի վրայ տեսաւ կովկասեան ձեւի մի հին գլխարկ. առանց երկար մտածելու, վերցրեց ու ծածկեց իր զեռ թաց մազերով սառած գլուխը:

Ամբողջ գիշեր, առանց կանգ առնելու նա քայլեց միշտ դէպի արեւելք: Ահարեկումն ու սարսափը, եւ ազատուելու հզօր կամքը մոռացութեան էին տուել նրան՝ իր երեքօրեայ անօթութիւնը: Այժմ իր դատարկ ստամոքսը զգացնել էր տալիս այդ պահանջը:

Հանդիպակաց բլուրն ի վեր բարձրանալիս, լուսնի շողերի տակ, ջանաց սննդատու բոյսեր գտնել: Եւ իսկապէս բաւականին չափով սինծի ու ճնճղուկի գաթայի փունջեր գտաւ եւ իր դատարկ ստամոքսի պահանջը մի քիչ մեղմացրեց: Երբ յաջորդ բլուրի գագաթին հասաւ, աջ կողմում, վարը, ձորի մէջ, դաշտի հեռաւոր ծայրում, կայծկլտացող լոյսերի շողեր նկատեց. — «Անշուշտ, դաշիճների մի գիւղ կարող է լինել . . .» — մտմտաց նա եւ զգուշութեան համար իր ուղղութիւնը մի քիչ փոխեց, սկսեց շարժուել դէպի հիւսիս-արեւելք: Մի նոր եւ աւելի բարձր լեռ պիտի բարձրանար ու իջնէր:

Լոյսն արդէն բացւում էր, երբ նա այդ լեռն անցնելով իջնում էր մի լայնատարած հովիտ: Նա որոշեց այդ լեռան ժայռապատ ստորոտում մի յարմար տեղ գտնել, թագնուել, հանգստանալ եւ մութն ընկնելուն պէս շարունակել իր ճամբան - միշտ դէպի արեւելք, դէպի ազատարարներ:

Երեք օր եւս պէտք եղաւ Հայկին իր փախուստը այդ

**ՃԵԼՈՎ ՀԱՐՊՈՆԱԿԵԼՈՎ:**

Չորրորդ օրուան արշալոյսին, մի հովիտի կենդրում ցցուած ժայռերի արանքում մի փոքրիկ քարայր գտաւ ու որոշեց՝ այդ օրուան ցերեկն էլ այդ տեղ անցկացնել։ Շատ էր յոզնել, ուժասպառ էր եղել. ոտքերի մատները սուր քարերից ու փշերից ստացած վէրքերով պատուած էին, այլեւս դժուարանում էր քայլել, յուսահատութիւնը պատել էր նրան։

Արեւելքը շառագունուել էր արդէն, արեւը շուտով ծագելու էր։ Հայկը կիսանուաղ վիճակում, նստած իր գտած ժայռի խոռոչում, երազում էր խաղաղ օրերի իրենց հայրենի տունը, առատ սեղանը . . . մօր եփած համադամ կերակուրները, տան թիսած համեղ հացը . . . «Ախ, մի կտոր հաց . . .» մտմտաց նա. այդ րոպէին նրա դատարկ ստամոքսը սկսեց պրկուել եւ երազած հացից մի կտոր իր բերանում երեւակայելով, սկսեց բերանը շարժել, ծամել աներեւոյթ հացը . . . բայց հացի փոխարէն բերանում հաւաքուած լորձունքը միայն կուլ տուեց . . .

Այս ունայն երազանքի միջոցին, յանկարծ, դիմացի մեծ բարձունքի ետեւից մի ահուելի որոտ լուեց, որն արձագանգեց հովիտում։

Հայկը շուգեց հաւատալ իր ականջներին. մի քանի վայրկեան յետոյ որոտը կրկնուեց, եւ ապա դիմացի բարձունքի ամրողջ երկարութեամբ հրացանային զարկերին միացաւ հազարաւոր բերաններից աղաղակւող ՈՒԽԾԱԿ'ԱՌ'ԱՆ։

Այս անգամ Հայկը, իր վերջին ուժերը հաւաքելով, իր թագստոցից դուրս եկաւ ու ժայռերի արանքում կանգնած սկսեց լսել իր փրկութիւնը հաղորդող որոտների «Համերգը»։

Երկու ժամից աւելի տեւեց ոմբակոծումն ու երկկողմանի հրացանային համազարկը։

Արեւն արդէն սկսել էր երկնակամարն ի վեր բարձրանալ, երբ դիմացի մեծ բարձունքի ամրողջ

երկարութեամբ հազարաւոր զինուորներ սկսեցին վագել, վար իջնել ու անհետանալ հովիտից սկսուող տարբեր ձորերում:

Թրքական բանակն էր նահանջում, փախուստ տալիս:

Բարձունքի ետեւից, թնթանօթները շարունակում էին որոտալ ոռումքերը գալիս ընկնում ու պայթում էին փախչող խուռներամ թուրք զինուորների մէջ՝ բգկատուած մարդկային մարմնի կտորները դէս ու դէն ցրուելով։ Ողջ մնացողները՝ իրենց շալակած տոպրակներն ու անգամ հրացանները նետում ու փախչում էին։

Թնդանօթները մէկէն լոեցին եւ արեւելեան բարձունքի ետեւից, խրոխտ ձայնով ՌԻՌԱ՛Ա՛Ա՛ կանչելով երկու հեծեալ զօրամասեր հովիտն իջան, մերկացրած սուրերը շարժելով սկսեցին փախչող թշնամու յետ մնացողներին սրահարել։

Բլուրի վրայից մէկ փող հնչեց. հովիտն իջած երկու հեծեալ զօրամասերը կանգ առին, այլեւս թշնամուն չհետապնդեցին։

Սրանք կողակներ էին եւ հայ կամաւորներ։ Հայ կամաւորական գունդը շարժւում էր բարձունքի հարաւային կողմից, իսկ կողակների առաջաւոր խումբը՝ մօտեցել, կանգ էր առել Հայկի ժայռապատ թագստոցի առջեւ։

Հայկը, իր փրկութեան րոպէն հասած համարելով, ժայռի ետեւից դուրս եկաւ, դժուարութեամբ քայլելով եւ իր զլիարկը օգում շարժելով, իր հօրմից սովորած ռուսերէն երկու բառերով, լալագին դողացող ձայնով կանչեց.

— Եա արմեանին . . . , եա արմեանին . . . (ես հայ եմ . . . ես հայ եմ . . . )

Երջանկութեան զգացմունքը կլանել էր նրա վերջին ուժը. նրա թուլացած ծնկները ծալուեցին, նախ ծունկի եկաւ եւ ապա ամբողջ մարմնով փռուեց գետնին։ Պառկած վիճակում, իր նուազած ձայնով, նա կրկնում

էր նոյն երկու ռուսերէն բառերը,-

— Եա արմեանին . . . , եա արմեանին . . .

Քիչ առաջուան արիւն թափողները, տեսնելով Հայկին այդ վիճակում, խղճահարուած շրջապատել էին նրան: Կողակներից մէկը, որի ուսերին փայլում էին սպայական ուսադիրներ, Հայկին մօտեցաւ, կուացաւ, իր երկու մատներով շրջեց նրա ծնօտը, ստուգելու համար, թէ պատանին միայն ուժասպա՞ո էր եղել, թէ՞ արդէն կնքել էր իր մահկանացուն:

Հայկը իր գողացող ձեռքերով սպայի ձեռքը բռնեց եւ իր ներս ընկած այտերին հպելով կրկին մրմնջաց,-

— Եա արմեանին . . . եա արմեանին . . .

Իր արցունքով թրջած սպայի ձեռքը թողնելով, Հայկը փորձեց բացուած վերմակով իր մերկութիւնը ծածկել, բայց չկարողացաւ: Խղճահարուած սպան իր գլուխը ետ դարձնելով կողակներից մէկին հրամայեց.

— Վասիլի, այս պատանուն անմիջապէս տար մեր սանիտարական բաժին, թող հոգան, հագցնեն, կերակրեն, իսկ յետոյ կը տանես կը յանձնես հայ կամաւորներին, նրանք այսպիսիներին հաւաքում յանձնում են իրենց խնամակալ մարմիններին:

Վասիլին իսկոյն մօտեցաւ, Հայկին իր ձեռքերի վրայ վերցրեց եւ շտապեց դէպի իրենց սանիտարական կառքերը, որոնք բարձունքից վար էին իջել, կանգ էին առել ստորոտում ու պատրաստում էին նախաճաշ բաժանել իրենց գնդի հեծեալներին:

Սանիտարական բաժնի սպասարկողները մեծ հոգատարութեամբ սկսեցին խնամել Հայկին: Նախ տաք ջուրի մէջ թրջած լաթով կատարելապէս լուացին ու մաքրեցին Հայկի մարմինը, առանձին բծախնդրութեամբ սպիրեցին ու լուացին նրա գլուխը, եւ ապա նրա մարմնին ու հասակին անհամապատասխան մեծ ու լայն հագուստներ հագցրին: Երբ սանիտարներն ուզեցին նրա վերմակը դէն նետել՝ Հայկը խնդրանքով մի կերպ հասկացրեց նրանց, որ վերմակի արիւնուտ ճոթից մի փոքրիկ կտոր կտրեն եւ իրեն տան:

Սանիտարները մօտաւորապէս հասկացան այդ տարօրինակ «յուշանուէր»ի նշանակութիւնը Հայկի համար, մի փոքրիկ կտոր վերմակի արիւնու ճոթից կարեցին, հականեխիչ փոշի ցանեցին վրան, մի վիրակապի կտորի մէջ փաթաթեցին եւ Հայկի հագած լայն վերնաշապիկի մեծ դրապանում տեղաւորեցին: Հայկին կերակրելուց յետոյ, երբ տեսան որ նա գժուարանում է երկար նստած մնալ, մի պատգարակի վրայ պառկեցրին:

Քիչ յետոյ Վասիլին հրամայեց երկու սանիտարների, որ Հայկին պատգարակով վերցնեն ու իրեն հետեւեն:

Երբ Վասիլին, պատգարակ կրողների հետ, հայ կամաւորների սանիտարական կառքերին մօտեցան, հայ սանիտարներից մէկը իր քթի տակ մըրմնջաց. —

Կրկին մեր բժշկին զիսացաւանք պատճառող ձանր վիրաւոր են բերել:

Վասիլին տեսնելով հայ սանիտարի շարժուող շրթունքները, հասկացաւ որ նա տրտնջում է, նրան հանգստացնելու համար՝ ժպտալով ու սրտբացութեամբ դիմեց նրան.

— Պրատօկ (եղբայրիկ), մէկ ժամ առաջ, երբ այս հովիտը մտանք, այս հայ պատանին, բոլորովին մերկ մի վերմակի մէջ փաթաթուած, մորմօքալով, դիմացի ժայռերի միջից դժուարութեամբ վար իջաւ՝ «Ես արմեանին, ես արմեանին» ասելով ուշագնաց գետնին փոռուց: Մեր հրամանատարի կարգադրութեամբ՝ լուացինք, հազցրինք, կերակրեցինք, եւ ահա բերել ենք ձեզ յանձնելու: Մեր հրամանատարն ասեց, որ դուք այսպիսի դժբախտներին հաւաքում ու թիկունքն էք ուղարկում:

Վասիլու այս խօսակցութիւնը լսելով, սանիտարական կառքերից ոչ հեռու գտնուող կամաւորները շրջապատեցին Հայկի պատգարակը, մեծ յուզմունքով ու խղճահրութեամբ մօտեցան, գուրգուրանքով միսիթարեցին դեռ ուրախութեան արցունքներ թափող Հայկին:

Յաջորդ օր Հայկին, վիրաւոր զինուորների կարաւանի հետ, թիկունք ուղարկեցին - դէպի Երեւան, դէպի Գումայրի (Գիւմրի-Ալեքսանդրոպոլ), ուր բարեգործական, ամերիկեան եւ այլ որբախնամ ընկերութիւնները մեծ հոգատարութեամբ ապաստան էին տալիս Հայկի նման տասնեակ հազարաւոր ծնողազուրկ երեխաներին:

Գլուխ գ.

## ԵՐԿՈՒ ԲԱԽՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

1918 թուի Մարտ ամիսն էր:

Ես, Երեւանի ամերիկեան առաջին որբանոցի սահմանից մէկը լինելու բախտն էի ունեցել:

Քաղաքի որբանոցներում կազմակերպուած սքառվական խմբերի ընդհանուր ղեկավար-սքառվակետը պարոն Եզնիկ Քաջունին էր, կարծեմ Մարաշի. միշտ գուրգուրացող ժպիտն երեսին, չարժուն, բայց զինուորականի կեցուածքով, 30-ի մօտ մի համակրելի երիտասարդ:

Առաջին իսկ օրերին, նա մէջս լաւ մարզիկի որոշ տուեալներ նկատելով, խմբավարների դասընթացքներում ինձ մարզելուց յետոյ, ղեկավարութեանս յանձնեց աղջիկ (Կրլ) սքառվթների մի մեծ խումբ: Երբեմն, պարոն Եզնիկը, ինձ տարբեր որբանոցներ էր ուղարկում՝ նոր արձանագրուած պատանիներից սքառվական խմբեր կազմելու եւ ընդունակներից՝ նոր խմբավարների թեկնածուներ ընտրելու:

Մի օր պարոն Եզնիկն ինձ յայտնեց, որ 5-րդ որբանոցում 30 պատանիներ ցանկութիւն են յայտնել Սքառվթներ դառնալ. եւ ինձ հրահանգեց՝ անմիջապէս գնալ, տեղում կատարել բոլոր անհրաժեշտ արարողութիւնները:

Ցաջորդ օր, հետո վերցրի խմբավարների դասընթացքները նոր աւարտած պատանի Հրանդին եւ 5-րդ որբանոցը գնացինք:

Երեխանները, կէսօրուան ճաշից յետոյ, բակում խաղում էին:

Մեզ տեսնելուն պէս՝ արձանագրուած 30 պատանի-

ները մեր շուրջն հաւաքուեցին: Հրանդն անմիջապէս սկսեց անուններն արձանագրել: Քիչ յետոյ արձանագրուածները շարքի կանգնեցին եւ սպասում էին արարողութեան:

Մի քանի խօսքով բոլորին դիմելուց յետոյ անցայ երգման արարողութեան: Եւ ապա առանձին, առանձին իւրաքանչիւրին մօտեցայ, անունները հարցրի, հետներս բերած վզկապները վզներին կապեցի, իւրաքանչիւրի ձեռքը թօթուեցի, եւ այդպէս շարքէ-շարք անցայ: Երբ երրորդ շարքի աջ եզրին կանգնած պատանուն մօտեցայ եւ իր անունն հարցրի՝ նա մարգուած զինուորի նման, զուսպ եւ հաստատուն ձայնով պատասխանեց.

— Հայկ Ֆընտըքեան, Տրապիզոնցի, ծնուած 1905 թուի Մայիս 3-ին:

Հայկի կողքին կանգնած պատանին մէկէն նրան դիմեց եւ անհամարձակ կեցուածքով խօսեց.

— Հայկ, դու այնքան նման ես պարոն սքառութապետին, որ կարելի է կարծել, թէ դուք հարազատ եղայրներ էք . . .

Հայկը ընդհատելով պատանուն, իր հայեացքը գետնի մի կէտին սեւեռելով տիւրութեամբ պատասխանեց.

— Ես եղրայր չեմ ունեցել, Գրիգոր, միայն մէկ քոյր . . . մէկ յափշտակուած քոյր . . .

Այս ասելով, Հայկն իր հայեացքը դէմքիս ուղղեց, մէլամաղձոտ ժպտաց, աչքերը արցունքով լեցուեցին ուղղութ խոնարհուած արձանացաւ իր տեղում:

Ես ուզում էի հարցնել Գրիգորին, թէ ինչի՞ց ենթագրելով նա կարծեց, որ մենք եղրայրներ կարող էինք լինել. Բայց երբ ուշադրութեամբ դիտեցի Հայկի դէմքը՝ ես էլ համոզուեցի, որ մենք, անտարակոյս, մեծ նմանութիւն ունէինք, մանաւանդ մեր աչքերի միեւնոյն դրուածքն ու գոյնը: Եւ այդ վայրկեանին ես զգացի որ մեր հոգիները իրարու հաղորդակից էին դարձել, ինքնարերաբար՝ մէջս մեծ համակրանք էր

ծագել նրա հանդէպ:

Գուրգուրանքով ձեռքս նրա ուսին դնելով ասացի:

— Քաջ կաց, Սքառոթ, տեսնո՞ւմ ես, մենք բոլորս էլ նոյն ճակատագիրն ունենք:

Շարունակեցի վերջին պատանիներին մօտենալ, նոյն արարողութիւնը կատարելով: Մտքումս որոշեցի Հայկին էլ խմբավարների դասընթացքներին մասնակից դարձնել:

Երդումի արարողութիւնից յետոյ, Հրանդին հրահանգեցի առաջին պարապմունքներն սկսել: Եւ ապա Հայկին մօտեցայ ու մտերմօրէն ասեցի:

— Հայկ, պարապմունքներից յետոյ, անմիջապէս անցիր ձեր կառավարիչի գրասենեակը, ես այստեղ քեզ եմ սպասելու, խօսելիքներ ունեմ հետդ:

— Այո՛, պարոն սքառոթապետ, օհ, ներողութիւն, Մեծ եղբայր, — մտերմիկ ուրախութեամբ պատասխանեց նա եւ իսկոյն շարքի կանգնեց:

Կառավարիչի գրասենեակում ես յայտնեցի նրան նպատակս եւ նա առաջարկս ուրախութեամբ ընդունեց:

Մեր փոխադարձ սրտագին մտերմութիւնը արդէն հաստատուած էր: Այդ օրուանից մեր հանդիպումներն յաճախակի դարձան:

Ես չէի սխալուել, հետագայում Հայկը լաւագոյն խմբավարներից մէկը դարձաւ:

Մեր մտերմութիւնը հետզհետէ էլ աւելի խորացաւ: Հայկը սիրում էր շատ կարդալ: Հայ գրողների ստեղծագործութիւնները նրա ծարաւի յագեցման աղրիւրներն էին: Բաֆֆին՝ նրա ամենապաշտելին էր:

Երբ երկուսովս մենակ էինք լինում՝ նա ինձ եղբայր Յարութիւն էր անուանում, իսկ ես նրան՝ Եղբայրիկս կամ Հայկ ջան էի կանչում: Մեր ապատժամերին յաճախ միասին պտոյտի էինք դուրս գալիս: Անսեղեակները մեզ եղբայրներ էին կարծում:

Մի օր էլ, երկուսովս, Անգլիական այգիում (Ներկայումս Կոմունարների այգի) պտղառում էինք: Մեր դիմաց ելաւ մի տարեց կին, երկու փոքրիկների ձեռնե-

րից բռնած, եւ մեր առջեւը կանգ առեց, զննեց ինձ եւ իր երկու ձեռներն իրար զարնելով, տիսուր ու վշտալի ձայնով գոչեց.

— Խա՛, խա՛, քե ճանչցայ, տիւ Յարութին ես, Աղենց, Կարասաֆարենց Յարութին ես . . . Վա՛յ, աչքս քունայ, պալա ջան, տիւ էլ անպախտ էլար . . . կիտեմ, կիտեմ, որ ծերոնք էլ իրանց Պանտի Մախու գետն են թալե . . . խազար . . . խազար ափսոս քո էն Խաթունների խաթուն, տիւնեայ կիւզալ խսկուխի մէրը, քո էն խրեշտականման վեց ազիզ քուրերը . . . Վա՛յ, թող անիծուեն էտա անխոկի, անաստուած տաճիկ շները . . .

Ես Խաթունարիս կիւդ կ'ապրեմ, պալա ջան. էսօր իկիր եմ աղջկանս, թոռներիս տիսնալու . . . էսա ի մեր պախտ, պալա ջան, թող Աստուծ քե մխիթարի . . .

Ես Համբերութեամբ լսեցի այդ բարի մամիկի անկեղծ ու սրտագին ցաւակցութիւնը, բայց իրեն չճանաչեցի: Երեւի մեր հեռաւոր դրացիներից մէկն էր եղել: Ես էլ զգացուածօրէն չնորհակալութիւն յայտնեցի իր ցաւակցութեան համար, ու բաժանուեցինք:

Անցեալի վէրքերը կրկին տնքում էին սրտում. էութեամբ « էն անցեալի արիւնոտ օրերն էի տեղափոխւել. լուսութեամբ քայլում էի Հայկի հետ, առանց նրա ներկայութիւնը գգալու:

Ըստ երեւոյթին, Հայկը մտել էր դրութեանս մէջ եւ չէր ուզեցել իսկոյն ինձ իմ անցեալի դառն յուշերի աշխարհից վերագարձնել: Կարճ լուսութիւնից յետոյ, նա այլեւս չկարողանալով համբերել, թեւս ամուր սեղմելով խօսեց.

— Եղբայր Յարութիւն, ես տեսնում եմ, որ մենք ոչ միայն մեր արտաքիններով ենք իրարու նման, այլ նաեւ մեր կրած տառապանքներով, մեր անցեալով: Այսօր ազատ ենք, ժամանակ ունենք, պատմեցէք ինդրեմ ձեր անցեալից, ձեր ընտանիքի նահատակման մասին: Ես էլ իմ, մերոնց կրած տառապանքների ու նահատակման մասին կը պատմեմ:

Չմերժեցի նրա խնդրանքը, ընդհակառակն, մինչ այդ ցաւս ներսումս պահած, որեւէ մէկին չէի պատմել մեր ընտանիքի եղերական վախճանի մասին. մի սրտակցի, մի հարազատի պատմելու անհրաժեշտութիւնն էի զգում, հոգումս դիզացած բողոքը, անզօր արդարութեան դէմ ընդվզելու պոռթկումս արտաքերելու կարիքն էի զգում, հարազատի մը միմիթարանքն ու ցաւակցութիւնը լսելու, կրած տառապանքների կուտակուած ծանրութիւնը թեթեւացնելու յոյսով։

Եւ ահա, նախ կարձ պատմեցի մեր խուճապային գաղթը Վանից եւ ապա անցայ Պէնտի Մահու կիրճում տեղի ունեցած ճապաղիքին։

«Կիրճում, Պէնտի Մահու գետի ափին, ուզեցինք հանգիստ առնել։ Դեռ գետնին չտեղաւորուած, արեւմուտքից եւ հիւսիսից հրացանաձգութեան ձայներ լսուեցին։ Գաղթականութեան հոծ բազմութիւնը խուճապի մատնուեց։ Շատերն, իրենց կրած իրեղններն եւ ուտելիք պաշարը նետեցին եւ սկսեցին դէպի արեւելք փախչել։ Քիչ յետոյ՝ արեւելքից էլ լսուեցին հրացանի պայմիւններ։ Երեք կողմից թուրքերն սկսեցին մօտենալ, կոտորել ու թալանել։ Գոռում գոչումից, լաց ու աղաղակից եւ պայմող զէնքերի որոտից գղրդում էր կիրճը։ Ազատ էր մնացել միայն կիրճի հարաւային կողմը, որտեղից խելագար շառաչիւնով հոսում էր Պէնտի Մահու գետը։ Գետի ալիքներն սկսեցին անհամար մարդկային դիակներ հոսանքն ի վար տանել։ Պրանք՝ ինքնակամ, գետին յանձնուած գաղթականներ էին։ Դահիճների ձեռք չընկնելու համար՝ մենք էլ, մայրս, ես եւ վեց քոյրերս, ձեռք ձեռքի տուած գետ նետուեցինք։ Խոհուն հոգերանը միայն կարող է մեկնաբանել նման արարք կատարողների կեանքի վերջին վայրկեանում ընդունած հերոսական քայլի բարոյական իմաստը։

Գետի կատաղի ալիքները մեզ էլ, հազարաւորների հետ, քշեցին հոսանքն ի վար տարան։

Ես մի քիչ լողալ զիտէի, դիմագրում էի ալիքների

Հոսանքին, ճգնում էի գետեզերքին մօտենալ, արարքս զդացել էի, չէի ուզում մեռնել, այդ պայմաններում անգամ՝ կեանքը քաղցր էր թւում: Ալիքները մի քանի անգամներ ինձ խորասուզեցին, մեծ ճիզ թափելով կրկին գետի մակերեսը բարձրացայ: Առաջին անգամ վեր բարձրանալիս՝ տեսայ քոյրիկներիս ու մայրիկիս մարմինները, որոնք իրենց վերջին յուսահատ շարժումներ կատարելով, կողքիցս քշուեցին եւ անցան . . .

Վերջին անգամ, երբ գետի մակերեսը բարձրացայ, զարնուեցի գետեզերքից մի քանի քայլ հեռու ցցուած մի ժայռի, անմիջապէս ժայռը գրկեցի:

Սարսափն ու հարազատներիս կորուստը այնքան էին յուսահատեցրել ինձ, որ մի րոպէ մտածեցի՝ բաց թողնել ժայռը . . . ու գնալ միանալ հարազատներիս . . բայց չհամարձակուեցի: Գլխապտոյտ ունէի եւ գժուարութեամբ էի շնչում, երեւի մի քիչ ջուր էի ներառել թոքերումս: Որոշեցի դէպի ափը նետուել: Վերջին ուժերս հաւաքելով՝ դէպի ափը լողացի: Թոյլ էի, այս անգամ աւելի շատ ջուր անցաւ թոքերումս . . . վերջապէս ոտքերս յատակին հասան. մեծ դժուարութեամբ մի քանի քայլ առնելուց յետոյ գետից դուրս եկայ, զիսապտոյտը սաստկացաւ, ուշագնաց վար ընկայ եւ այլեւս ոչինչ չզգացի . . .

Երբ ուշքի եկայ, արդէն մթնել էր: Դժուարութեամբ ծունկի եկայ. շուրջս նայեցի՝ կատարեալ լոռւթիւն էր տիրում, ոչ մի շարժում, ոչ մի ժայն: Դողում էի. գետի ալիքներից բարձրացող պաղութիւնը, մարմնիս կաած թաց հագուստներս աւելի էր սառեցրել, ցրտից ցնցում էի, ատամներս իրար էին զարնւում: Ռւզեցի վեր կենալ, փախչել, հեռանալ, բայց գեռ թոյլ էի: Ակսեցի ծնկներս, մարմինս շփել: Նախ մագլցելով գետի հոսանքն ի վեր շարժուեցի եւ վերջապէս ոտքի կանգնեցի: Գետի խոր ընկած ափից վեր բարձրացայ, բաւական երկար քայլելուց յետոյ, վերջապէս ճանաչեցի այն խորտուրորտ ճամբան, որի վրայով նոյն

օր, կէսօրից յետոյ քայլել էինք բազմահազար գաղթականների կարաւանի հետ: Հասայ ճամբռու այն մասին, ուր այդ օր, կէսօրից յետոյ տեղի էր ունեցել ջարդը: Ջարհուրանքով դետում էի շուրջս, ամէնուրեք դիակներ, դիակներ . . . , դաշունահար արուած, առեւանգուած եւ ջախջախուած արիւնաներկ դիակներ . . . Ռւզեցի լալ, կանչել, բողոքել, աղաղակել՝ “Վ Աստուած, ինչպէս ես հանդուրժում այս բոլորը . . . քայց անկարող էի, ձայնս կտրուել էր, պապանձուել էի. դեռ գողում էի, ատամներս իրար էին զարնւում: Ճամբռուս ուղղութիւնը փոխեցի, շարժուեցի դէպի հիւսիս-արեւելք, դէպի լեռները: Զէի ուզում լսել մարդակուլ Պէնտի Մահույի ալիքների մահագոյժ շառաչիւնը: Լեռը բարձրանալիս, միայն մէկ անգամ յետ դարձայ, նայեցի գետի փայլող ալիքներին: Լեռնային պաղ քամին էլ աւելի սաստկացրեց զողս: Թեքուած ժայռերի մի կուտակումի կողքից անցնելիս՝ մի շարժում նկատեցի: Ժայռի յետեւից մի կնոջական ուրուական դուրս եկաւ ու փախչելով կանչեց. — «Զէ, չէ, մի սպանի, Աստուած սիրես . . . »եւ ապա անհետացաւ հեռաւոր ժայռերի յետեւում: Ինչ կարող էի անել, նախ, որ ես խօսելու կարողութիւնը կորցրել էի, իսկ երկրորդը, պիտի կարողանայի<sup>9</sup> հանգստացնել սպանդը տեսած այդ խելակորոյս թշուառին:

Ինձ լեռ թուացող այդ բարձունքը մի ժայռապատմեծ բլուր էր, որի ետեւում երեւան եկան մի քանի նման բարձունքներ, որոնք նոյնպէս ծածկուած էին ժայռերի կուտակումներով:

Երբ երկրորդ բարձունքի ստորոտին հասայ, աջ կողմում նկատեցի քարայրի նմանուող մի խոռոչ. Ներս սողացի ու վերի անկիւնում կծկուած նստեցի կարծելով, որ քամուց պաշտպանուելով զողս կը դադրի: Բայց ի զուր, զողս նոյն թափով շարունակում էր:

Մի անծանօթ զգացմունք էր պատել հոգուս, — ինձ մէկ թւում էր, թէ ես արդէն մեռել եմ, միայն հոգիս է թափառում. բայց երբ, զեռ գետում քշուելիս ժայռին

զարնուելուց ստացած ուսիս վէրքն սկսեց աւելի մրմռալ, նոր իրականութեան վերադարձայ: Այդ միջոցին՝ դրսից կաղկանձիւնի ձայն լսեցի: անտարբերութեամբ մտմտացի: — «Ճապաղիքից ու խեղդուելուց ազատուեցի, այժմ՝ գայլերի բաժին եմ դառնալու»:

Կաղկանձիւնի ձայնը մօտեցաւ. եւ ապա, մէկէն, խոռոչի անցքում մի գամփոի մեծ զլուխ յայտնուեց: Նա ներս սողոսկաց եւ աւելի մեղմ կաղկանձելով ու պոչը շարժելով ինձ մօտեցաւ, հոտոտաց եւ ապա թաց բաճկոնիս փէշից բռնելով, դէպի խոռոչի անցքը դիմեց:

Վախից ու գարմանքից տեղումս քարացել նստել էի: Զկարողացայ անելիքս որոշել: Նա փէշս թողեց, դէմքիս նայեց, կրկին մեղմօրէն կաղկանձեց ու քարայրիցս դուրս եկաւ, իր պոչը շարժելով կրկին ինձ մօտեցաւ, այս անգամ զգուշութեամբ ուղղակի բազուկս իր բերան առած, կրկին դէպի ելքը քաշեց ինձ:

Ես մէկէն յիշեցի՝ մանկութեանս օրերին իմ դաստիարակի պատմած պատմութիւնները՝ հաւատարիմ ու ազատարար չների մասին, եւ այլեւս սրտապընդուած վեր կացայ ու հետեւեցի հեքիաթային ազատարիս:

Խոռոչից երբ դուրս եկանք, նա առաջ ընկաւ եւ սկսեցինք բարձրանալ հանդիպակաց բարձունքն ի վեր:

Երբ բլուրի գագաթին հասանք, երեւան եկաւ մի ընդարձակ դաշտագետին, որի մէջտեղից վազող մի սոռուակի ափին վառուում էր մի մեծ խարոյկ: Խարոյկի շուրջ շարուած էին տասնեակի մօտ մարդիկ, իսկ շրջապատում, կանաչների վրայ, հանգչում էին մի քանի կովեր, եղներ եւ մի փոքրիկ հօտ ոչխարներ:

Երբ մենք խարոյկին մօտեցանք, խարոյկի շուրջ եղողները յանկարծակիի եկած ու զարմացած սկսեցին մեզ դիտել:

Գամփոր կողքիցս հեռացաւ, մօտեցաւ խարոյկի շուրջ նստած մի ծեր կնոջ, նրա ձեռքը լիզեց եւ ապա վազելով կրկին ինձ մօտեցաւ, բաճկոնիս փէշերից

բռնելով, դէպի խարոյկը քաշեց:

Խարոյկի շուրջ նստողները նոր սթափուեցին եւ նոյն ծերունի կինը իր տեղից վեր կենալով ինձի մօտեցաւ ու գորովանքով գոչեց.

— Վայ, խեղճ բալա, էտա ինչ ես քաշէ, կ'երեւայ խեխտուելուց ես ազատուե. արե, արե անպահստ տղա, շորերդ խան, էսա լլսէֆի (վերմակի) մէջ փաթըթուի, կրակի մօտ պառկի. դողդ կը տատրի, կխանկստանաս, շուր (մինչեւ) շորերդ շորնան. — Եւ ապա գամփոին դառնալով, մեծ մայրիկը շարունակեց. — Ապա տիւ, իմ իմաստուն ԶԱԼ, եր տիւ շոտմ սլկվար (անհետացար), ես խասկցա, որ տիւ մի պանի խոտ ես առե, մըզի մայիլ պրտի թողնես (մեզ պիտի զարմացնես):

Սրանք մօտակայ գիւղերից մէկի բնակիչներն էին, որոնք գաղթ յայտարարելուն պէս, առաջին իսկ օրը, հաւաքել էին իրենց ունեցածը եւ ժամանակից առաջ հասել էին այս ապահով վայրը:

Մերունի կինը դառնալով խարոյկի միւս կողմում նստած մի երիտասարդ կնոջ՝ հրամայեց.

— Ախչի Մարօ, էտա պստիկ պղնձի մէջ կաթ տայցու (տաքցրու), թող խեղճ տղէն խմի, շատ ի մսե, որ չփիվինանա: Շատ կաթ րե, որ մեր խելացի Զալն էլ ինչքան կուզի թող լըկի:

Մեծ մայրիկը երբ Զալի անունը տուեց, Զալը իր պոչը շարժելով տիրուհուն մօտեցաւ, նրա դէմքին նայեց ու մեղմ մղկտաց:

Մեծ մայրիկը Զալի գլուխը շոյելով շարունակեց.

— Տիւ իմ իմաստուն, պարի պահսապան, տիւ արժանի ես. — Եւ ապա կրկին Մարոյին դառնալով շարունակեց. — Ախչի, Մարօ, ճոչ (մեծ) կտորմ էլ կագուրմա պե, որ տղէն կուշտ փորով ուտի, որ լուսապացին քէլելու կուվաթ ունենա:

Ինձի մատուցած հացն ու դավուրման ախորժակով ուտելուց յետոյ, վերմակի մէջ փաթաթուած, խարոյկի մօտ պառկեցի: Հաճելի տաքութիւնն ու անսահման յոդնածութիւնը ինձի խոր քունի մէջ սուզեցին:

երբ զարթնեցի, արշալոյսն արդէն բացուել էր:

Վրաս գուրգուրացող գիւղացիները պատրաստը-  
ւում էին զաղթի ճամբան չարունակել:

Գլխիս շատ մօտ նստել էր իմ ազատարար գամփո  
Զալը. երբ աչքերս բաց արի, նա իր պոչը շարժելով իր  
դունչը դէմքիս մօտեցրեց, կարծէք. հարցնում  
էր, — «Արդեօք հանգիստ քնեցի՞ր», — եւ թում էր  
թէ ինքն էլ գոհ էր իր ազատարար արարքից:

Ես խորապէս յուզուեցի ու սրտագին գուրգուրան-  
քով գրկեցի նրա մեծ գլուխը, նրա լայն ճակատը համ-  
բուրելով մրմնջացի. — «Շնորհակալ եմ, իմ բարի եւ  
իմաստուն ազատարար»:

Նա էլ կարծէք հասկացաւ երախտագիտական խօս-  
քերս, իր դունչը բարձրացրեց, դէմքիս մօտեցրեց եւ  
սկսեց դէմքս լիզել: Ես կրկին նրա գլուխը գրկեցի ու  
դէմքիս սեղմեցի:

Այդ օրուանից ես համոզուեցի, որ չները ոչ միայն  
զարգացած բնազդ ունեն, այլ եւ նրանցից շատերը  
ունեն նաև խղճի, սիրոյ, հաւատարմութեան եւ  
անձնազոհութեան յատկութիւնները, որոնցից զուրկ են  
«Աստուծոյ պատկերով ստեղծուած» ՄԱՐԴ կոչեցեալ  
արարածներից շատերը:

Մերունի մայրիկը տեսնելով, որ ես արդէն զարթ-  
նել եմ, կանչեց.

— Պալա ջան, շորերդ չորցիր են, տրի կլխիտ մօտ,  
շուտմ խակի, արի խաց ուտենք, որ ճամպախ ինկնենք:

Խսկոյն հագնուեցի, մեր համեստ նախաճաշն  
անելուց յետոյ ճամբայ ընկանք:

Զեմ յիշում, թէ որ-երորդ օրն էր, երբ իգդիր  
հասանք:

Սրտապուչ հրաժեշտ տալով իմ բարերար գիւղա-  
ցիներին, բաժանուեցինք: Վերջին անգամ՝ իմ ազա-  
տարար Զալի գլուխը կրծքիս սեղմեցի ու մըր-  
մընջացի. — «Մինջեւ կեանքիս վերջը չպիտի մոռնամ  
քեզ, իմ ազատարար Զալ»: Նա անշուշտ զգաց, որ  
այլեւս պիտի չտեսնենք իրարու, սկսեց իր առջեւի

հուժկութաթերը փոխն ի փոխ բարձրացնել ու գետնին դնել եւ մեղմօրէն կաղկանձել։ Ինձ թուաց, որ նա լաց է լինուած։ Զէ՞ որ մինչ իդդիր Հասնելը միշտ միասին էինք քայլում, միասին նստում ու գիշերները կողք կողքի պառկում։ Մտերիմ ընկերներ էինք դարձել։»

Տառապանքներիս պատմութիւնն աւարտելով՝ դարձայ Հայկին եւ ասացի։

— Ահա տառապանքներիս կարճառօտ պատմութիւնը, սիրելի եղբայրիկս։ Մինչեւ հիմա էլ, յաճախ երազումս վերապրում եմ տառապանքներիս զարհուրելի օրերը։ Քունիս մէջ բարձրաձայն խօսում եմ, շուռ եմ գալիս անկողնումս, կանչում եմ, միեւնոյն ննջարանում ննջող բախտակից որբ ընկերներս ինձ զարթեցնում են, խաղաղեցնում։ Զեմ կարող մոռանալ նաեւ՝ ինձ կորստից փրկող իմաստուն գամփո Զալին, մանաւանդ՝ էն սրտցաւ, բարի ծերունի մայրիկին եւ վրաս գուրգուրացող գիւղացիներին։

Պատմութեանս սրտառուչ դէպքերը նկարագրելիս, զգում էի, թէ ինչպէս Հայկի մատներն աւելի ամուր էին սեղմուում թեւիս։ Նրա հոգին էլ էր խոռվել։ Ցուզուած նա ինձ դառնալով խօսեց։

— Եղբայր Յարութիւն, չէք կարող պատկերացնել, թէ մեր կրած տառապանքները որչափ նման են իրարու։ Հիմա էլ դուք լսեցէք իմ կեանքի պատմութիւնը եւ կը տեսնէք, որ ես իրաւացի եմ։

Համոզուելով որ, նա էլ մէջս, որպէս իր միակ մտերիմի, մխիթարանք է փնտոռում, իրեն քաջալերելու համար պատասխանեցի։

— Անչուշտ, Հայկ ջան, մեծ ուշադրութեամբ պիտի լսեմ, պատմիր։

Կարճ լուռթիւնից յետոյ նա սկսեց պատմել իր ընտանիքի եւ իր կրած տառապանքների պատմութիւնը, որը, իր բոլոր մարնամասնութիւններով արդէն նկարագրել եմ այս երկրորդ վկայութեան Ա. եւ Բ. գլուխներում։

Այդ օրուանից մեր մտերմութիւնն է՛լ աւելի

խորացաւ, հարազատ եւ անկեղծ եղբայրական կապի վերածուեց. բայց, դժբախտաբար, նոյն տարուան, 1918 թուի մայիսեան ճակատագրական դէպքերը պատճառ դարձան մեր բաժանման:

\* \* \*

1917 թուի վերջերին, ոռւսաստանում ծագած յեղափոխութեան հետեւանքով ոռւսական բանակը յետ էր նահանջել ազատագրուած արեւմտեան Հայաստանի՝ Վանի, Մուշի, Երզնկայի, Կարինի եւ Տրավիզոնի նահանգներից, որոնցում թուրքերի կողմից գործադրուած ազգասպանութիւնից ազատուած հայ բնակչութեան մնացորդներ, նոր ջարդի չենթարկուելու համար, ստիպուած եղան լքել իրենց յաւիտենական հայրենիքը եւ ապաստանել արեւելեան փոքրիկ Հայաստանում:

Թուրքերը, օգտուելով առիթից, վերակազմեցին իրենց ջախջախուած բանակը, վերզինուեցին քրիստոնեայ մեծ պետութիւնների օգնութեամբ, հետըգհետէ առաջացան, վերագրաւեցին ազատագրուած հայկական նահանգները, ու քաջալերուած իրենց անարգել առաջխաղացումից, որոշեցին գրաւել նաեւ Արեւելեան Հայաստանը, վերջնականապէս բնաջնջել հայութեան եւ ապա գրաւել ամբողջ անդրկովկասը, տէր դառնալ Պարուի քարիւղահանքերին, անցնել Կասպից ծովը, գրաւել նաեւ՝ թրքօ-թաթարօ-մոնղոլական ցեղերով բնակուած անդրկասպիան երկիրները ու հիմնել թրքական լայնատարած գերիշխանութիւն՝ Մարմարայից ու Միջերկրականից մինչեւ Զինական Պարիսպները:

Մինչեւ 1918 թուի Մայիսը՝ Կարս, Արտահան, Սարիկամիչ, Սուրմալուն եւ Ալեքսանդրոպոլը գրաւելուց յետոյ թրքական բանակը արդէն հասել էր Երեւանի տակ: Եւ ահա, այդ ճակատագրական օրերին, արժանայիշատակ Զօրավար Սիլիկեանի կոչով ոգեւորուած,

արեւմուտքից գաղթած թշուառ գաղթականութիւնը օդակուած Երեւան գաւառի բնիկ հայութեան հետ, ՄԱՀ կամ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ նշանաբանի տակ, կամաւորական գունդեր կազմեցին, առաջ նետուեցին - դիմագրաւեցին գարաւոր թշնամուն, ջախջախիչ հարուածով նրան յետ չպրտեցին, կերտեցին հերոսական ԱԱՐԴԱՌԱՊԱՏԸՆԸ, որով հայ ազգի պատմութեան մէջ, առաջին անգամ լինելով, հիմնուեց Հայաստանի Ազատ եւ Անկախ Հանրապետութիւն:

Սարդարապատի հերոսամարտի նախօրեակին, եւ Հայկն էլ որբանոցից փախանք, մեզ նման հարիւրաւոր որբերի հետ կամաւոր գրուեցինք ու մեծագոյն բախտն ունեցանք մասնակցելու Սարդարապատի եւ միւս ճակատների վրայ մղուող մարտերին, մասամբ լուծած լինելով մեր սրտերում կուտակուած փոխհատուցման վրէժը:

\* \* \*

Վեց երկար տարիների բաժանումից յետոյ, 1924 թուի Մայիսին, գարնանային մի բուրումնաւէտ առաւօտ, երբ Երեւանի Պետական թատրոնի առջեւի մայթով անցնում էի, յանկարծ մէկը ինձ իր զիրկն առաւ ու «Եղբայր, Եղբայր» կանչելով ճակատս համբուրեց: Հայկն էր, զինուորական հագուստներով: Մեծ եղաւ ուրախութիւնս. ինձ երկար պահեց իր հուժկու բազուկներում: Աճել էր, բարձրահասակ ու յաղթանդամ երիտասարդ էր դարձել: Միասին Աբովյան փողոցն ի վեր սկսեցինք քայլել:

Պատմեց, որ Թիֆլիսի զինուորական զպրոցն աւարտել է, այժմ գնում է Մոսկուա, զինուորական Ակադեմիայում բարձրագոյն կրթութիւն ստանալու: Ես սրտանց շնորհաւորեցի իրեն:

Մեր երկար խօսակցութեան ընթացքում, նա զգաց, որ ես չեմ կարող հաշտուել մեր հայրենիքի խլման եւ անդամահատման անմարդկային արարքի հետ:

Նա թեւս ամուր սեղմելով, ինքնավստահութեամբ խօսեց.

— Աշխարհն այսպէս չի մնայ, եղբայր Յարութիւն, — եւ ապա թեւս բաց թողնելով, իր գրպանից մի փոքրիկ տուփ հանեց, բաց արեց եւ ինձ ցոյց տուեց՝ քահանայի վզից հոսած արիւնով ներծծուած վերմակի ճոթի մումիա դարձած կտորը ասելով, — Մենք մեր հաշիւները գեռ չենք փակել թուրքերի հետ, եղբայր Յարութիւն, ուշ թէ շուտ՝ փոխ-հատուցման ժամը կը հասնի:

Եւ նա խոր շունչ քաշելով, տուփը կրկին փակեց, պատկառանքով վրան նայեց ու կրկին իր ծոցի գրպանում պահեց:

Ուշ էր արդէն: Նրա մեկնումի ժամը հասել էր: Սրտագին հրաժեշտ տուինք իրարու եւ նա երկաթուղակայարան մեկնեց, մէկ ժամ յետոյ Մոսկուայի գնացքը մեկնելու էր:

\* \* \*

Կրկին տարիներ անցան, տառապանքների ու տանջանքների երկար տարիներ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի բերումով ես ընկայ Գերմանիա: Այս աշխատասէր եւ ստեղծագործ ժողովրդի հայրենիքում կեանքիս աշունն եմ ապրում: Հայրենիքիս, ժողովրդիս եւ հարազատներիս կարօտը սրտում՝ սպասում եմ կեանքիս ձմրան: Ե՞րբ է գալու, չգիտեմ, բայց գիտեմ, որ գալու է . . . Կոկիծով ափսոսում եմ, որ հայրենի հողը չի պարփակելու բաղմատանջ մարմինս:

Ես շարունակ մտածում էի՝ սիրելի Հայկ եղբայրին կիս կրած տառապանքների պատմութիւնը թղթին յանձնել, բայց զանդաղում էի, ենթադրելով, որ այդ պատմութիւնը ամբողջականութիւն չի կարող զառնալ, այլ մի եղերական Ողիսականի մէկ մասը միայն:

Բայց ահա, այս տարի, հրաշքանման պատահա-

կանութեամբ, Հայկի ինքնակամ ծով նետուելուց 62 տարիներ յետոյ, որը ամբողջականութիւն դարձրեց իմ «Յափշտակուած Հոգիներ»ի այս երկրորդ Վկայութիւնը:

Եւ ահա, այդ ՀՐԱՇՔԱՆՄԱՆ ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒ -  
ԹԻՒՆԸ դարձաւ այս Վկայութեան Զորորորդ գլուխը:

Գլուխ Դ

## ԿԱՐԵՎԵՐ ՈՉ ՈՔԸ

1977 թուին, ստամոքսս, երկրորդ անգամ լինելով, սկսեց արիւնել: Անմիջապէս նոյն հիւանդանոցը տեղափոխուեցի, ուր գործողութեան էի ենթարկուել: Ինձ բուժող նոյն բժիշկները մեծ հոգատարութեամբ, երկու օրուան ընթացքում արիւնահոսութիւնը դադարեցրին եւ սկսեցին վերջնական բուժիչ միջոցներ ձեռք առնել: Յաջորդ շարթուն այնքան էի կազդուրուել, որ կարող էի հիւանդանոցի այգիում պտոյտի գուրս գալ:

Մի օր առաւտեան, երբ անկողնիցս վեր էի կացել ու լուացւում էի, գլխաւոր բժիշկը շտապ քայլերով սենեակս մտաւ ու մտերմութեամբ ինձ դիմեց. —

— Պարոն Յ., ճիշդ հիմա, սաստիկ ցաւով տառապող թուրք բերին: Անկողնի վրայ նստած, իր փորը բռնած, աչքերը փակ տնքում է ու օրօրւում: Ինչ հարց որ տալիս ենք՝ միայն թուրքերէն երկու րառով ու գլխի բացասական շարժումով է պատասխանում, երեւի գերմաներէն բոլորովին չգիտէ: Մինչեւ զանգահարենք իրենց հիւպատոսարան, մինչեւ մի թարգման ուղարկեն, կարող է ուշ լինի: Մեր հիւանդանոցում միայն դուք գիտէք թուրքերէն . . . գիտեմ, կարդացել եմ նրանց կատարած ազգասպանութեան մասին ձեր հանդէպ . . . , բայց մտէք մեր դրութեան մէջ, մենք բժիշկներս՝ երդուեալ բուժիչներ ենք, իրաւունք չունենք տարբերութիւն դնելու մեզ դիմող հիւանդների մէջ. առանց նրանց ազգային, կրօնական ու ցեղային պատկանելիութիւնը նկատի ունենալու, պարտաւոր ենք բոլորին, բոլորին օգնութեան հասնել: Խնդրում եմ, յանուն մարդասիրութեան, օգնեցէք մեզ, որպէսզի կարողանանք այդ մարդու կեանքը փրկել:

Ես, անշուշտ, ոչ հաճոյքով, այլ միայն ի յարգանս զլիսաւոր բժիշկի, սենեակի վերաբերուս վրաս առի ու հետեւեցի իրեն:

Միջանցքի միւս ծայրում գտնուող սենեակը մտանք: Անկիւնի անկողնի վրայ կծկուած-նստած, աչքերը փակ ու ծնօտը կրծքին սեղմած, 40-ի մօտ մի հսկայ էր օրօրւում:

Մօտեցայ ու թրքերէնով հարցրի, թէ մարմնի որ մասումն է ցաւեր զգում: Նա, առանց իր աչքերը բանալու, ձախ կողմի վերջին կրծոսկորից մինչեւ վարը ցոյց տալով պատասխանեց.

— Այստեղից մինչեւ այստեղ դանակով կտրտում են . . . վայ . . . կտրտում են . . . ամաան . . . չեմ զիմանում . . .

Նրա ասածները թարգմանեցի զլիսաւոր բժշկին.

— Հասկանալի է, երիկամունքներից քարեր են իջնում, հաւանաբար՝ շատ վտանգաւոր չէ:

Ու հրամայեց սենեակում սպասող զթութեան քոյրերին՝ հիւանդին անմիջապէս գործողութեան սրահը տեղափոխել: Եւ ինձ դառնալով ասեց.

— Բարեբախտաբար, նման գործողութիւնների համար, օրերս նոր կատարելագործուած գործիքներ ենք ստացել, ասացէք հիւանդին, թող անհոգ մնայ, չուտով կ'ազատուի սուր ցաւերից:

Երբ թուրքին մահճակալով սկսեցին սենեակից դուրս տանել, ես կրկին իրեն մօտեցայ, իրեն հանգստացնելու համար, թարգմանեցի զլիսաւոր բժշկի ասածները:

Նա իր աչքերը բանալով ինձ նայեց, դժուարութեամբ, շատ մեղմ ձայնով պատասխանեց.

— Շնորհակալ եմ, մեծ եղբայր . . . շնորհակալ եմ . . . , թող Աստուած . . .

Եւ այլեւս չկարողացաւ շարունակել, սուր ցաւերից ատամները իրարու սեղմեց ու կծկուեց: Գթութեան քոյրերը նրա մահճակալը սահեցնելով դուրս տարան:

Յաջորդ օր, ճաշից յետոյ, զլիսաւոր բժիշկը կրկին

սենեակս մտաւ ու խնդրեց, որպէսզի ես մի անգամ եւս թարգմանի գեր կատարեմ: Վեր կացայ ու դէպի թուրքի սենեակը դիմեցինք:

Երբ հիւանդի սենեակը մտանք, նա իր խաղաղած դէմքը դէպի մեղ դարձուց եւ ուրախութիւնից դողացող ձայնով գոչեց.

— Խորին չնորհակալութիւնս, Տոքթօր էֆէնտի, եկէք ազնիւ մեծ եղբայր, ձեր լաւութիւնը յաւիտեանս չպիտի մոռանամ:

Չնայած նրա դէմքը երկրորդ անգամն էի տեսնում, բայց այս անգամ միայն անդրադարձայ ու մտմտացի: — « . . Այս կանաչ-կապտաւուն աչքերի մեղմ ու համեստ արտայայտութիւնը . . . այս համաչափ նուրբ դիմագծերով դէմքը . . . ոչ . . . ոչ . . . , սրանք թրքական չեն կարող լինել . . . »: Ուստի, մեր առաջին հանդիպման միջոցին իմ յայտնարերած անտարբեր վերաբերմունքը թողած, ներքին համակրանքի մղումով, իրեն մօտեցայ ու ժպտալով բարեւեցի: Նա իր հուժկու բազուկներով ձեռքս ամուր սեղմեց, կրկին սկսեց երախտագիտութիւն յայտնել, բայց ես իրեն ընդհատելով հարցրի:

— Պարոն գլխաւոր բժիշկն ուզում է իմանալ, թէ դուք ինչպէս էք զգում ձեզ. ցաւեր ունէ՞ք, եւ մարմնի ո՞ր մասերում:

Նա իր ձախ կողմի վարի մասը ցոյց տալով պատասխանեց.

— Այստեղ մի քիչ ցաւեր ունեմ, բայց ոչինչ, տանելի են: Քիչ առաջ Սանիտարը ոետինեայ խողովակով միզափամփուչտս ողողեց, մէզիս հետ դեռ լերդացած արիւն է գալիս:

Հիւանդի ասածները թարգմանեցի բժիշկին. նա մօտեցաւ, հիւանդի զարկերակը բռնեց, ստուգելուց յետոյ ասաց.

— Յայտնեցէք հիւանդին, որ գործողութիւնը շատ յաջող անցաւ. բոլոր քարերը երիկամունքից հեռացուած են: Մի քանի օր էլ մէզի հետ լերդացած արիւն

պիտի դուրս դայ, մինչեւ որ քարերի դուրս եկած անցքերում առաջացած քերուածքները բուժուեն: Եկող շարթուան վերջին կարող է դուրս դրուել հիւանդանոցից:

Այդ գայրեկեանին, զլխաւոր բժշկի գրապանի ուղիոն նրան կանչեց՝ ուրիշ սենեակում մի այլ ծանր հիւանդի այցելելու: Եւ նա իր ձեռքը հիւանդի ուսին զնելով՝ «Եյի, էյի» կանչեց եւ շտապ քայլերով սենեակից հեռացաւ:

Երբ ես բժշկի ասածները հիւանդին թարգմանեցի, նա երախտագիտութեան զգացմունքով լիցուն իր աչքերի հայեացքը դէմքիս սեւեռեց, ձեռքս ամուր բոնելով ինձ իր մահճակալի մօտ գտնուող աթոռին մօտեցրեց եւ աղաչանքով խնդրեց.

— Նստեցէք, խնդրեմ. որչափ երախտապարտ եմ ձեզ . . . , խնդրեմ, մի մերժի, մի քանի բոպէ նստեցէք, մենակութիւնից սիրտս շատ է նեղւում, — իր սենեակում պառկած երկու գերմանացիներին ցոյց տալով շարունակեց, — այս ալամանների հետ չեմ կարող խօսել, մէկ բառ անգամ ալամաններէն չգիտեմ . . Դուք անշուշտ ալաման էք . . . , որտեղ եւ ինչպէս էք այդքան մաքուր թուրքերէն սովորել . . .

Ես իսկոյն չպատասխանեցի: Ուշադրութեամբ լսում էին նրա ձայնի ելեւէջները, դիտում էի նրա հեզու բարի դէմքի ժամանակութիւնը, եւ ներքին ձայնս կրկին ինձ յուշեց, թէ այս մարդը թուրք չի կարող լինել:

Պատասխանիս ուշացումը, կարծէք նրան տիսրութիւն պատճառեց, որով, իր տիսուր հայեացքը դէմքիս սեւեռելով հարցրեց.

— Գուցէ հարցումս անյարմար զտաք, մեծ եղբայր . . . ներողութիւն . . .

Ես այլեւս յարմար բոպէ համարելով՝ կասկածանքս պարզելու, ուղիղ իր աչքերին նայելով պատասխանեցի:

— Ոչ, պարոն, ես ալաման չեմ, Հայ եմ:

Նրա աչքերի կոպերը մէկէն լայնացան, շրթունք-

ներն սկսեցին դողալ, լայնացած աչքերը արտասուրով լեցուեցին, ձեռքս ամուր սեղմելով իր կրծքին մօտեցրեց, ոչ հայու առոգանութեամբ, բայց հայերէն բառերով թոթովեց.

— Աման, էղբար ջան . . . ես ալ . . . ես կէս հայ եմ, — եւ ապա թուրքերէնի դառնալով շարունակեց, — Մայրս հայ էր . . . , իմ ազիզ, իմ դժբախտ մայր. նա ուզում էր ինձ հայերէն սովորեցնել, բայց հայրս խստօրէն արգիլում էր, այդ պատճառով՝ հազիւ մի քանի բառեր եմ սովորել: Մանկութեանս օրերին, երբ փողոցում երեխաների հետ խաղում էի, ինձ միշտ ասում էին, թէ ես կավուր մայր ունեմ, բայց ակնածանքով էին խօսում մայրիկիս մասին, քանի որ նա զրագէտ էր, խելացի էր եւ անգլերէն գիտէր: Ես պարծենում էի նրանով, որդիական անսահման սիրով կապուած էի նրա հետ. եւ ես էլ նրա միակ միսիթարանքն էի: Երբ ես ու մայրս մենակ էինք լինում, նա պատմում էր, թէ ինչ անզթութեամբ թուրքերն ու քուրտերը հայերին կոտորել էին: Երբ տարիքս առի, հասունացած մարդ դարձայ, լսեցի նաեւ հօրմիցս, դրացիներից, թէ ինչպէս նրանք էլ մասնակից էին եղել՝ սպանել, ջարդել, թալանել ու առեւանգել հայերին, ներքուստ սկսեցի ատել թուրքերին ու քուրտերին: Ազնիւ մայրս ինձ համար հայութեան չափանիշն էր. նա ինձ պատմում էր՝ հայ ժողովրդի մեծ հանճարի, ընդունակութիւնների մասին, հայութեան բարձր մշակոյթի, նրա փառաւոր անցեալի ու եղերական ճակատագրի մասին: Երբ հետագայում առիթներ ունեցայ անձամբ ծանօթանալու հայ ժողովրդի արժանիքների հետ եւ երբ համեմատեցի հայութեան՝ թուրք եւ քուրտ ժողովուրդների հետ, սկսեցի ոչ միայն թուրքերին ու քրտերին ատել, այլ եւ ես ինքս իմ աչքի առջեւ նուաստացայ, որպէս մի վայրենի ջարդարարի կողմից առեւանգուած, մի դժբախտ հայուհուց ծնուած մի անարգուած արարած: Ո՞վ եմ ես հիմա, չգիտեմ . . . Քանի դեռ անզին մայրս ողջ էր՝ գուրգուրում էր վրաս, միսիթարում,

սիրու էր տալիս, ասելով՝ «Պալէս, դու իմ մսից եւ արիւնից ես ծնուել, դու ինձ եւ իմ ազգին ես պատկանում»։ Հիմա նա չկայ. ես մենակ եմ մնացել . . . անմիտար . . . ես չեմ մոռանայ այն յուղիչ բոպէն, երբ մայրս պատմում էր, թէ ինչպէս Տրապիզոնի հայութեան կոտորելու օրերին, պապս գիւղից քաղաք է գնացել եւ ծով նետուելիք երեխաներից՝ մայրիկիս բռնութեամբ բերել եւ իր որդուն՝ հօրս կնութեան է տուել, իսկ մայրիկիս փոքր եղրօր, միւս հարիւրաւոր երեխաների հետ, երեկոյեան մութն ընկնելուն պէս ծովն էին նետել, իսկ ծնողներին՝ ուսուցիչ հօրն ու մօրը, հազարաւորների հետ քշել, ամայի վայրերում կոտորել . . .

Այս անգամ յուղուելու հերթը ինձ էր հասել, յիշելով իմ եղբայրացու Հայկի եղերական պատմութիւնը, տեղից վեր թռայ, հիւանդի ուսերից ամուր բռնելով, անհամբերութեամբ հարցրի.

— Ասի՛ր, այ մարդ, մայրիկիդ անունը Անո՞ւշ էր, նրա եղբայրիկի անունը Հա՞յկ, Տրապիզոնի Ֆնտըք-եան ընտանիքի՞ց :

Նա մի բոպէ ապշահար եւ արձանացած դէմքիս նայեց, իմ ձեռքերն իր ուսերից վար առնելով ամուր սեղմեց ու դողացող ձայնով հարցրեց.

— Աստուած իմ . . ., Ո՞վ էք դուք, ո՞րտեղից գիտէք այդ բոլորը . . ., եւ ապա դէմքս աւելի խոր զննելուց յետոյ աւելի զրգուած ձայնով գոչեց, — այո, այո, ձեր աշքերն էլ մայրիկիս ու իմ աշքերի նմանն են, նոյն գոյնն ունեն . . . Աստուած իմ . . . ուրեմն, ուրեմն դուք իմ քեռին էք, Հայկ քեռին էք . . . սա ի՞նչ հրաշք է . . ., եթէ մայրս հրաշքով յարութիւն առնէր ու տեսնէր ձեզ՝ ուրախութիւնից երկրորդ անգամ պիտի մեռնէր . . .

Առանց ժամանակ տալու ինձ, որ իրեն բացատրէի ճշմարտութիւնը, ինձ իր կրծքին սեղմելով, երջանկութեան արցունքներ թափելով կրկնեց.

— Այս՛, իմ քեռին էք, Հայկ քեռին էք . . .

Սենեակում, միւս երկու անկողինների վրայ պառկած գերմանացիները զարմացած մեզ էին դիտում:

Մեծ դժուարութեամբ նրա գրկից ազատուելով ջանացի հանգստացնել նրան. բացատրեցի, որ ես քեռին չեմ, այլ խեղդուելուց ազատուած եւ որրանոց ընկած նրա քեռու մտերիմ ընկերն եմ եղել, որ Հայկն է ինձ պատմել իրենց ընտանիքի եղերական պատմութիւնը: Բայց նա չուզեց հաւատալ ինձ, տառապանքի տանջող կսկիծը սրտում պատասխանեց.

— Ոչ, չեմ հաւատում, դուք ճշմարտութիւնը թագցնում էք. չէք ուզում, որ մի քրտի լակուտ, որպէս քրոջ որդի ունենալ . . . Օհ, Աստուած իմ . . . ես ի՞նչ մեղաւոր եմ . . . խեցնացէք ինձ . . .

Ես ազգուեցի նրա այդ խօսքերից եւ մտերմօրէն սկսեցի համոզել նրան՝ ասելով.

— Լսէ՛ք, պարոն, հաւատացէք ինձ, եթէ ես Հայկը լինէի, պիտի ուրախութեամբ ընդունէի ձեզ, որպէս քրոջորդի. ես միայն Հայկի ընկերն եմ, ես էլ անչափ ուրախ եմ ձեզ հանդիպելուս համար: Մի րոպէ սպասեցէք, ես հիմա անձագիրս կը բերեմ, որ դուք հաւատաք ասածներիս. — այս ասելով ես անմիջապէս իր սենեակից դուրս եկայ եւ մէկ րոպէ չանցած անձագրովս վերադարձայ իրեն ցոյց տուի, վերջապէս համոզուեց, որ ես իր քեռին չեմ:

Հայկի մասին մանրամասն տեղեկութիւններ տալուց յետոյ՝ իրեն դիմեցի.

— Ահա ամբողջ ճշմարտութիւնը, պարոն. եթէ ձեր քեռին դեռ կենդանի է, ուրեմն, Խորհրդային Միութեան ծայրամասերից մէկում, որպէս իր տարիքն առած բարձրաստիճան զինուորական թոշակառու է դարձել ու հանգստանում է:

Նա իր ձեռքն ուսիս դնելով, պատասխանեց.

— Ինձ այլեւս պարոն միք անուանի, մեծ եղբայր, ինձ Հայկ անուանեցէք . . . Անզին մայրիկս իր Հայկ եղբայրիկին խեղդուած համարելով, նրա յիշատակն յաւերժացնելու նպատակով, ինձ գաղտնօրէն միշտ

Հայկ էր անուանում . . . Ախ, թշուառ մայրս զգում էր, որ ևս հոգեպէս տանջւում էի քրտական արեան խառնուրդ ունենալուս համար, տանջւում էի ՈՉ ՈՔ լինելու զիտակցելով . . . նա շարունակ արտում էր ու սպաւոր: Միայն, երբ միասին մենակ էինք լինում, գուրգուրում էր վրաս, արտասում, ու յիշում էր իր հարազատների եղերական կորուսար: Խեղճը, զժզոհ իր ճակատազրից, այս տարուան Յունվարին, փակեց իր աչքերը յաւիտեանս . . . իր մահուան նախօրեակին նա ինձ իր սնարի մօտ կանչեց, խնդրեց, որ ծունկի գամ, խոնարհը եցի, օրհնեց ինձ, խաչակնքեց եւ պարտազրեց ինձ, որ իր մահուանից յետոյ, ևս մի ԽԱՉ, կամ էլ մի փոքրիկ ԽԱՉՔԱՐ գտնեմ եւ իր գերեզմանի գլխի կողմի թմրի ճակ գաղտնօրէն թաղեմ: Ես խոստացայ, իր ձեռքը համբուրեցի եւ խոստումս սիրով ու ճշտօրէն կատարեցի:

\* \* \*

Յաջորդ շարթուան վերջին, «Հայկ»ը, կազդուրած հիւանդանոցից դուրս դրուեց: Երբ մօտս եկաւ հրաժեշտ տալու՝ ևս անկողնումս նստած սկսել էի այս ՎԿԱՅՈՒԹԻՒՆը զրի առնել: Նա անկողնիս եզրին նստելով, ձեռքս իր ափերի մէջ բռնած, յուզուած սկսեց խօսել:

— Հայրենիքից հեռացայ, կարծելով, թէ անդին մայրիկիս կորուստի ցաւը կը մեղմանայ եւ օտար միջավայրի մէջ՝ ՈՉ ՈՔ լինելուս զիտակցութիւնս այլեւս ինձ չի տանջելու, բայց ի զուր, այժմ աւելի շատ եմ տառապում: Պիտի վերադառնամ, ծունկի գամ անմոռանալի մայրիկիս գերեզմանի առջեւ, երեսս նրա գերեզմանի հողաթումբին բսելով պիտի խօսեմ ու պիտի ասեմ, — «Իմ անուշիկ ԱՆՈՒՇ մայրիկ, ուրախալի լուր եմ բերել քեզ, քո սիրեցեալ եղբայրիկը չի խեղդուել, նա կենդանի է, նա ապրում է: Մի գուցէ՝ իր անդիօրէն առեւանգուած մարմնի արդար հոգին մի քիչ

միսիթարուի: Մեծ եղբայր, անշուշտ մտնում էք դրութեանս մէջ . . . ա՛խ, որքան կ'ուզէի որպէս մաքուր ՀԱՅ ծնուած լինել, պարծենալ ազգովս, հարադատներիս գուրգուրանքներին արժանանալ . . . Պատկերացրէք վիճակս, եթէ մէկ օր, հրաշքով գտնեմ քեռուս, արդեօք, նա ինձ՝ որպէս իր քրոջ որդու պիտի ընդունի<sup>5</sup>, թէ<sup>6</sup> պիտի արհամարհի, որպէս հին վէրքերը բորբոքող, առեւանդումից վիժուած մի հրէշի . . .

Ես աշխատեցի միսիթարել, սիրտ տալ այդ ԿԱՐԵՎԱԿԻՐ ՌԶ ՌՔԻՆ, բայց ի զուր. համոզուեցի, որ նա տուն է վերադառնում աւելի խոցուած սրտով, հոգեկան անբուժելի վէրքերով:

ՎԵՐՋ

## Վկայութիւն Երրորդ

### ԵՐԿՈՒ ԵՐԴՈՒՄՆԵՐԻՑ 43 ՏԱՐԻՆԵՐ ՅԵՏՈՅ

Գլուխ Ա.

Տասնըհինգերորդ դարուց մինչեւ տասնեւեօթ-ներորդ դարը Հայաստանը կրկին կռուախնձոր էր դարձել պարսիկների եւ միջին Ասիոյ խորքերից ներխուժած թաթարո-թրքական բռնագրաւիչ ցեղերի միջիւ:

Այդ վայրագ ցեղերին միաձուլող ու գերիշխող Օսմանեան կայսրութիւնը, տասնեւեօթներորդ դարու սկիզբներին, վերջնականապէս տիրել էր Արեւմտեան Հայաստանին:

1604 թուին Շահ Ապար Մեծ Հայաստանից չորս հարիւր հազարի մօտ հայ արհեստաւորների ու ճգնաջան հայ գիւղացիների տեղահան էր արել ու դէպի Պարսկաստան քչել՝ իր յետամնաց երկիրը շէնցնելու, մշակութապէս զարգացնելու նպատակով. որի հետեւանքով, վերջնականապէս Օսմանեան կայսրութեան կցուած Արեւմտեան Հայաստանի բազմաթիւ հայ գիւղերն ու քաղաքները կործանուել, դատարկուել էին, մնացեալներն էլ բնակչութեամբ չափազանց նօսրացել:

Ամենից շատ տուժել էր Վասպուրականի նահանգը:

Արհաւիրքներից ու հալածանքներից ազատուած հայութեան մնացորդները, աւելի կեղեքիչ ու կրօնամոլ օսմանցիների ստրկական ծանր լուծի տակն անգամ, սկսել էին վերակառուցել ու վերաշինել իրենց կիսաւեր օճախները:

1606 թուին, վանում, Մայիսեան գեղազմայլ արշալոյսն էր բացւում:

Արեւը, Վարագայ լերան կատարից բարձրանալով, իր կենսատու շողերն էր սփռել կանաչազարդ այգիների ու մարգագետինների վրայ:

Արշալոյսի զով զեփիւոր քնքչօրէն իր համբոյրն էր դրոշմում նորափթիթ պտուղներով ծանրաբեռնուած ծառերին, ամէնուրեք աճած ծաղիկների կոկոններին, որոնք օրօրուելով, եւ որպէս խնկարկում, իրենց արբեցնող բուրմունքը տարածելով, ողջունում էին Մայր Արեւի գալուստը:

Հազարամեակներ տեւած հայութեան պայքարի, հրաշագործութեանց ու տառապանքի անմահ վկան, - Վանայ լիճն էլ - գիշերային ալեկոծումից խաղաղած, արեւի շողերն էր անդրագարձնում եւ իր ամբողջ մակերեսով նմանւում էր աղամանդակուու, լայնատարած ու ծածանուող հեքիաթային սփոռցի:

Մարգերում, թուփերի տակ, ծառերի ճիւղերի վրայ՝ տերեւների արանքներում եւ օդում ճախրող թռչունների գեղգեղանքը, ծաղիկների կոկոններից նեկտար ծծող մեղուների ու բազմանախչ թիթեռնիկների ճախրանքն ու բզզոցը, ամբողջացնում էին բնութեան հմայիչ համերգը ու նրա կախարդական գեղեցկութեան համակարգումը:

Իգուր չէ, որ գեռ մինչեւ այսօր Մերձաւոր Արեւելքի բոլոր ազգութիւնների տարեցները, իրենց կարծիքն ու բարձր գնահատանքը վանի մասին արտայայտում են հետեւեալ համեմատականով, — «Երկնքում - ԱրթԱՅՈՒԹԻՒՆ, իսկ երկրագնդում - ՎԱՆ»:

Այս կախարդական համերգին միանում ու բազմահընչիւն համանուագ էր զարձնում նաև քաղաքամիջում սկսած աշխատանքի շեփորը:

Վերակառուցուած հնամեայ բազմարաժին ծածկը-ւած շուկայում ստեղծագործում էին Վանի հոչակաւոր արուեստագէտ արհեստաւորները, - սրանք անխոնջ

Ոսկերիչներն էին, փորագրիչներ, նրբագործ ջուլհակներ, հիւսներ եւ դարրիններ:

Վերջին աւերումներից յետոյ, դեռ երկու տարիներ չանցած, հրաշագործ հայը բարւոք կեանք էր ստեղծել եւ շուկան լեցուել էր բազմապիսի բարիքներով:

Վասպուրականի հեռաւոր ու մօտակայ ծայրամասներից գնումի եկած քրտերը, ասորիները, պարսիկներն ու եղիղիները, իրենց ազգային բազմարդիտ տարագներով, խանութների առջեւ խոնուած, գնելիք ապրանքների ընտրութիւն էին կատարում:

Շուկայի ծայրամասում, գլխաւոր ճամբու երկու կողմերում գտնուող իջեւաններից բեռնաւորուած ուղտերի կարաւաններ քաղաքից գուրս էին գալիս, իսկ հեռուներից եկող նոր կարաւաններ քաղաք էին մտնում:

Դանդաղօրէն ընթացող ուղտերի շարքերի միջով, երկու սպառազինուած հեծեալներ, սրընթաց քաղաք մտան:

Մրանք սուրհանդակներ – էին. գալիս – էին թուրք-պարսկական սահմանագլխից, ուր, որպէս թրքական բանակի մաս կազմող սահմանապահ ուժերի, կանգնած էին հայերից կազմուած Վանկուլիական հօթհեծելազօր գնդեր եւ հինգ քրտական աշխրէթներ:

Այս արշաւող երկու սուրհանդակները, Սուրբ Նշան եկեղեցու փողոցն անցնելով, մտան Աղենց թաղ: Մօտենալով երեքյարկանի ապարանքը եղերող բարձրաշար պարսպի անկիւնում գտնուող մեծ դրան, կանգ առին: Այս մեծատարած ապարանքում ապրում էր Աղենց-Գարասէֆէրեանենց իշխանական բազմանդամ տոհմը:

Սուրհանդակներից մէկը – Վանկուլիական գնդերի սուրհանդակ Սրգոն էր, իսկ միւսը – քրտական աշխրէթների սուրհանդակ Պաքիրը:

Սրգոն իսկոյն ձիուց վար իջաւ, մօտեցաւ մեծ դրան եւ ձկիկով (դրան վրայ ամրացուած երկաթեայ մուրճիկ) սկսեց դուռը ծեծել: Նոյն վայրկեանին դրան

աջ կէսի կենտրոնում գտնուող փոքրիկ պատուհանը բացուեց ու երեւաց պահակ Մսրոյի գլուխը: Սա ճանաչելով եկուորներին՝ բացագանչեց:

— Ախ, դո՞ւ ես Սրգօ, այս րոպէիս բաց կ'անեմ:

Երբ եկուորները ներս մտան, Մսրոն տեսնելով նաեւ Պաքիրին՝ աւելացրեց.

— Այդ դո՞ւ ես, Պաքիր ախապէր, բարի ես եկել. ի՞նչպէս ես:

— Լաւ եմ, Մսրօ ախապէր, տի՞ւ ինչիս ես, - իր վատ հայերէնով պատասխանեց Պաքիրը:

— Ես էլ լաւ եմ, Պաքիր ախապէր: Դէ ձեր ձիերն այստեղ-բակում թողէք, հիմա ախոռապանը կուգայ ներս կը տանի, իսկ դուք՝ պահակատուն անցէք հանգըստացէք, քիչ յետոյ նախաճաշելու ենք:

— Հանգստանալու համար չենք եկել, Մսրօ, իշխանաց իշխանին շատ կարեւոր նամակ ունենք յանձնելու, անձամբ միայն, — շեշտեց Սրգոն:

— Եթէ այդպէս է, մի րոպէ սպասեցէք, ես իսկոյն վեր կը բարձրանամ, կը տեղեկացնեմ, — պատասխանեց Մսրոն եւ պարսպի դուռը փակելով, ներսի բակը տանող երեք կամարների տակից անցաւ, աջ կողմի աստիճաններով երկրորդ յարկը բարձրացաւ, ուր տեղաւորուած էին Վանկուլիսական եօթ գնդերի ընդհանուր հրամանատար իշխանաց իշխան Ախիջան Գարասէֆէրեանի ընդունարանն ու ննջարանը:

Մսրոն, զգուշութեամբ, ընդունարանի դրան մօտեցաւ, երեք անգամ կամացուկ հարուածեց: Դուռը բացուեց եւ իշխանաց իշխանի աւագ թիկնապահ Շաւարշը իր գլուխը դրան բացուածքից դուրս բերելով հարցրեց.

— Ի՞նչ ունես ասելու, Մսրօ:

— Սահմանագլխից Սրգոն ու Պաքիրն են եկել, շատ կարեւոր նամակ են բերել, անձամբ իշխանաց իշխանին յանձնելու:

— Լաւ, թող իսկոյն վեր բարձրանան, ես անմիջապէս կը զեկուցեմ:

Մարոն իսկոյն աստիճաններից վար իջաւ, իսկ Շաւարչը ընդունարանի դուռը փակելով, իշխանաց իշխանի ննջարանի դրան մօտեցաւ: Զգուշութեամբ դուռը դեռ չբացած, իշխանաց իշխանը ներսից հարցրեց:

— Ի՞նչ կայ, եկողն ո՞վ էր, Շաւարչ:

— Չերդ իշխանական մեծութիւն, սահմանագլխից սուրհանդակներ են եկել, կարեւոր նամակ են բերել. կարգադրեցի, որ վեր բարձրանան:

— Թող ընդունարանում սպասեն, — հրամայեց իշխանաց իշխանը եւ անկողնից դուրս գալով, սենեկակի վերարկուն ուսերին առաւ, թեթեւ կաղալով ընդունարան մտաւ:

Մէկ շաբաթ առաջ, իշխանաց իշխան Ախիջանը, սահմանագլխի պահակակէտերն ստուգելիս, զարիվեր բարձրանալու միջոցին, իր ձին սայթաքել էր եւ իշխանի ծունկը ժայռին զարնուելով վիրաւորուել, որի պատճառով, սահմանագլխի հսկողութեան ընդհանուր զեկավարութիւնը իր կրտսեր եղբօր - իշխան Յակոբյանին էր յանձնել ու տուն էր վերադարձել բուժուելու եւ հանգստանալու:

Քիչ յետոյ Սրգոն ու Պաքիրը ընդունարան մտան: Սրգոն բարեւի կանգնելով, մի քանի քայլ առաջ եկաւ ու գեկուցեց.

— Չերդ իշխանական մեծութիւն, Չեր եղբայր իշխան Յակոբյանը եւ Պաղըր Պէկը յանձնարարեցին մեզ այս նամակը անձամբ Ձեզ յանձնել, — Այս ասելով, Սրգոն, իր շալէ շապիկի ներքին գրպանից մի կնքուած նամակ հանեց եւ իշխանաց իշխանին յանձնեց:

Իշխանաց իշխանը նամակը վերցնելով իսկոյն բաց արեց ու սկսեց մտովին կարդալ: Նամակի պարունակութիւնը հետեւեալն էր.

— «Չերդ իշխանաց-իշխանական մեծութիւն Ախիջան Բէյ Գարասէֆէրեան-Սէֆէտինեան.»

Խոնարհաբար գալիս ենք Չեր տեղեկացնելու, որ

երէկ գիշեր մի պառաւ հայ մամիկ ներկայացաւ ու մեզ յանձնեց պարսից զօրաց ընդհանուր հրամանատար Մարաջախտ Ալլահվերդու նամակը, ուղղուած Զերդ Մեծութեան եւ Պաղըր Պէկին: Զգուշութեան համար, այդ նամակը սուրհանդակների միջոցով չուղեցինք ուղարկել, պահել ենք՝ մինչ Զեր վերադարձը: Մեծ զօրավարն իր նամակում Զեզ ՍիԲԵԼԻ եՂԲԱՅՐ է անուանում, Պաղըր Պէկին էլ՝ ԱՉՆԻԻ ԲԱՐԵԿԱՄ: Նա կրկնում է իր նախորդ նամակում արած առաջարկը, խոստանում է՝ մեր ապստամբութեան պարագային, առաջին իսկ օրը մեզ օգնութեան գալ: Գրում է, «Իր Արքայից-Արքայական մեծութիւն Շահ Ապասը նախընտրում է, որպէս զրացի ունենալ Հայ-քրտական մի խաղաղասէր իշխանութիւն, անշուշտ, իր պաշտպանութեան ներքոյ, քան ընչաքաղց սուլթանական թուրքիա, որը շարունակ ներս է առնում կենտրոնական Ասիայից ներխուժող վայրենի թուրքօ-թաթարօ-մոնղոլական ցեղերին: Եթէ այդպէս շարունակուի, կարճ ժամանակամիջոցում այդ վայրենիները ձեր հայրենիքում մեծամասնութիւն կը դառնան, ձեզ կը գերեն, կ'ոչնչացնեն ու վերջնականապէս տէր կը դառնան ձեր հայրենիքին: Իսկ ապստամբութեան պարագային, մեր օգնութեամբ, դուք կ'ազատագրուէք, խաղաղութիւն կը տիրի եւ մեր ժողովուրդները հնարաւորութիւն կ'ունենան, խաղաղ պայմաններում, աճել, զարգանալ ու տնտեսապէս ամրանալ»:

Մեծ զօրավարը խնդրում է, այս շաբթուան ընթացքում տեղեկացնել իրեն Զեր որոշումը, բանակցութեան օրն ու վայրը նշանակել: Այժմ սպասում ենք Զեր շտապ որոշումին: Մեծ իշխան, չէ՞ք կարծում, որ Մեծ զօրավարի այս առաջարկը ուշադրութեան արժանի է եւ պէտք է այս յարմար առիթը օգտագործել: Եթէ օրերս չպիտի վերադառնաք ճակատ, խնդրում ենք անմիջապէս յայտնէք մեզ Զեր որոշումը, որպէս զի կարողանանք ժամանակին տեղեակ պահել Մեծ Զօրավար Ալլահ-

վէրտուն:

Ի սրտէ ցանկանում ենք Զեզ կատարեալ ապաքի-նում:

Խոնարհօրէն՝ Զեր կրտսեր եղբայր,  
Յակորջան Գարասէֆէրեան եւ  
անկեղծօրէն՝ Զերդ Պաղըր Սալվի Պէկ  
11 Մայիսի 1606թ. ՍՌՆԱ»:

Նամակի ընթերցումից յետոյ, Իշխանաց Իշխանն իր գլուխը շարժելով, սկսեց ընդունարանում երթե-ւեկել եւ ապա, դառնալով Շաւարչին, հրամայեց.

— Սուրհանդակներն այսօր կարող են հանգըս-տանալ, վաղ կը վերադառնան: Իսկ դու, անմիջապէս մարդ ուղարկիր Ախմամար, Վեհափառ Գրիգորիսին, խնդրելու որ վաղուան փոխարէն՝ այսօր երեկոյեան քաղաք իջնի, շատ կարեւոր խնդրի շուրջ խորհըր-դակցելու:

Շաւարչն ու սուրհանդակները բարեւի կանգնելով, խսկոյն հեռացան ընդունարանից: Քիչ յետոյ պալատի սուրհանդակը դէպի Աղթամար կղզին ուղեւորուեց:

Իշխանաց Իշխան Ախման Երկրորդը, մենակ մնալով, խորասուզուած մտածմունքների մէջ, շարու-նակեց ընդունարանի երկայնքով անց ու դարձ անել:

Նա իր կեանքի 44-րդ տարին էր ապրում. բարձրա-հասակ էր ու թիկնեղ: Իմաստութիւն եւ հաստատամը-տութիւն արտայայտող նրա խոշոր կապուտակ աչքերը բոլորուած էին շիկահեր ու թաւ ունքերով, աղեղնա-ձեւ շրթունքներով պրկուած մեծ կամքի ուժ արտա-յայտող նրա բերանը շրջապատուած էր առատածիլ խնամուած շէկ պեխերով ու կարճ մօրուքով, որոնք ամ-բողջացնում էին նրա առնական արտաքինը:

Նրան մեծ մտահոգութիւն էին պատճառում իր կրտսեր եղբայր՝ Իշխան Յակորջանը եւ աւագ աշիրէ-թապիտ Պաղըր Սալվի Պէկը իրենց ըմբռստ եւ անմտած-ւած տրամադրութիւններով: Հայ-քրտական փոքրա-քանակ ուժերով ապստամբուելու չարդարացուող ծը-

բագիրներ էին որոճում: Իշխանաց իշխանը երեխայամտութիւն էր համարում նման քայլը: Նա համոզուած էր, որ Վանկուլիական գնդերն ու քրտական աշխրէթներ, նոր լրացումներով, եթէ անգամ 20,000ի հասնէին, այդ աննշան ուժով մէկ օր անգամ չպիտի կարողանային դիմանալ դէպի արեւելք արշաւող մեծ զօրավար Ամիրգունայի հարիւր հազարներէ բաղկացած բանակի՝ արիւնախում ենիչէրիների դէմ: Եւ մանաւանդ, որ համայն թրքական բանակը սպառագինւած էր նորագոյն զէնքերով, իսկ հայերն ու քրտերը հրազէններով լրիւ զինուած չէին, առաւելապէս զինուած էին սուրերով: Նման պայմաններում ապրստամբուելը՝ ինքնասպանութիւն կը լինէր, հայ եւ քիւրտ ժողովուրդների կատարեալ ոչնչացում:

## Գլուխ Բ.

Այդ նոյն կէսօրին, սահմանագլխում կանգնած քրտական երկրորդ աշիրէթի պետ Խալիլ պէկի որդին Մահմուտը, իր հօր յանձնաբարութեամբ, Պաշկալէ հասաւ՝ սահմանագլխում տեղի ունեցած անցուղարձերի մասին «զեկուցելու» գօրավար Թէմուր փաշային, որը մեծ գօրավար Ամիրգունայի բանակի մաս կազմող ենիչերական գօրաբաժինը Միջերկրականի հիւսիսային ափերից դէպի արեւելք էր առաջնորդում՝ Ամիրգունայի բանակին միանալու, Ատրպատականն ու Անդրկովկասը վերջնականապէս նուաճելու նպատակով:

Ամիրգունա մեծ գօրավարը միեւնոյն ժամանակ յանձնաբարել էր Թիմուր փաշային՝ քննել ու համակարգել նաեւ հայ Վանկուլիական գնդերի եւ քրտական աշիրէթների գործունէութիւնը հարաւ-արեւելեան սահմանագլխում:

Թէմուր փաշան 40-ն անց էր: Անյայտ ծագում ունեցող ենիչերի: Իր յախուռն ու համարձակ, եւ բացառիկ ընդունակութիւնների շնորհիւ, պարզ շարքային ենիչերուց գօրավարի աստիճանի էր հասել: Նրա խոր ընկած կանչ ու անժպիտ աշքերը՝ խորամանկութիւն եւ անզթութիւն էին ցոլացնում: Փնտռուած մասնագէտ էր նաեւ ուազմական հետախուզական եւ լրտեսական ցանցեր կազմակերպելու գործում: Նա, առանց գժուարութեան, իր ցանցում որսացել էր նաեւ Սոնայում կանգնած քրտական երկրորդ աշիրէթի պետ Խալիլ Պէյին, որը ի վարձատրութիւն իր «ծառայութեան» սպասում էր հինգ քրտական աշիրէթների աւագ աշիրէթապետը դառնալ: Սրա որդին Մահմուտը Պաշկալէ հասաւ, Թէմուր փաշայի տունը գտնելով, պահանջեց դրան մօտ կանգնած պահակից՝ իրեն իսկոյն

թէմուր փաշային ներկայացնել, աւելացնելով, որ շատ կարեւոր տեղեկութիւն ունի հաղորդելու:

Մահմուտի բացառիկ ճաշակով հագնուած լինելու հանգամանքը եւ նրա կողքից կախ ընկած արծաթեայ նախչուն պատեանով թուրի թողած տպաւորութեան մղումով, պահակապետն շտապեց զեկուցել այդ բացառիկ սուրհանդակի գալուստը: Քիչ յետոյ Մահմուտը թէմուր զօրավարի սենեակն առաջնորդուեց:

Ներս մտնելուն պէս զգաստօրէն բարեւի կանգնեց ու զեկուցեց.

— Զօրավար Պէյ իմ, ես գալիս եմ հարաւ-արեւելեան սահմանագլխից. Հայրս, Խալիլ պէկը յանձնարարել է ինձ հետեւեալ կարեւոր տեղեկութիւնները հաղորդել Ձեզ . . .

— Ախ ի հարկէ, յիշում եմ քեզ, — Մահմուտին ընդհատելով ասաց թէմուր պէյը, — առաջին անգամ հաւատարմագիրը դու բերիր. պատմիր տեսնեմ՝ ի՞նչ նորութիւններ ես բերել:

— Երէկ գիշեր, զօրավար պէյ, — շարունակեց Մահմուդը, — Հօրս վստահելի խոլամները լսել են Վանկուլի թակորջան պէյի եւ Պաղը Պէկի միջեւ տեղի ունեցած գաղտնի խօսակցութիւնը: Սրանք պարսից մեծ զօրավար Ալլահվէրտուց նամակ են ստացել, որով Ալլահվէրտին հրահանգում է՝ հայերին եւ քուրտերին ապստամբուել, պարսկական բանակի օգնութեամբ գրաւել արեւելեան Անատոլիան եւ հայ-քրտական իշխանութիւն հիմնել: Բայց քանի որ թակորջան պէյը եւ Խալիլ Պէկը ինքնուրոյն ոչինչ չեն կարող անել, ուստի երէկ գիշեր երկու սուրհանդակներ են ուղարկել Վան-Ախիջան պէյին, որը իր ոտքի վնասուցքի պատճառով տանը բուժւում է: Այս գիշեր կամ վաղ երեկոյեան սուրհանդակները վերադառնալու են Սոնա, անշուշտ պատասխանով:

Հայրս վստահ է, որ այս տեղեկութիւններով մեծ ծառայութիւն մատուցած կը լինի իր Սուլթանական նորին մեծութեան եւ Ձեզ:

— Գոհ եմ հօրդ եւ քո կատարած հաւատարիմ՝ ծառայութեան համար, — պատասխանեց Թէմուր Պէյը, — դուք, անշուշտ, արժանաւոր վարձատրութիւն կը ստանաք, — ապա կանչելով պահակապետին հրամայեց, — Կարգադրիր, որպէսզի Մահմուտն ու իր ծին կանոնաւոր հոգատարութիւն ստանան, այսօր երեկոյեան նա սահմանագլուխ է վերադառնալու։ Կարգադրութիւններդ անելուց յետոյ իսկոյն վերադարձիր, կարեւոր եւ շտապ յանձնարարութիւն ունես կատարելու։

Քառորդ ժամ չանցած պահակապետը վերադարձաւ ու զօրավար Թէմուր Պէյին ներկայացաւ։

— Դուռը փակիր եւ ուշադրութեամբ լսիր ինձ, Հիւսնի, — հրամայեց Թէմուր պէյը, — քսան վստահելի եւ արթուն զինուորներ կը վերցնես հետդ եւ այս կողմերին քաջ ծանօթ մի վալատ, եւ այսօր, երկու ժամ յետոյ կը մեկնես Վանից դէպի Սոնա տանող ճանապարհը։ Մի յարմար տեղ դարան կը մտնէք։ Վանից երկու սուրհանդակներ են գալու, սահմանագլխում հսկող երկու դաւաճանների նամակ են տանում։ Յանկարծակիի կը բերէք, ժամանակ չէք տայ, որ իրենց մօտ ունեցած նամակը անհետացնեն, ձեռներից կ'առնես եւ իրենց էլ, հսկողութեան տակ, Տիատին կը տանես, մեծ զօրավար Ամիրգունա փաշային կը յանձնես եւ իմ անունից կը զեկուցես ամբողջ եղելութիւնը։

Երկու ժամ յետոյ, Հիւսնին Մահմուդին ճամբուդնելուց յետոյ, ինքն էլ քսան զինուորներ հետն առած ճամբայ ընկաւ։

Գլուխ գ.

Այդ նոյն երեկոյեան Ախմամարի վեհափառ Գրիգորիս գ. Կաթողիկոսը քաղաք իջաւ. Գարասէֆէրեանենց պալատում կաթողիկոսներին տրամադրուած յարկաբաժնում տեղաւորուելուց յետոյ՝ Իշխանաց Իշխան Ալիքջան Բ.ի հետ խորհրդակցութեան նստեցին:

Մինչեւ կէս գիշեր մանրազնին քննեցին մեծ զօրավար Ալլահվէրտու առաջարկը եւ որոշեցին մերժել, քանի որ անիմաստ էր ու կործանարար նման քայլ առնելը:

Մինչոյն ժամանակ որոշեցին խստօրէն արգիլել Յակորջան իշխանին ու Պաղըր Պէկին հրապուրուել Շահ Ապասի խոստումներով, որի նպատակն է՝ Հայ եւ քուրտ ժողովուրդների անհեռանկար ապստամբութեամբ զրադեցնել թրքական բանակը, թուլացնել թրքական առաջիխաղացումը դէպի Կովկաս:

\* \* \*

Յաջորդ օր առաւտեան Հէքիմ Բարսեղը եկաւ, իշխանի ծունկի վէրքը քննեց, նոր վիրակապով կապեց ու պատկառանքով ասեց.

— Ձերդ իշխանական մեծութիւն, երկու օրից յետոյ կարող էք անգամ ձիարշաւի մասնակցել:

Իշխանաց Իշխանը գոհունակութեամբ ժպտաց ու չնորհակալութիւն յայտնեց:

Հէքիմ Բարսեղը իրեն մատուցուած օշարակը ըմպելուց յետոյ հրաժեշտ տուեց ու դուրս եկաւ:

Իշխանաց Իշխանը բազմոցի վրայ տեղաւորուելով, կանչեց իր սենեկապետ Մարկոսին՝ ցածրիկ զրասեղանը բազմոցին մօտեցնել:

Կենդրոնացած՝ մի քիչ մտածելուց յետոյ, գրիչը վերցրեց եւ հետեւեալ նամակը գրեց.

«Սիրելի եղբայր իմ իշխան Յակոբյան եւ յարգելի բարեկամ Պաղըր Սալվի Պէկ:

Սրգոյի եւ Պաքիրի միջոցով ձեր ուղարկած նամակն ստացայ:

Երէկ երեկոյեան Վեհափառ Գրիգորիսը քաղաք իջաւ եւ միասին մանրազնին քննելուց յետոյ Մեծ Զօրավար Ալլահվէրտու առաջարկը, ու ձեր «կարծիքը» մերժեցինք: Խորամանկ Շահ Ապասը կամենում է խորտակել թրքական առաջխաղացումը, կրկին տիրել մեր հայրենիքին ու նորից հարիւր հազարաւոր շինարար հայ արհեստաւորներին ու ճգնաժան գիւղացիներին բռնութեամբ իր յետամնաց երկիրը տեղափոխել, չահագործել, կեղեքել ու հարստացնել իր գանձանակը: Մենք մերժում ենք նրա միջամտութիւնը: Ի՞նչպէս կարող ենք երախտամոռ լինել Սուլթան Ահմէտի հանդէպ, որը աւարտու եւ գերի վարող պարսիկ բանակին մեր հայրենիքից վռնտեց, եւ որը վստահել է մեզ՝ անձամբ պաշտպանել մեր հայրենիքի սահմանները: Մենք իրաւունք չունենք մեր ժողովուրդների բախտի հետ խաղալ, նրանց մահացու վտանգի ենթարկել:

Այս նամակը պարզ պատասխան չէ, այլ պաշտօնական հրաման:

Աստուած ձեզ հետ:

Իշ. Իշխան Ախիջան Բ. Գարասէֆէրեան-Աէֆէտինեան 13 Մայիսի. 1606 թ. ի՝ Վան»:

Նամակագրութիւնն աւարտելով Իշխանաց Իշխանը Շաւարշին կանչեց ու հրամայեց սուրհանդակներին իրեն ներկայացնել:

Երբ Սրգոն ու Պաքիրը ներս մտան, Իշխանը, կնքուած նամակը Սրգոյին յանձնելով, պատուիրեց.

— Այս նամակը կը յանձնէք իշխան Յակոբյանին ու Պաղըր Պէկին: Զգուշութեան համար իսկական ասելիք-ներս նամակում չեմ գրել. Նրանց կողմից նամակս ընթերցելուց առաջ, իմ հետեւեալ բերանացի հրամանս կը հաղորդէք իրենց: Ուրեմն, ուշադրութեամբ լսեցէք, որպէսզի նոյնութեամբ կրկնէք նրանց ներկայու-

թեամբ: — Մեր կողմից, ինքնասպանութեան չափ կատարեալ անմտութիւն կը լինի այս օրերում գլուխ բարձրացնել: Առաջինը՝ մենք չենք կարող յոյս դնել շարունակ յաղթուող պարսկական բանակի վրայ, երկրորդ՝ մեր չնչին ուժերով մենք մէկ օր անգամ չենք կարող դիմանալ՝ նորագոյն զէնքերով զինուած թըրքական բանակի դէմ. նման արարք պատճառ կը դառնայ հայ եւ քուրտ ժողովուրդների զիսովին ոչընչացման: Այժմ մենք կարիք ունենք խաղաղութեան, մեր հայրենիքը վերակառուցելու: Այժմ անհրաժեշտ է շահագործուող ու յուսակտուր մեր ժողովուրդներին օգնել, գիտակցութեան բերել, նախապատրաստել: Նրանց մեծագոյն մասը տառապանքի, ընչազրկման, աղքատութեան եւ հալածանքի ենթարկուած՝ ոչ բարոյական, ոչ ֆիզիքական եւ ոչ էլ տնտեսական կարողութիւններ ունեն նման քայլ առնելու վճռականութիւն ունենալ. մի խօսքով, մենք կարող ենք միայն, զգուշութեամբ նրանց օգնել, նախապատրաստել՝ գալիք յարմարագոյն առիթներն օգտագործելու:

Եթէ մեզ, ներկայումս ապրող սերունդներիս, չըյաջողուի ազատագրուել, գէթ մենք հող պատրաստած կը լինենք գալիք սերնդների համար: Ուրեմն, պէտք է զգոյշ լինենք, խելացիօրէն գործենք: Խոհեմութիւնն ու զգուշութիւնը պահանջել են նամակումս մեր մերժումը այլ կերպ պատճառաբանել:

Ուրեմն, իսկական հրամանս սա է: Բարի ճանապարհ, Աստուած ձեզ հետ: Գիտցէք նաեւ, որ զուք ոչինչ չգիտէք, պարզ հրամանակատար զինուորներ էք. — Ապա իշխանաց իշխանը Շաւարշին դառնալով հրամայեց, — Տղաների պէտք եղած կարիքները հոգա՛ եւ անմիջապէս ճամբու դիր:

Շաւարշն ու սուրհանդակները հրաժեշտը տուին ու հեռացան:

Արեւը մար էր մտնում, երբ Սրգոն ու Պաքիրը, իրենց ձիերի մէջքին կքուած, իրենց եկած նոյն ճամբով քաղաքից դուրս սլացան:

### Գլուխ Դ.

Թէմուր պէյի թիկնապահ Հիւսնին արդէն տեղ էր հասել իր քսան հեծեալներով, Վալատի առաջնորդութեամբ:

Աղբակի լեռներից դէպի Սոնա տանող ճամբան անցնում էր մի կարճաձիգ կիրճի միջով, որի երկու կողմերում գտնուող ժայռերի ետեւում հեծեալները դարան էին մտել:

Ինչպէս գիտենք, Մրգոն ու Պաքիրը Մայիսի 13-ին էին Վանից դուրս եկել, որով, Հիւսնին իր հեծեալներով ստիպուած էին եղել 12-ի գիշերուանից մինչեւ 13-ի երեկոն սպասել: Մայիս 13-ի ամբողջ ցերեկը, զգուշութեան համար, իրենց ձիերը թագցրել էին մի լայնանիստ ժայռի ետեւում, չնայած համոզուած էին, որ եկող սուրհանդակները միայն գիշերով պիտի անցնէին այդ ճամբով: Երբ մթնեց, Հիւսնին հրամայեց զինուորներին՝ իրենց ձիերը թագստոցից դուրս բերել եւ կազմ-պատրաստ ճամբի երկու կողմերում գտնուող ժայռերի ետեւում սպասել:

Գիշերուան ժամը 11-ն անց էր. Լուսինը բարձրացել՝ երկնակամարի կենտրոնին էր հասել: Լուսնի եւ պարզ երկնակամարում փայլող աստղերի արձակած շողերով բաւարար չափով լուսաւորուել էր դարանակալների տեսութեան ու հսկողութեան տարածութիւնը:

Եւ ահա, Աղբակի լեռներին մաս կազմող գոգաւոր բարձունքից վար երկարող ճամբու վրայ երկու ձիաւորներ յայտնուեցին:

Հիւսնին թողեց նրանց մօտենալ. Երբ իրենց միջեւ եղած տարածութիւնը նուազեց, 15 – 20 մեթրի հասաւ, Հիւսնին վեց հեծեալներով եկողների դէմը կտրեց եւ կանչեց.

— Կանգ առէք, ովքե՞ր էք:

Նոյն վայրկեանին, ճամբու երկու կողմերից եւ

ետեւից Հիւսնիի միւս հեծեալները շրջապատեցին եկողներին:

Սրգոն ու Պաքիրը, յանկարծակիի եկած, իրենց ձիերը սանձեցին եւ Սրգոն անվախօրէն պատասխանեց.

— Սահմանապահ գնդերի սուրհանդակներ ենք, վանից ենք զալիս, շտապում ենք. բարի եղէք մեզ ճամբայ տալ:

Հիւսնին մօտեցաւ ու խստօրէն հրամայեց.

— Զօրաց ընդհանուր հրամանատար, մեծն Զօրապար Ամիրգունա փաչայի հրամանով դուք բանտարկուած էք, որպէս կասկածաւոր անձերի: — Եւ իսկոյն սուրհանդակներին զինաթափ արեց:

— Մեզ ձերբակալելու իրաւունք չունէք, մենք էլ ձեզ նման, օսմանեան բանակի զինուորներ ենք եւ մեր հրամանատարների հրամաններն ենք կատարում:

— Լոփ'ր, — խստօրէն գոչեց Հիւսնին, — եթէ քեզ օսմանեան բանակի զինուոր ես համարում՝ պարտաւոր ես ենթարկուել հրամանատարներիդ: — Ընդդիմանալն անիմաստ էր այլեւս: Սրգոն ու Պաքիրը հասկացան, որ մատնուած էին:

Զինաթափութիւնից յետոյ Հիւսնին սկսեց խուզարկել սուրհանդակներին: Սրգոյի շալէ շապիկի ներքին գրպանում գտաւ կնքուած նամակը եւ արհամարհող ժպիտն երեսին գոչեց.

— Դէ՛, հիմա առաջ ընկէ՛ք, թուրք բանակի «հաւատարիմ» զինուորներ . . .

\* \* \*

Արշալոյսր բացուել էր, երբ Հիւսնին, իր 20 հեծեալներով Տիատին հասան:

Հիւսնին, ընդհանուր հրամանատար Ամիրգունա զօրավարի սպայակոյտի շէնքը գտնելով, հերթապահ պահակապետից խնդրեց՝ իսկոյն յայտնել Մեծ Զօրավարին, որ զօրավար Թէմուր Փաչայից սուրհանդակներ են եկել, ձերբակալուածներ են բերել եւ շատ կարեւոր

տեղեկութիւններ ունեն հաղորդելու:

Պահակապետը շտապ ներս գնաց եւ քիչ յետոյ վերադառնալով Հիւսնիին Մեծ Զօրավարի սենեակն առաջնորդեց:

Հիւսնին, զգաստօրէն բարեւելուց յետոյ, Մեծ Զօրավարին յանձնելով Սրգոյի գրպանից հանած նամակը, մանրամասն զեկուցեց իր ստացած յանձնարարութեան ու գործադրման մասին:

Ամիրգունան, ծրարը բանալով, երբ տեսաւ հայերէն գրուածքը, մի քիչ մտածելուց յետոյ, հրամայեց պահակապետին՝ իսկոյն իր մօտ բերել Տիատինի հայ քահանային եւ դպիրին:

Կէս ժամ չանցած, զօրավարին ներկայացան Տիատինի քահանան Տէր Պօղոսը եւ իր դպիր Ապրօն:

Ամիրգունան, իշխան Ախիջանի գրած նամակը ցոյց տալով քահանային ու դպիրին ասաց.

Հիմա ձեզ առանձին առանձին, կողքի սենեակն եմ տանելու եւ միայն իմ ներկայութեամբ, բառ առ բառ պիտի թուրքերէնի թարգմանէք այս նամակի պարունակութիւնը, եթէ ձեր երկուսի թարգմանութիւնների մէջ ամենափոքր տարրերութիւնն անգամ գտնեմ, գիտցէք, որ դուք ձեր ծնուած օրը պիտի անիծէք . . .

Անշուշտ, քահանան ու դպիրը, իրարմից անջատ, առանձին առանձին, նոյնութեամբ թարգմանեցին նամակը:

Մահուան սպառնալիքի տակ, քահանան ու դպիրը երգուեցին՝ այդ նամակի դոյութիւնն ու իրենց կատարած դերը մոռանալ յախտեան, որից յետոյ ահակալուած տուն վերադարձան:

Ամիրգունան հրամայեց Սրգոյին ու Պաքիրին ներս բերել:

Քիչ յետոյ Սրգոն ու Պաքիրը ներս մտան, զգաստօրէն բարեւեցին եւ արձանացած կանգ առին:

Ամիրգունան աչքի տակով երկուսին զննելուց յետոյ, սրանց զգաստ ու բացառիկ զինուորական կեցուածքից հրապուրուած, մեղմութեամբ հարցրեց.

— Դուք օսմանեան մեծ բանակի զինուոր լինելու պատիւն ունէք, պէտք է անկեղծ ու ճշմարտախօս լինէք ձեր հրամանատարների առջեւ ուրեմն, ճիշդն ասացէք, դուք ծանօթ էք սահմանագլխից վան տարած նամակի պարունակութեան:

— Ոչ, զօրավար պէյ. երդւում ենք, մենք անտեղեակ ենք այդ նամակի պարունակութեան: Մենք պարզ զինուորներ ենք, պարտաւոր ենք անխօս կատարել մեր հրամանատարների հրամանները: Կնքուած նամակը իշխան Ախիջան պէյին ենք յանձնել, — հաստատուն ձայնով պատասխանեց Սրգոն:

— Ախիջան պէյը բացի այս նամակից ուրիշ յանձնարարութիւններ չարեց, — իր զննիչ հայեացքը Սրգոյի աչքերում թափանցելով հարցրեց Ամիրգունան:

— Ոչ, զօրավար պէյ. միայն մենք ականատես եղանք, թէ ինչպէս Ախիջան պէյը, մեր յանձնած նամակը կարդալուց յետոյ, դժգոհութեամբ իր զլուխը չարժեց:

Զօրավարը, կրկին մեղմութեամբ, Սրգոյին ու Պաքիրին դիմելով ասաց.

— Կարգապահ եւ արթուն զինուորներ էք երեւում, հաւանեցի ձեր կեցուածքին. գնացէք հանգստացէք, — ապա դառնալով պահակապետին, հրամայեց,

— Սրանք մի քանի օր մեզ մօտ են մնալու, կանոնաւոր հոգա, թող լաւ հանգստանան:

Երբ հերթապահը սուրհանդակների հետ սենեակից դուրս եկան, Ամիրգունան Հիւսնիին կանչեց ու հրամայեց.

— Այսօր երեկոյեան անմիջապէս Պաշկալէ կը վերադառնաս, իմ անունից թէմուր Պէյին կը յանձնարես՝ անմիջապէս Սոնայի վրայով դէպի մեզ շարժուի, Սոնայում վանկուլի Յակորջանին եւ Պաղը պէկին իր հետ վերցնի եւ ինձ ներկայացնի:

Հիւսնիի հեռանալուց յետոյ, նոյն սենեակում նստած իր տեղակալ Զօրավար Վէհիալ փաշային դառնալով Ամիրգունան ասաց.

— Գիտեմ, որ Ախիջան պէյը, այս դէպքի բերումով, ինձ այցելութեան պիտի գայ: Նա վանկուլիների ընդհանուր հրամանատարն է. քուրտ աշխրէթների մօտ էլ մեծ հեղինակութիւն է վայելում: Թող գայ, յարմար առիթ է սա, նրա հետ կը պարզենք ու կ'որոշենք վանկուլիներին եւ աշխրէթներին յանձնարարելիք դերն ու պարտականութիւնները: Մեր դէպի կովկասի եւ Ատրապատականի խորքերն արշաւելու ընթացքում նրանք մեծ դեր կարող են կատարել մեր թիկունքի ապահովման եւ ամրացման գործում: Ախիջան պէյը միակն է, որը ընդունակ է այդ պարտականութիւնը կատարել: Նախելացի, փորձառու եւ իրատես մարդ է. համոզուած է, որ մեր զօրութեան դէմ ամէն տեսակի ապատամբական արարք անմտութիւն է եւ մահարեք: Անչուշտ, եթէ հայերն ու քրտերը միջոցներ եւ կարողութիւններ ունենային ու փոխադարձ վրատահութիւն իրարու հանդէպ, հէնց նոյն Ախիջան պէյի ընդհանուր ղեկավարութեամբ կ'ապատամբէին: Ինչպէս գիտէք, մենք այդ բոլոր «կարելիութիւններից» ամէն կերպ աշխատում ենք զրկել այդ երկու վասալ ազգութիւններին: Զնայած որպէս այդպիսին եմ նայում Ախիջան պէյի վրայ, բայց, այնուամենայնիւ, համակրանք ունեմ այդ մարդու եւ իր ընտանիքի հանդէպ: Քանից առիթներ եմ ունեցել թափանցել նրա ներքին աշխարհում, զննել եւ համոզուել եմ, որ բազմակողմանի կարողութիւնների տէր, բարեսիրտ, ազնիւ եւ հիւրասէր մարդ է. նոյնպէս նաեւ նրա խաթուն մայրը: Մի քանի անգամ երբ հիւրասիրել են ինձ, հարազատ մօր նման գուրգուրացել է վրաս: Մի անգամ իրենց հիւրեղած միջոցին, վատ էի զգում ինձ, անկողնում պառկած էի, տաքութեան մէջ տառապում էի, այդ ազնիւ կինը օրերով չէր հեռանում սնարիցս: Ափսոս, շատ ափսոս, որ կավուրներ են . . .

## Գլուխ Ե.

Յաջորդ օր, կէսօրից առաջ Հիւսնին Պաշկալէ հասաւ:

Մանրամասն զեկուցումով յայտնեց Թէմուր փաշային՝ Ամիրգունա զօրավարին հրամանը:

Թէմուր պէյ Հիւսնին ուշադրութեամբ լսելուց յետոյ հրամայեց նրան հազարապետ Խուրչուտին եւ զօրամասի մատակարարին իր մօտ կանչել:

Քիչ յետոյ հազարապետ Խուրչուտը ներս մտաւ եւ բազմոցի վրայ տեղ գրաւեց. նոյն միջոցին ներս մտաւ նաեւ բանակի մատակարարը:

Թէմուր պէյը նախ մատակարարին դիմեց՝ հրամա-յելով.

—Այսօր երեկոյեան դէպի արեւելք ենք շարժը-մելու, եթէ սննդամթերքների պակաս ունես, իսկոյն լրացրու: Զմոռանաս սպաների համար իւղ, պանիր եւ դավուրմա մթերել:

Մատակարարի հեռանալուց յետոյ, Թէմուր պէյը դիմեց հազարապետին.

— Առաջապահ հեծեալ գունդին կը միացնէք նաեւ երկրորդ հեծեալ գունդը, որոնց ես Սոնա եմ առաջնորդ գելու, իսկ դուք մնացեալ զօրասիւներով կը յառաջանաք դէպի Հիլ, սահմանագծի երկարութեամբ կը շարժուէք դէպի Սոնա. վաղ չէ միւս օր ես էլ այնտեղ կը հասնեմ, որտեղից միասին կը դիմենք դէպի Տիատին՝ Ամիրգունա մեծ զօրավարի բանակին միանալու:

### Գլուխ Զ.

Իշխան Յակոբյան եւ Պաղըր պէկը առաջապահ դիրքերն ստուգելուց վերադարձան, կարծելով, թէ Սրգօն ու Պաքիրը արդէն վերադարձել էին: Բայց երբ իմացան որ դեռ չեն եկել, մտատանջութեան մատնուեցին,

— Անցեալ գիշեր, կամ այս առտու կանուխ պէտք էր որ վերադառնային, բայց այսօրն էլ, կէսօրն արդէն անցաւ, զեռ չկան, — անհանգստութեամբ համակուած ասեց իշխան Յակոբյանը:

— Երեւի մեծ Պէյը նրանց պահել է, որպէսզի միասին գան, — իշխանին յուսագրելու համար, բայց ինքն էլ իր ասածին լրիւ վստահութիւն չտածելով, պատճառաբանեց Պաղըր պէկը:

— Ոչ, Մեծ պէյը գիտէ, որ մենք անհամբերութեամբ սպասում ենք իր պատասխանին: Այսօր առտու, արդէն մի երկիւղ ծագեց մէջս: Երէկուանից ի վեր Խալիլ Պէկի որդին՝ Հիւսնին անհետացել է. անդրադարձիր նաեւ, երէկուանից ի վեր Խալիլի բռնազրուիկ քաղաքավարի ու թագուն հեղնական վերաբերմունքին մեր հանդէպ: Նա իր կեղասոս խաղը շարունակում է: Այժմ հաւատում եմ, որ նա լրտեսել է մեզ, իմացել է մեր նամակ ստանալու եւ Վան նամակ ուղարկելու մասին ու Սրգոյին եւ Պաքիրին որսալ է տուել, մեր նամակը բռնուել է: Այդ նշանակում է մեր վերջը . . . : Լաւ, որ դու քո ընտանիքը Զգրիումն ես թողել, նրանց վտանգ չի սպառնում, իսկ ես, կնոջս ու երեխաներիս՝ Կոտորոց բերդի մօտ գտնուող մեր դղեակը բերի, ամառնային արձակուրդի, եւ վտանգաւորը նա է, որ դղեակը գտնուում է Թէմուր Փաշայի բանակի առաջխաղացման ճամբու վրայ: Ես պէտք է, որ անմիջապէս դղեակ մեկնեմ եւ ընտանիքս Վան տեղափոխել տամ: Վաղ կէսօրին կը վերադառնամ: Քեզ եմ յանձնում սահմանագլխի հսկողութեան պատասխանատւութիւնը,

մինչ վերադարձու:

\* \* \*

Իշխանուհի Սաթենիկը, իր չորս իշխանազուն զաւակների հետ, սպասարկողներով, նաժիշտներով ու պահակներով շրջապատուած, հանգստանում էր Կոտորոց բերդի բարձունքից մի քանի հարիւր մեթր վար, կարմիր գետի կանաչազարդ ափին գտնուող դղեակում:

Ուշ երեկոյ էր արդէն, իշխանուհին հայելու առջեւ նստած, վառուող մոմի լոյսի տակ, իր մազերն էր կարգի բերում, պատրաստում էր անկողին մտնել: Իր ննջարանին կից, աջ կողմի սենեակում, նաժիշտ Աստղիկի հսկողութեան ներքոյ, ննջում էին երեք փոքրիկ իշխանուհիներ՝ 8 տարեկան Շուշանիկը, 6 տարեկան Շամրիկը եւ 4 տարեկան Գոհարիկը. իսկ ձախ կողմի սենեակում, դայեակ-ստնքատու Սալրիի հսկողութեան ներքոյ, ննջում էր ութնամսեայ իշխանիկ Վահագն:

Սալրին Խառակոնիս գիւղիցն էր: 10 տարեկան հասակում որբ էր մնացել. իշխանական տան տնտեսավար Մարկոսի միջնորդութեամբ Գարասէֆէրեանների պալատն էր բերուել՝ փոքր երեխաններին հսկելու:

Այստեղ նաև, իշխանական երեխաններին հաւասար, կրթուել էր, գրել կարդալ էր սովորել, տիրապետել էր հայերէն եւ թուրքերէն լեզուներին: 17 տարեկան հասակում ամուսնացրել էին պալատի սեղանապետի որդու հետ, բայց, գժրախտաբար, մէկ տարի յետոյ ամուսինը արկածի զոհ էր դարձել, որից յետոյ, իշխանուհի Սաթենիկը նրան վերցրել էր, որպէս իր զաւակների ստնքատու-դայեակ: Սալրին այժմ արդէն 20 տարեկան էր, հոլանի, կիրթ ու գրաւիչ գեղեցկուհի էր դարձել:

Իշխանուհին ուզում էր անկողին մտնել, երբ լսեց դղեակի դրան կանգնած պահակի ձայնը: Նա ուզեց Սալրիին կանչել ու դուրս ուղարկել՝ իմանալու համար

թէ եկողներն ովքեր են. ճիշդ այդ միջոցին լսեց դղեակի բակը մտնող ձիերի սմբակների տրոփիւնը եւ ապա մէկ բոպէ չանցած, իշխանուհու ննջարանի գուռը կամացուկ ծեծուեց եւ առանց արտօնութիւն ստանալու, Յակոբջան իշխանը ձեռները տարածած ներս վազեց եւ իշխանուհի Սաթենիկին իր գիրկն առաւ:

Իշխանուհին, չփոթուած իր ամուսնու դէմքին նայեց, նրա աչքերում նկատելով իրեն անսովոր, մի տարօրինակ արտայայտութիւն, ուզեց հարցնել նրա անժամանակ գալու պատճառը, բայց իշխանն զգալով այդ, իշխանուհուն էլ աւելի սեղմելով իր կրծքին մրմնջաց.

— Մի՛ անհանգստանայ, հոգիս, վտանգաւոր ոչինչ չկայ: Պէտք է պատրաստուէք վաղ-առտու կանուխ Վան վերադառնալ: Պատճառը մի հարցնի, սիրելիս, յետոյ կը բացատրեմ. տուն էք վերադառնում՝ այնտեղից ամբողջ տոհմով Արտամետի այգեզարդ մեծ ամրոցում հանգստանալու:

Քիչ յետոյ դղեակի բոլոր սպասաւորներն ու իշխանի հետ եկած զինուորները սկսեցին իրեղէններ կապկակել ու վար իջեցնել:

### Գլուխ Է.

Այդ նոյն օր կէսօրից յետոյ, երբ իշխան Յակոբ-ջանը իր 12 զինուորներով դէպի Կոտորոց բերդն արշաւեց, դաւաճան Խալիլ պէկը, իր որդուն - Մահմուրին կրկին ուղարկեց թէմուր փաշային ընդառաջ յայտնելու, թէ իշխան Յակոբջանը իր ձիաւորներով դէպի Կոտորոց բերդը մեկնեց, ըստ երեւոյթին, այնտեղ սպասող ապստամբ ուժերին միանալու:

Երեք ժամ յետոյ Մահմուրը Աղամակերտի մօտ թէմուր փաշայի առաջապահներին հանդիպեց, որոնք նրան իրենց զօրավարին ներկայացրին:

Զօրավարը Մահմուրին լսելուց յետոյ, իր մօտ կանչեց գնդապետ Համիտին ու պատուիրեց.

— Ես առաջին գունդը կ'առնեմ ճանապարհից կը շեղուեմ, դէպի Կոտորոց բերդն եմ գնալու, իսկ դուք, մնացեալ գնդերով դէպի Սոնա կ'ուղեւորուէք, Պաղըր պէկին կը ձերբակալէք եւ իմ գալստեան կը սպասէք:

Թէմուր պէյի բանակը հապճեպօրէն երկու մասի բաժանուեց եւ տարբեր ուղղութիւններով առաջ ընթացան:

### Գլուխ Բ.

Արեւը դեռ չծագած կարմիր գետի ափին գտնուող դղեակում սպասաւորներն ու զինուորները զբաղուած էին կապոցները ճամբու վրայ սպասող սայլի ու երկու կառքերի վրայ տեղաւորելով։ Կտաւեայ առաստաղով ծածկուած կառքի մէջ ներքնակներ, վերմակներ ու բարձեր էին դասաւորում՝ իշխանական ընտանիքի համար։

Իշխանուհի Սաթենիկը իր երեք փոքրիկ իշխանուհիների հետ գուրս էին եկել եւ ճամբու եղերքին սպասում էին, դայեակ Սալբին, իշխանաղուն Վահագնին մետաքսեայ վերմակի մէջ փաթաթած, դղեակի աստիճաններից նոր վար էր իջնում։

Ճիշդ այդ վայրեկեանին, անսպասելիօրէն, ճամբով մօտեցող բազմաթիւ ձիաւորներ իրենց սուսերը ճօճելով վրայ հասան ու մի հրամայող ձայն որոտաց։

— Անխնայօրէն կոտորել դաւաճան կավուրներին . . .

Իշխան Յակոբյանը հասկացաւ, որ իրենք մատնուած են, դաւաճան Խալիլ պէկի սարքած դաւադրութեան զոհ են գնալու, ենիչէրիները խնայել չգիտեն։ Նա առանց իրեն կորցնելու, տիրական ձայնով հրամայեց իր թիկնապահներին ու դղեակի պահակներին։

— Ի գէն, իմ հերոսներ, պատուով մեռնենք։

Իրենց ձիերին հեծնելու ժամանակ չունենալով, իշխանն ու զինուորները միայն իրենց սուսերը հանելով, շրջապատեցին իշխանական ընտանիքին եւ մեկնողներին ճամբու դնելու համար գուրս եկած դղեակի կառավարչի ընտանիքին եւ սկսեցին յամառօրէն պաշտպանուել։

Իրենց ձիերին նստած, թուով հարիւրապատիկ անգամ աւելի դահիճների յանկարծակի ու կատաղի

զրոհին մի բուռն հերոսներ երկար չկարողացան դիմանալ, արիւնոտ հաշուեյարդարը շատ կարճ տեւեց:

Գազանացած ենիչէրիները չինայեցին կանանց ու երեխաներին անգամ: Արիւնով արբած իւրաքանչիւր ենիչէրին հաճոյք էր համարում իր թրի հարուածներով աւելորդ անգամ թրատել՝ արդէն արեան մէջ թպրտացող կիսակենդան մարմինները: Եւ ապա, ընկած դիակները իրենց ձիերի սմբակների տակ տրորելով, թէմուր փաշայի առաջնորդութեամբ, դիմեցին դէպի դղեակ:

Սալրին, Վահագնին գրկած, դղեակի դրան ետեւը կանգնած, կիսարաց գոնից տեսաւ թէմուր փաշայի ու ենիչէրիների գազանութիւնները:

Առջեւից արշաւող թէմուր փաշան դեռ դղեակի դրան չէր հասել, երբ Սալրին ուչքի գալով որոշեց իր անելիք՝ Վահագնին իր երկու ձեռների վրայ բռնած, դղեակի դուռ բաց արեց, թէմուր փաշայի դիմաց ծունկի եկաւ, Վահագնին զօրավարին պարզելով, մաքուր թուրքերէնով, աղաչական ձայնով կանչեց.

— Պէյ իմ, ի սէր Ալլահի, խնայեցէք այս անմեղ արարածին:

Թէմուր փաշան տեսնելով յանկարծակի յայտնուած կրծքաբաց ու չէկ մազերը ուսերին փռած գեղեցկուհուն, իր ձին սանձելով կանչեց.

— Վեր կաց, հուրի փէրի, ինձ մօտեցիր:

Երբ Սալրին, դեռ իր պարզած ձեռների վրայ Վահագնին պահած թէմուր պէյին մօտեցաւ ու ահակալուած կանգ առեց, թէմուրը մի ըոսէ անշարժացած Սալրուն եւ անմեղօրէն իրեն նայող գեղատեսիլ Վահագնին դիտեց, իր ձիու վրայով կռացած, միայն Սալրին լսելի ձայնով շշնջաց.

— Ես կը խնայեմ ե՛ւ քո, ե՛ւ այդ մանկիկի կեանքը, եթէ դու իմ պայմաններն ընդունես:

— Պէյ իմ, ես կ'ընդունիմ Ձեր կողմից առաջարկը-ւելիք պայմանները, միայն թէ խնայեցէք այս անմեղ արարածին, ես նրա ստնքատուն եմ:

Սալրին այդ ըոսէին գիտակցեց, որ իր կեանքը, իր

էութիւնը ամբողջովին զոհաբերելու է յանուն վահագնի կեանքի փրկութեան եւ չպիտի մոռանայ թէմուր պէյի արիւնալի արարքը։ Եւ ապա, ճամբու վրայ, արեան լճակներում փոռւած դիակներին նայելով, իր հոգու խորքում երդուեց՝ յարմար առիթին վրէժինդիր լինել։

Թէմուր պէյը դառնալով իր հաւատարիմ թիկնապահին հրամայեց։

— Իքրամ, ճամբու վրայի մէկ կառքը կը յարմարեցնես ու կը տրամադրես այս կնոջ ու երեխային, ամէն ինչով կը հոգաս ու կը միացնես մեր կարաւանին։ Գիտցիր, որ սրանք իմ անձնական հովանաւորութիւնն են վայելում։

\* \* \*

Երեք օր յետոյ թէմուր պէյը Տիատին հասաւ ու միացաւ Ամիրգունա զօրավարի բանակին ու ներկայանալով Ամիրգունա զօրավարին՝ զեկուցեց Կարմիր գետի ափին կատարած իր «խիզախութեան» մասին, տասնապատիկ անգամ չափազանցելով, նկարագրեց, թէ ինչպէս է շրջապատել ապստամբ իշխան Յակոբջանի գունդը եւ զլիովին ոչնչացրել։ Բայց, անշուշտ, թագցնելով կանանց ու երեխաներին սրախողիսող անելն ու Մալրիին եւ Վահագնին սեփականացնելը։

Մեծ զօրավարը լսելով թէմուր պէյի զեկուցումը, զոհունակութեամբ նրա ուսին զարնելով ասեց։

— Էաւ էք արել, զօրավար, թող դա միւսների համար դաս լինի, — եւ ապա, ոչ դատապարտելու նպատակով, այլ ի տեղեկութիւն, ժպտալով շարունակեց, — միայն մի տհաճութիւն պիտի վերապրեմ ես, Յակոբջանը մեծ վանկուլի Ախիջան պէյի կրտսեր եղբայրն էր։ Ախիջան պէյը արժէքաւոր բարեկամս է, գիտեմ, որ այդ խնդրով նա անպայման ինձ այցելութեան է գալու, բայց ոչինչ, հոգ մի անի, մենք ենք դրութեան տէրն ու դատաւորը, կ'աշխատեմ

նրա սիրտն առնել, մի կերպ կը չքմեղանանք, չպէտք է նրան խրտչեցնել, նա կարող է իր հեղինակութեամբ մեզ օգտակար լինել:

**Գլուխ թ.**

Զօրավար Թէմուր պէյը, Տիատին քաղաքի հրապարակի վրայ նայող տներից մէկում տեղաւորուելուց յետոյ, կանչեց իր թիկնապահներից մէկին ու յանձնարեց՝ Տիատինում տեղաւորուած նորեկ մահմեղական համայնքի մոլլայից մի Ղուռան եւ տեղացի հայ քահանայից էլ մի Աւետարան բերել, յաջորդ օր վերադնելու պայմանով։

Ուշ գիշեր էր արդէն։

Թէմուր պէյը իր սենեակում մենակ նստած ցածրիկ սեղանի շուրջ, մոմի աղօտ լոյսով լուսաւորուած սենեակի անկիւնին էր յառել իր հայեացքը ու խորասուզւել խոր մտածմունքի մէջ։ Նա անդրազառնալով ծնողական գուրգուրանքից գուրկ իր մանկութեան օրերին, ապա ենիշէրիական դաստիարակութեան խիստ ու դաժան շրջանին, որի ընթացքում ներշնչել էին նրա հոգում բնութեան անողոք օրէնքը «ոչնչացրու, որ քեզ չը ոչնչացնեն», դառնացաւ, աւելի ատելութեամբ լիցուեց հանդէպ մարդկութեան։ Նա 10 տարիներէ ի վեր երկու կին ունէր, բայց ինք անպտուղ էր։ Այդ հանգամանքն աւելի էր խորացրել նրա հոգում ատելութիւնը հանդէպ մարդկութեան։ Բայց մէկէն երբ նայեց իր սենեակում բացուղ դրան, նրա սրտում մի նոր ու անծանօթ զգացմունք շարժուեց, մի յոյս կայծկլտաց՝ ոռոգելու իր քարացած սիրտը, իր չորցած հոգին մի նոր կենսատու աւիշով, ու մտմտաց, — «Այո, Ալլահը զթաց վրաս, այնտեղ — դրան յետեւումն են ինձ պարգեւած մի մանչ զաւակ ու մի հրաշագեղ կին»։ — ու նա, վճռական շարժումով իր տեղից վեր կացաւ, մօտեցաւ իր սենեակում բացուղ դրան, առանց դուռը ծեծելու, կամացուկ բացեց ու ներս մտաւ։

Սալրին, նստած մուշ մուշ ննջող վահագնի

սնարին, երբ տեսաւ զօրավարի ներս գալը, ուզեց ոտքի կանդնել:

Թէմուր պէյը Սալրիին մօտենալով, մանկիկին չզարթեցնելու համար, կամացուկ շշնչաց.

— Մէկ րոպէով սենեակս մտիր, խոստումդ երդումով հաստատելու:

Երբ երկուսով կողքի սենեակը մտան, թէմուր պէյը, սեղանի վրայ դրուած Աւետարանն ու դուռանը ցոյց տալով ասաց.

— Զեռներդ դիր ձեր աւետարանի ու մեր Ղուռանի վրայ եւ երդուիր Ալլահի առջեւ ու իմ ներկայութեամբ, որ դու Կարմիր Գետի ափին տեսածդ յաւիտեանս պիտի մոռանաս, երբեք, երբեք չպիտի յիշես. երդուիր, որ դու ամէնուրեք պիտի ասես, թէ դու մէկ ու կէս տարի սրանից առաջ իմ կինն ես եղել, երդուիր, որ ամէնուրեք պիտի ասես, թէ կողքի սենեակում ննջող մանչուկը՝ մեր երկուսի – իմ եւ քո հարազատ զաւակ Մուրատն է:

Սալրին իր աջ ձեռքը Աւետարանի եւ ձախ ձեռքը Ղուռանի վրայ դնելով, նախ իր մտքում խնդրեց Աստծուց, որ իրեն ների այդ բռնի ու սուտ երդման համար եւ ապա կրկնելով իր մտքում վրէժինդիր լինելու իսկական երդումը, դողացող ձայնով մրմնջաց.

— Երդուում եմ, պէյ իմ:

### Գլուխ Փ.

Ցաջորդ առաւօտեան մթնչաղին Մահմուտը Սոնայի մօտ աճող եղէգների միջով, աննկատելիօրէն, իր հայ Խալիլ պէկի բանակատեղը մտաւ, պատմեց իր կատարած յանձնարարութեան մանրամասնութիւնները եւ ապա աւելացրեց.

— Հայր, դու պէտք է զգոյշ լինես, նոր հաստատուն փաստեր պիտի ունենաս, որպէսզի նպատակիդ հասնես:

— Վատահ եղիր, տղաս, թէմուր պէյը իր տուած խոստումը կը կատարի:

Խալիլ պէկը իր մօտ կանչեց իր երկու վստահելի թիկնապահներին եւ յանձնարարեց՝ հետեւել Պաղըրը պէկի բանակատեղում տեղի ունեցող անցուդարձերին:

Թիկնապահները Խալիլ պէկի վրանից վերադառնալիս, որպէս թէ փսփսալով, բայց լսելի ձայնով խօսակցում էին: Մէկը միւսին ասեց.

— Հստ երեւոյթին, մեր պէկը, օգտուելով մեծ իշխան Ալիխանի բացակայութիւնից, իր երկու հակառակորդներին ու նրանց սուրհանդակներին որսալ է տուել:

Պաղըրը պէկն էլ անգործ չէր նստել, նրա «Աչք ու Ականջներն» էլ հետեւում էին Խալիլ պէկի շարժումներին:

Այդ Ականջներից մէկը, լսելով Խալիլ պէկի թիկնապահների խօսակցութիւնը, իսկոյն հազորդեց Պաղըրը պէկին իր լսածները:

Պաղըրը պէկը անհանգստութեան մատնուեց, գնաց Ցակործան իշխանին փոխարինող Վանկուլի Կարապետ Աղայի վրանը եւ իր ստացած տեղեկութիւնները հաղորդելով, աւելացրեց.

— Կարապետ աղա, ակնյայտ է, որ Սրգոյին ու Պաքիրին որսացել են եւ իշխան Ցակործանին էլ

ծուղակն են նետել. պարզ է, որ մենք էլ ենք վտանգուած. մեզ կարող է փրկել միայն մեծ իշխան Ախիջան Պէյը՝ իր հեղինակութեան եւ Ամիրգունա մեծ զօրավարի հետ ունեցած բարեկամական կապի չնորհիւ։ Քո թիկնապահներից երկուսին իսկոյն Վան ուղարկիր եւ Մեծ իշխանի օգնութիւնը խնդրիր։

— Ցերեկով մարդ ուղարկել վտանգաւոր է, — պատասխանեց Կարապետ Աղան, — դաւաճան Խալիլը կը նկատի ու նոր դաւեր կը լարի. պէտք է սպասել մինչեւ մութն ընկնի։

### Գլուխ ԺԱ.

Արշալոյսը բացւում էր: Վանկուլի Կարապետ Աղայի երկու սուրհանդակները վան տանող ճանապարհով մօտենում էին Կոտորոց քերդին: Դեռ Կարմիր գետի ափին գտնուող դղեակին չմօտեցած, հեռուից դղեակի դրսի դրան առջեւի ճամբու վրայ փռուած մարմիններ նկատեցին: Նախ իրենց աչքերին չհաւատացին, բայց երբ աւելի մօտեցան՝ զարհուրանքով տեսան արեան լճակների մէջ երկարած քսանից աւելի մարդկային մարմիններ:

Նրանք իսկոյն իրենց ձիերից վար իջան ու դիակներին մօտեցան. երբ ճանաչեցին անհամար անգամ թրահարուած իշխան Յակոբջանի, իր ընտանիքի անդամների, նրա թիկնապահների դիակները, ջղագարային ցնցումով իրենց այլայլուած դէմքերը բռնեցին ու լալկուած իրենց տեղերում արձանացած՝ կանգնած մնացին:

Ճերջապէս սթափուեցին: Չնայած հրամայուած էր առանց ժամանակ կորցնելու վան հասնել, բայց ի՞նչպէս կարելի էր անտարբերութեամբ նահատակների դիակները զիշատիչների քմահաճոյքին թողնել ու հեռանալ: Իսկոյն դէպի դղեակ դիմեցին, ներքնայարկի պահեստից բահ ու բրիչներ բերին եւ սկսեցին դղեակի պարտէզում չորս մեծ գերեզմաններ փորել: Առաջին գերեզմանում ամփոփեցին իշխանական ընտանիքի անդամների դիակները, որոնց հետ միասին նաեւ դղեակի կառավարիչի մանչուկի արիւնաներկ դիակը - Վահագն իշխանիկի տեղ ընդունելով. երկրորդում ամփոփեցին սպասուհիների դիակները, որոնց թւում նաեւ կառավարիչի կնոջ - Սալրիի տեղ ընդունելով, իսկ մնացեալ զինուորների դիակները՝ երրորդ եւ չորրորդ գերեզմաններում:

Դահիճները թանգ էին վճարել իրեն ռազանային արարքի համար, - ճամբու եղերքի բարձունքի վրայ բարձրացած էր մի մեծ հողաթումբ՝ 32 սրածայր քարերով շրջապատուած, դրանք իշխան Յակոբյանի եւ իր զինուորների սրերից ընկած ենիչէրիների դիակներն ամփոփող նշանաքարերն էին:

Կէսօրն անց էր, երբ Կարապետ Աղայի երկու սուրհանդակները, յոդնած ու դադրած, իրենց բահերի վերջին հարուածներով գերեզմանների թումբերն ամրացուցին եւ իրենց հանգստացած ձիերի մէջքին կըուած սլացան դէպի վան:

### Գլուխ ԺԲ.

Կէս գիշերն անցել էր, երբ Վանկուլի Կարապետ Աղայի երկու սուրհանդակները հապճեպով Վան հասան: Նեղիկ փողոցներով անցնելով, մեզ ծանօթ Աղենց պալատի մեծկակ պարսպադրան առջեւ կանգ առին: Սուրհանդակ Եղոն իր ձիուց վար իջաւ, դրան մօտեցաւ եւ ճկիկով սկսեց դուռը ծեծել:

Երբ դրան պատուհանիկից պահակ Մսրոն լապտերի լոյսով զուրսը լուսաւորեց եւ ուզում էր հարցնել, թէ եկողները ովքեր են. Եղոն ժամանակ չտուեց նրան հարցնելու, յուզմունքով գոչեց.

— Մսրօ, մարդ Աստուծոյ, հարցնելու ժամանակ չի, ի սէր Աստուծոյ, բաց արա զուռը, մեծ դժբախտութիւն է պատահել, պէտք է անմիջապէս իշխանաց իշխանին ներկայանանք:

Պարսպի մեծկակ դուռը ճոնչալով բացուեց, Մսրօն լապտերը բարձրացնելով եկուորներին ներս թողեց ու աղաչական ձայնով հարցրեց,

— Եղօ ախաղէր, Աստուած սիրես, կարճ ասա, ի՞նչ է պատահել:

— Շատ մեծ դժբախտութիւն, Մսրօ, ենիչէրիները իշխան Յակոբանին, իր ընտանիքին, թիկնապահներին եւ սպասաւորներին, բոլորին, բոլորին սրախողիսող են արել: Զգիտեմ, բերանս ո՞նց պիտի բռնի, որ այս անմարդկային արարքը իշխանաց իշխանին հաղորդեմ:

— Ամա՞ն, Աստուած իմ, — գոչեց Մսրոն այլայլուած, — ներս եկէք, ես իսկոյն կը տեղեկացնեմ ձեր գալուստը: — Այս ասելով Մսրոն արագութեամբ պարսպի դուռը փակեց, վագելով ներքին բակը մտաւ, արագութեամբ աստիճանները բարձրացաւ, նախասենեակում ննջող իշխանի աւագ թիկնապահ ժաւարչին զարթեցնելով, հեւ ի հեւ ու լացակումած պատմեց

եղելութիւնը։ Շաւարչն էլ շփոթուած եւ յուզուած, շտապով մօտեցաւ իշխանաց իշխանի ննջարանի դրան, դուռը ծեծեց ու ներս մտաւ։ Իշխանաց իշխանը, նախասենեակում տեղի ունեցած անսովոր բարձրածայն խօսակցութիւնը լսելով, արդէն գարթնել էր։ Շաւարչին դառնալով՝ ինքն էլ անհամբերութեամբ հարցրեց։

— Ի՞նչ կայ, Շաւարչ, այս ուշ պահին պէտք է, որ մի շատ կարեւոր դէպք պատահած լինի . . .

— Զերդ իշխանական մեծութիւն, սահմանագլխից կարապետ աղայի սուրհանդակներն են եկել, — իր յուզմունքը չկարողանալով զսպել, Շաւարչը կմկմալով շարունակեց, — եւ . . . եւ . . . շատ վաստ լուր են բերել։

Իշխանաց իշխանը, մտատանջութեան մատնուած, բարձրածայն ինքն իրեն հարցում տուեց, — «Կարապետ Աղայի՝ սուրհանդակներ, ինչո՞ւ ո՛չ Ցակորջանի», — եւ ապա դառնալով՝ Շաւարչին հրամայեց։

— Սուրհանդակներին իսկոյն ներս բերել։

Քիչ յետոյ սուրհանդակները ներս մտան, մոայլ դէմքերով ու երերուն քայլերով բազմոցի վրայ նստած իշխանին մօտեցան, անհաստատ կեցուածքով բարեւի կանգնեցին ու Եղոն կերկերուն ձայնով ու իր արցունքները սրբելով կմկմաց։

— Զերդ իշխանական մեծութիւն, մենք . . . մենք . . . , ամր ի՞նչպէս սկսեմ . . . բերանս չի բըռնում . . . — Եղոն, պոոթկացող յուզմունքից, չկարողանալով շարունակել, երկու ձեռներով իր նեղցած կոռդը բռնած, մորմոքելով սկսեց արտասուել։

— Լաւ, լաւ, զաւակներս, մի քիչ հանգստացէք, յետոյ կը պատմէք, — Իշխանաց իշխանը բռնագրօսիկ հանգստութեամբ ասեց Եղոյին, ապա դառնալով Շաւարչին հրամայեց, — Ասա Մարկոսին, թող բաւար գինի բերի տղաների համար, թող խմեն, իրենց ուժերը վերականգնեցնեն։ Մի՛ յուզուիք, հայ զինուորը ամրասիրտ է, ձախորդութեան բոպէներուն իր գլուխը

չի կորցնում. նստէք, նստէք այդ թախթի վրայ, գինին ըմպելուց յետոյ կը պատմէք եղելութիւնը:

Քիչ յետոյ պալատի մատակարար Մարկոսը ներս մտաւ մէկ փարչ գինի, երկու գաւաթներ սկուտեղի վրայ բռնած:

Մինչ սուրհանդակներ մատուցուած գինու բաժակները իրենց գողացող ձեռներում բռնած խմում էին, իշխանաց իշխանը, գժուարութեամբ իր անհամբերութիւնը զսպելով, երթեւեկում էր նախասենեակում:

Եղոն գինին ըմպելուց յետոյ, ազդուած իշխանի խաղաղեցնող խօսքերից, այնուամենայնիւ, յուզմունքով, նախ պատմեց Սրգոյի ու Պաքիրի անհետացման, իշխան Յակոբջանի դէպի Կոտորոց բերդ մեկնելու եւ իրենց ստացած յանձնարարութեան մասին եւ ապա մեծ գժուարութեամբ զսպելով իր յուզմունքը, նկարագրեց կարմիր գետի ափին տեղի ունեցած նախճիրը: Երբ Եղոն աւարտեց իր պատմութիւնը նկարագրելով արիւնաթաթախ դիակների ամփոփումը իրենց փորած գերեզմաններում, իշխանաց իշխանն այլեւս չկարողացաւ պահպանել իր սառնարիւնութիւնը, այլայլուած, երկու ձեռքերով իր դէմքը ծածկելով, սկսեց լուռ ողբալ: Մի քանի վայրկեան այդ վիճակում բազմոցի վրայ մնալուց յետոյ, մեծ կամքի ուժ ի գործ դնելով ոտքի կանգնեց, Շաւարչին դիմելով ասաց.

— Վար իջիր, Վեհափառին ասիր, որ ես ուզում եմ իր հետ շատ կարեւոր խնդրի շուրջ խորհրդակցել: Իմ կողմից ներողութիւն խնդրիր, որ ես անժամանակ իրեն նեղութիւն եմ պատճառում: Կարող ես անդամ կարճ տեղեկացնել նրան՝ տեղի ունեցած դժբախտութեան մասին:

Շաւարչը, ինքնակորոյս, իսկոյն նախասենեակից դուրս եկաւ, շտապ քայլերով վար իջաւ ու դիմեց դէպի Վեհափառի յարկաբաժինը:

Գրիգորիս կաթողիկոսը դեռ չէր վերադարձել Ախմամար:

իշխանաց իշխանի եւ Վեհափառի խորհրդակցութիւնը վերջացաւ, երբ արշալոյսը բացւում էր: Որոշած էր, որ իշխանաց իշխանը անձամբ Տիատին պիտի մեկնէր, իր «քարեկամ» մեծ զօրավար Ամիրգունայի հետ տեսակցելու, բարոյական հատուցում պահանջելու, այդ արիւնոտ արարք կատարողներին պատասխանատութեան կանչելու եւ պատժելու: Վեհափառն էլ համաձայնուել էր մինչեւ Կոտորոց բերդը միանալ իշխանին, այնտեղ նահատակների յետթաղման արարողութիւնը անձամբ կատարել ու վերադառնալ:

Առաւոտ կանուխ իշխանական ընտանիքը ամբողջութեամբ ոտքի էր կանգնել: Իմանալով Կարմիր գետի ափին կատարուած ոճիրի մասին, կանայք ողբում էին, իսկ տղամարդիք, ի մի հաւաքուած ու զայրոյթով այպանում էին թուրքերի որդեգրած ազգասպան քաղաքականութիւնը:

Իշխանաց իշխանի ամենակրտսեր եղբայր Իսանը, որը 26 տարեկան էր, եւ արդէն վանկուլիական հեծելագնդի պահեստի յիսնապետ էր, զայրոյթով բացագանչեց.

— Դեռ որքա՞ն պիտի լունք՝ բաւական չէ, որ մեր հայրենիքը բռնագրաւեցին, այժմ էլ սկսել են իրենց խլած երկրի իսկական տէրերին ջարդել, ոչնչացնել:

Ճիշդ այդ միջոցին Իշխանաց իշխանը հաւաքուածներին էր մօտենում: Լսելով եղբօր խօսքերը, լրջօրէն պատասխանեց.

— Եթէ չլուս, հապա ի՞նչ միջոցների պիտի դիմես. դատարկ ձեռներով, առանց կանոնաւոր բանակ ունենալու, առանց ուչքի եկած միասնական ժողովրդի, մարտի զա՞շտ պիտի իջնես՝ ընդդէմ բազմահազար մարզուած ու կատարելագէս սպառագինուած բանակների: Ոչ, հիմա մենք պէտք է ջանանք խաղաղեցնել առաջ եկած լարուածութիւնը: Մենք պատրաստ չենք, մեր ամենափոքր սիսալ քայլը կարող է ազգակործան հետեւանքի յանդել: Դէ, հայտէ, անարդիւնք դատողութիւններ չանենք: Պատրաստուեցէք, քիչ յետոյ

ճամբայ պիտի ընկնենք մեր նահատակներին մեր վերջին հրաժեշտը տալու:

Մէկ ժամից յետոյ 16 հեծեալներից բաղկացած խումբը ճամբայ ընկաւ: Իշխանաց իշխանի հետ գնում էին՝ իր երկու կրտսեր եղբայրները, իր երկու զաւակները, եւ իր վեց թիկնապահները, Շաւարշի գլխաւորութեամբ, իսկ Վեհափառին ուղեկցում էին՝ Ախմամարից իր հետ բերած վարդապետ Սարգիսը, սարկաւագ Յովսէփը եւ իշխանական տան սեփական Սուրբ ծիրանաւոր եկեղեցու քահանան Տէր Օհաննէսը: Առանց իրենց ձիերին հանգիստ տալու, կէսօրը քիչ անց, սրանք Կոտորոց բերդը հասան: Դղեակի փոքրիկ պարտէզում, նահատակների հողաթումբերի վրայ կատարուեց յետ թաղման արարողութիւնը: Բոլոր ներ-ները, ծայրաստիճան յուզուած, իրենց գլուխները խո-նարհած՝ սգում էին իրենց հարազատների կորուստը:

Արարողութիւնից յետոյ, իշխանաց իշխանը կար-դաղրեց կարապետ Աղայի երկու սուրհանդակներին՝ դղեակում մնալ, հսկել, մինչեւ ինոր կարգադրութիւն:

Որից յետոյ, իշխանը իր հետ վերցնելով իր վեց թիկնապահներին ճամբայ ընկաւ դէպի Տիատին, իսկ Վեհափառ Գրիգորիսը, մնացեալների հետ Վան վերա-դարձաւ:

### Գլուխ ԺԳ.

Յաջորդ օր կէսօրից յետոյ իշխանաց իշխան Ախի-ջանը Տիատին հասաւ: Ամիբգունա մեծ զօրավարը իր շտարի պատուհանից տեսնելով իշխանի եւ նրա թիկնապահների մօտենալը իր շտարին, անձամբ դուրս եկաւ դիմաւորելու: Շինծու ուրախութեան ժպիտն երեսին, իր ձեռները տարածած, իշխանին մօտեցաւ ու ողջագուրուելով բացազանչեց.

— Օօ'օ', ինչ մեծ պատիւ է ինձ համար այցելութիւնդ, եղրայրս, հազար բարի ես եկել. Եկ, ներս եկ, ես համոզուած էի, որ դու անպայման ինձ այցելելու ես . . . ցաւում եմ, հաւատացիր, ինձ համար դեռ մինչեւ հիմա անհասկանալի է Կարմիր գետի ափին տեղի ունեցած անցանկալի դէպքի դրդապատճառը, երեւի թիւրիմացութեան արդիւնք է . . .

— Պատահածը թիւրիմացութիւն չէ, Պէյ իմ, այլ մի գագանային, անմարդկային ոճրագործութիւն: Առանց որեւէ պատճառի: Եղրօրս՝ իշխան Յակոբջանին, իր ընտանիքի բոլոր անդամներին, դղեակի պահաներին, իր թիկնապահներին ու բոլոր սպասաւորներին, առանց խնայելու անմեղ կանանց ու երեխաներին, բոլորին, բոլորին սրախողխող են արել, մորթատել են: Սա մի աններելի եւ օսմաննեան բանակին պատիւ չբերող մի արարք է:

— Օհ, Ախիջան պէյ, եղրայրս ասում էք, որ անմեղ երեխաներ ու կանայք էլ զոհ են գնացել . . . , ինձի զեկուցել են, որ միայն մի խումբ ապստամբների են պատժել:

— Ներեցէք, մեծ զօրավար, դուք կը հաւատա՞ք, որ երեք կանայք, վեց երեխաներ եւ 10 - 15 պահակներ ու թիկնապահներ կը համարձակուէին օսմաննեան հզօր բանակի դէմ ապստամբուել, ստախօս զրպարտիչներ

Զեզ միտումնաւոր ու սխալ տեղեկութիւններ են տուել։ Զեր արդարադատութեան վրայ վստահ եմ, որ այդ արիւնակզակ չարագործներին, իրենց աններելի արարքի համար, արժանի պատիճ կու տաք, — լոջօրէն պահանջեց իշխանը։

— Անշուշտ, եղբայրս, անշուշտ, համոզուած եմ, որ այդ աններելի արարքը կատարած կը լինեն միայն ենիչէրիները։ Հիմա կը կանչեմ նրանց ընդհանուր հրամանատար զօրավար թէմուր պէյին ու քո ներկայութեամբ կը պարզենք այդ աններելի յանձագործութիւնը եւ պէտք եղած ամենախիստ միջոցներ ձեռք կ'առնենք։

Ամիրգունա զօրավարը երբ լոեց, իշխան Ախիջանը իր հարցական եւ սպասողական հայեացքը սեւեռեց նրա դէմքին, սպասելով նրա խոստումի կատարման։ Ամիրգունան, հասկանալով այդ ակնարկի իմաստը, անմիջապէս կանչեց հերթապահներից մէկին ու հրամայեց՝ զօրավար թէմուր պէյին իր մօտ հրաւիրել։

Թէմուր պէյը երբ ներս մտաւ, բարձր զինուորականին պատշաճ կեցուածքով Ամիրգունա զօրավարին բարեւեց ու կանգ առաւ։

Ամիրգունան թէմուր պէյի բարեւին պատասխանելուց յետոյ, Ախիջան իշխանին ցոյց տալով խօսեց.

— Փաշա, պատիւ ունեմ ձեզ ներկայացնելու՝ եղբայրացուիս, Վան վիլայէթի պէյերի պէյին, մեր հաւատարիմ զինակից Ախիջան Կարասէֆէրին։

Թէմուր պէյը, բռնազրօսիկ հաճոյալի դէմք ընդունելով, իր ձեռքը իշխանաց իշխանին պարզելով շողոքորթեց։

— Որչափ ուրախ եմ ձեզ հետ ծանօթանալու պատիւն ունենալուս համար, մեծ իշխան։ մեր մեծ մարածախտ Ամիրգունա պէյը յաճախ ձեր մասին մեծ գովասանքով ու հիացմունքով է խօսել։

— Չափազանց սիրալիր էք, Թէմուր պէյ, ես էլ ձեր մասին մեծ գովասանքներ եմ լսել, որպէս կարող ու քաջարի զինուորականի։ — Այս պատասխանը տալու

միջոցին հշխանաց հշխանը իր աչքերի թափանձող հայեացքը խորասուզեց թէմուր պէյի խորամանկութիւն քողարկող պաղութեամբ ժատացող աչքերում ու համոզուեց, որ նրա պատիր սրտում վրէժինդրութեան եւ արհամարհանքի կիրքն է եռում թագունօրէն:

Ամիրգունա զօրավարը նկատելով այդ երկուսի հոգիներում սկիզբ առած փոխադարձ հակակրանքը, հաշտարարի գեր ստանձնելով, խօսակցութեան նիւթը փոխեց ու դիմելով հշխանին՝ ասաց.

— Գիտէ՞ր, Ախիջան պէյ, թէմուր պէյը ձեր ծննդավայրին շատ է հաւանել: Մեր ներկայ պատերազմական գործողութիւններն աւարտելուց յետոյ, նա որոշել է Վան տեղափոխուել ու մշտական բնակութիւն հաստատել, — եւ ապա թէմուր պէյին դառնալով շարունակեց, — Պէյ, երբ կիւրջիստանի վրայով Ղրիմ հասնենք ու միանանք Եւրոպայում առաջ շարժուող մեր բանակներին, Սեւ ծովը կը դառնայ օսմանեան լիճ, քեզ յանձնարարուած պարտականութիւնը կատարելուց յետոյ հանգստեան կը կոչուես, տուն կը վերադառնաս եւ որպէս վարձատրութիւն, հայրենիքիդ մատուցած մեծ ծառայութիւններիդ, Վանայ լիճով կը գոհանաս:

Այս ասելով Ամիրգունա փաշան սկսեց բարձրաձայն խնդալ՝ իրենց բոնագրաւչական ընթացքը բնական համարելով, անտեսելով իր մօտ արդարացի բողոքի եկած Վանայ լճի դարաւոր տիրոջ — իրաւագրկուած հայ ժողովրդի մեծ զաւակի ներկայութիւնը:

Իշխանաց հշխանի լուրջ կեցուածքից ու նրա իրեն ուղղած հարցական հայեացքից, Ամիրգունան զգաց, որ բուն խնդրից հեռացել է, ուստի թէմուր պէյին դառնալով հարցրեց.

— Պէյ, ձեզ կանչելուս բուն նպատակը հետեւեալն է. Ախիջան պէյը մի ցաւալի արարքի համար բողոքի է եկել. Կարմիր գետի ափին, իրենց ամրոցում, իր եղբօր իշխան Յակոբանին, իր կնոջ, չորս փոքրահասակ երեխաներին, թիկնապահներին ու սպասաւորներին, ինչ որ ենիչարական մի խումբ սրախողիող է արել,

ծանօթ է ձեզ այդ ամօթալի արարքը :

Շինծու զարմանքի ու ցաւակցութեան արտայայ-  
տութիւնը երեսին, մէկ իշխանաց իշխանին, մէկ  
Ամիրգունա զօրավարին նայելով, Թէմուր պէյը գոչեց .

— Ի՞նչ էք ասում, այդպիսի անգութ արարք ինձ  
ծանօթ չէ. այո, երկու օր առաջ իմ գնդերից երկուսը  
այդ կողմերով են անցել, բայց ինձ այլ տեղեկութիւն-  
ներ են տուել, որպէս թէ, 100-ի մօտ ինչ որ անծանօթ  
զինեալներ ընդդիմացել են, չեն ուզեցել յանձնուել, եւ  
գիտէք, ծանօթ էք ենիչէրիների տաքարիւնութեան,  
նրանք էլ զայրացած, այդ ապստամբներին շրջապատել  
ու գլխովին ոչնչացրել են . . .

Իշխան Ախիջանը, զուսպ զայրոյթով, ընդհատելով  
Թէմուր պէյին, գոչեց .

— Այդ ճիշդ չէ, երեխաներից ու կանանցից բաղ-  
կացած միամիտ ճամբորդներին ի՞նչպէս կարելի է  
ապստամբներ համարել եւ անգթօրէն սրախողիսող անել  
. . . բողոքում եմ եւ պահանջում՝ պատժել այդ անգութ  
չարագործներին, նման արարքները խոռվեցնում են  
խաղաղ բնակչութեան, ու թրքական բանակը կորցնում  
է իր համակրանքն ու արժանապատութիւնը ժողո-  
վուրդների աչքերում . . .

— Օհ, մեծայարգոյ Ախիջան պէյ, ցաւում եմ, շատ  
եմ ցաւում, ուրեմն անիրաւները ստել են, զուք միան-  
գամայն իրաւացի էք Զեր նկատողութիւններում,  
անպատուարեր ու աններելի արարք է եղել այդ . . . Ես  
խօսք եմ տալիս՝ ամենայն խստութեամբ քննել ու  
պատժել անկարգ չարագործներին . . . — իրեն  
զգացուած ձեւացնելով՝ Թէմուր պէյը Ախիջանին  
պատասխանեց :

Ցուցուած իշխան Ախիջանին խաղաղեցնելու  
համար, Ամիրգունան ընդհատելով Թէմուր պէյին  
ասաց .

— Շատ ցաւալի է, Ախիջան պէյ իմ, եղբայրս,  
գիտեմ, անփոխարինելի է այդ մեծ կորուսոը, Թէմուր  
պէյի հետ միասին կը քննենք այդ աններելի արարքը եւ

չարագործներին խստօրէն կը պատժենք . . . Ես կ'ուզէի որ այս տգեղ ու ցաւալի դէպքը չանդրադառնար մեր փոխադարձ անկեղծ եղբայրական փոխ-յարաբերութեան վրայ։ Սուլթանական մեծութիւնն էլ միշտ գնահատել է ձեզ՝ ձեր հաւատարիմ ծառայութեան համար, եւ դրանում ես մի աւելորդ անգամ եւս համոզւեցի, երբ կարդացի սուրհանդակներին յանձնած ձեր նամակը՝ ուղղուած արժանայիշատակ Յակոբջան իշխանին եւ Պաղըր պէկին։

Այդ կեղծ շաղակրատանքներն ու կանխամտածուած շինծու չքմեղանքներն, անշուշտ, չամոքեցին եղբայրակորոյս իշխանաց իշխանի վշտահար հոգու ցաւերը։ Նա իր եղբօր ու Պաղըր պէկին գրած նամակի ակնարկումը լսելով պատասխանեց.

Մեծ զօրավար պէյ իմ. եղբօրս ու Պաղըր պէկին գրած նամակս՝ Զօրավար Ալլահվէրտուն տուած առաջին պատասխանիս կրկնութիւնն է, որի մասին ժամանակին ձեզ արդէն զեկուցել էի եւ պատրաստում էի նրա այս երկրորդ առաջարկի ու իմ տուած պատասխանի մասին կրկին ձեզ զեկուցել։ Եթէ դուք, իսկապէս, ինձ որպէս եղբայր էք ընդունում, որում հաւատացած եմ, պէտք է պատկերացնէք, թէ ի՞նչ մեծ վշտով ու ողբով է համակուած դժբախտ մայրս. ճամրայ ելնելուս միջոցին ինձ յանձնարարեց՝ ձեր սնարի մօտ նստած, ձեր հանդէպ ցուցարերած իր մայրական գուրգուրանքն ու հոգատարութիւնը յիշեցնել, եւ իր որդեկորոյս սրտի անբուժելի ցաւը յայտնել ձեզ . . .

Այս խօսքերի վրայ, Ամիրգունա զօրավարը լրջացաւ, ու կարծէք խղճի խայթ զգաց, զիտակցեց իր յօրինած կեղծուապատիր խաղի աններելիութիւնը, դիմեց իշխան Ախիջանին ասելով.

— Զգում եմ, զգում եմ, եղբայրս, այդ անարդարացի արարքի ծանրութիւնը. ինչպէս լսեցիր, խոստանում ենք ամենայն խստութեամբ պատժել այդ սանձարձակ յանցագործներին։ Մեծագոյն վիշտս ու ցաւակցութիւնս յայտնիր ազնիւ մայրիկին, ասիր, որ

նրա մայրական գթառատութիւնն ու երախտիքը յաւիտեանս չպիտի մոռանամ:

Այդ միջոցին կողքի սենեակին դուռը բացուեց եւ սպասարկող սպաներից մէկը զեկուցեց, — ճաշասեղանը պատրաստ է, համեցէք, — ասելով:

Ամիրգունա զօրավարը «ի պատիւ իր եղբայրացուին» ճաշասեղան էր բաց անել տուել:

Ճաշի ընթացքում շատ քիչ խօսքեր փոխանակուեցին: Իշխան Ախիջանը, հոգեկան այդ ծանր վիճակում, կորցրել էր ուտելու ախորժակը: Մեծ զօրավարին չվիրաւորելու համար, ինքնաստիպման տակ, հազիւ կարողացաւ իրեն մատուցած կերակուրների աննշան մասը ուտել, պատճառաբանելով, թէ երկու օրերէ ի վեր ստամոքսի թոյլ խանգարում ունի:

Ճաշից յետոյ կրկին բնդունարան մտան, սեղանի շուրջ նստելուց յետոյ, Ամիրգունա զօրավարը իշխան Ախիջանին դիմելով ասաց.

— Ախիջան պէյ, տեղի ունեցած այս տգեղ թիւրիմացութիւնը պարզելու համար, ես Կարապետ Աղային ու Պաղըր Պէկին այստեղ բերել տուի, այժմս այլեւս կարիք չկայ նրանց հարցաքննելու, կարող էք երկուսին էլ հետներդ վերցնել: Ես արդէն կարգադրել եմ՝ զինուորներէս մէկ վաշտ ձեզ ճամբորդակցելու է մինչեւ Սոնա, ապա յետ կը վերադառնայ: Անշուշտ, զուք այդ ճակատամասի հայ եւ քուրտ ձեր զինակիցները, գիտէք մեր բանակի դէպի արեւելք արշաւելու նպատակը, ձեզ յանձնարարած այդ ճակատամասի ապահովումով զուք կը նպաստէք մեր առաջնադաշտման յաջողութեան:

Ի՞նչ էր մնում անելու իշխանաց իշխանին: Նա համոզուեց, որ Թէմուր պէյի եւ Ամիրգունա զօրավարի կողմից նախօրօք մշակուած ծրագրով ընթացաւ այդ գիտումնաւոր «թիւրիմացութեան» պարզաբանումը: Որպէս «արտօնեալ» վասալ դաշնակից, աւելին չէր կարող սպասել տիրակալներից: Ուստի, իր առաքելութիւնն աւարտած համարելով, իր տեղից վեր կեցաւ

իր ձեռքը Ամիրգունա զօրավարին պարզելով ասաց.

— Ուրեմն, Մեծ զօրավար, թոյլ տուէք հրաժեշտ տալ ձեզ. պէտք է շատապեմ, Սոնայում գործերը կարգադրելուց յետոյ, անմիջապէս տուն վերադառնալ, տոհմիս անդամների ծանր վիշտը կիսելու. բացի դրանից՝ ոտքիս վէրքը գեռ բոլորովին չի բուժուել, հանգստի պէտք ունեմ: Ամիրգունան, իշխան Ախիջանի ձեռքը ամուր սեղմելով, ողջագուրուեց ու շինծու ցաւակցական ձայնով ըսաւ:

— Որդիական սրտագին ողջոյններս պատուական մայրիկին ու խորին ցաւակցութիւններս ձեր տոհմի բոլոր անդամներին: Բարի ճանապարհ եւ յաջողութիւն ձեզ:

Երբ իշխանաց իշխանը իր հետեւորդներով Սոնայի ճամբան բռնեցին, Ամիրգունա զօրավարը թէմուր պէյին դառնալով ինքնագոհ ժամանակին ժամանակին ասաց:

— Ձեր դերը շատ յաջող կատարեցիք, պէյ իմ: Կավուր եղբայրացուս հաւատաց մեր խոստումին ու ցաւակցութեան, թէ ոչ, դա մեզ չի հետաքրքրում, կարեւորը՝ մեր բռնած ճիշդ ընթացքն է: Ստրուկներին պէտք է միշտ սարսափի մէջ պահել, իր անզօրութիւնն զգացնել տալ, որպէսզի չհամարձակուեն զլուխ բարձրացնել:

Թէմուր պէյը, խորամանկութեան ժամանակին, պատասխանեց.

— Մեծագոյն եւ ամենայաջող դերը դուք կատարեցիք, մեծ զօրավար, ես միայն լրացուցիչ դեր կատարեցի, — եւ թէմուր պէյը, աչքերը կկոցելով, իր մտքում մտմտաց, — «Օ, փաշա, ես իմ դերը քառապատիկ անգամ լաւ եմ կատարել եւ պիտի շարունակեմ խաղալ իմ ամբողջ կեանքի ընթացքում: Վանում հաստատուելուց յետոյ, քո կեավուր եղբայրացուի քթի տակ, պիտի մեծցնեմ ու դաստիարակեմ իր եղբօր որդուն, որպէս հաւատարիմ թուրք թէմուր օղլի, որը պիտի շարունակի արհամարհել, ատել ու հալածել իր կեավուր արիւնակիցներին»:

### Գլուխ ԺԴ.

Այս դէպքերից յետոյ 43 տարիներ էին անցել:

Թրքական, այսինքն, Օսմանեան բռնապետութիւնը ամբողջովին տիրել էր Արևմտեան Հայաստանին: Հայ ժողովուրդը տնքում էր մոլեռանդ ու մակարոյծ տիրակալի ստրկական լծի տակ:

Իշխանաց իշխան Ախիջան երկրորդը, արդէն 85 տարեկան ալեհներ ու պատկառելի ծերունի էր դարձել: Չնայած մարմնապէս զեռ առողջ էր ու հոգեպէս լուսամիտ, բայց, իր տոհմապետական ու վարչական պարտականութիւնների մեծ մասը՝ իր աւագ որդուն - Դերենիկին էր յանձնել, բայց, ծանր կեղեքումների ու հալածանքների դէպքերում, նա իր հեղինակութեամբ, երբեմն էլ կաշառելով թուրք տիրակալներին ու կրօնամոլ մոլլաներին, կարողանում էր թեթեւացնել հայութեան ողբալի վիճակը:

Այդ տարիներին, թուրք կառավարութեան կողմից գործադրուող անմարդկային ճնշումները, մասնաւորապէս Վասպուրականում, անտանելի էին դարձել: Գիւղերում հայ գիւղացիները քրտերի եւ Միջին Ասիայից ներխուժող թրօ-թաթարական ցեղերի կողմից էին թալանւում, իրաւագրկւում ու առեւանգւում, քաղաքներումն էլ, ճգնաժան հայ արհեստաւորներն էին նոյն վիճակին դատապարտում՝ թուրք վաշխառու պաշտօնեաների կողմից: Յուսահատութիւնն ու ազգատութիւնը մեոցրել էին պարզ դասակարգերի սրտերում ընդդիմանալու կամ ապստամբուելու ոչ միայն ցանկութիւնը, այլ եւ այդ ուղղութեամբ մտածելու յատկութիւնն անգամ:

Միայն վան քաղաքում հազուագիւտ «արտօնեալ» ազնուականների եւ ունեւոր դասի շարքերում, փոքրաթիւ անձներ սկսել էին մեծ զգուշութեամբ ու գաղտնօրէն նախապատրաստուել, ուժահաւաք կատարել՝ ընդ-

դիմանալու փորձեր կատարելու, որն անշուշտ, անիմաստ էր։ Հայ ժողովրդի ստրկացուած բռնադատուած մեծագոյն մասը, եթէ անգամ գիտակցութեան էլ գալու լինէր այդ ուզդութեամբ գործօն դեր կատարելու, տնտեսապէս ու կազմակերպուածութեամբ միանգամայն անպատճաստ էր։

Չնայած այս աննպաստ պայմաններին, Վանի քաղաքամիջում, քսանից աւելի անձերից բաղկացած մի գաղտնի յեղափոխական խմբակ էր կազմուած, որի անդամները սկսել էին համախոհներ փնտոել, անգամ գիւղերում անյաջող փորձեր էին կատարում վստահելի անձեր գտնել, իրենց գործունէութիւնը տարածելու նպատակով։ Գաղտնօրէն ու խիստ զգուշութեամբ այս խմբակն սկսել էր անգամ զէնքեր գնել. քաղաքի ծայրամասերից մէկում, մի աննկատելի եւ ապահով ներքնայարկում, իրենց փոքրիկ զինապահեստն էին չիմնել։

Այս գաղտնի խմբակում անդամակցում էին նաև Գարասէֆէրեան տոհմի եօթ անդամները՝ Իշխանաց իշխանի երկու կրտսեր եղբայրներ Յարութիւնն ու Աղաջանը եւ սրանց հինգ հասունացած զաւակները։

Այս գաղտնի ու վտանգաւոր գործունէութեան անտեղեակ էին՝ իշխանաց իշխան Ախիջանը եւ իր երեք զաւակներ՝ Վաղարշը, Դերենիկն ու Խեղենիկը։

\* \* \*

Թէմուր փաշան շուտուանից ի վեր թոշակառու էր դարձել արդէն. հաստատուել էր Վանում, մի երկյարկանի գեղեցիկ տուն էր կառուցել տուել, փոքրիկ կանաչազարդ պարտէզով եւ իր «կնոջ» Ֆաթմայի (Սալրիի) ու «որդու» Մուրատի (Վահագնի) հետ վայելում էին Վասպուրականի դրախտային գեղեցկութիւնը։

Թէմուր պէջն արդէն 84 տարեկան էր, բայց դեռ ողջամիտ էր ու պահպանել էր իր խստարարոյ բնաւորութիւնը:

Չնայած թոշակառու էր դարձել, բայց վարում էր Վանի նահանգային զինուորական դատարանի գլխաւոր դատաւորի պաշտօն:

Որդին՝ Մուրատն էլ 19 տարիներ առաջ աւարտելով Պոլսոյ զինուորական բարձրագոյն դպրոցը, իր հօր միջնորդութեամբ, Վան էր տեղափոխուել ու նշանակւել էր քաղաքի կայեազօրի պետ՝ գնդապետի աստիճանով:

Վանեցիներն արդէն զիտէին, որ Թէմուր պէյր ենիչէրի էր եղել:

Ոմանք ասում էին, թէ նա կիւռջիի (վրացու) զաւակ է եղել, ոմանք պնդում էին, թէ ուռումի (յոյնի) որդի է եղել, ոմանք էլ հաւասարացնում էին, թէ նա – այդ սարսափազզու մարզը – կիլիկիացի հայու զաւակ է եղել:

Բոլորի համոզումն այն էր, թէ Թէմուր պէյր թրքական ծագում չունի, որպէս ապացոյց այդ համոզման՝ իր նման թիկնեղ, բարձրահասակ ու կտպուտաչեայ որդին Մուրատն էին համարում:

Մուրատը Պոլսոյ զինուորական դպրոցն աւարտելուց յետոյ ամուսնացել էր բարձրաստիճան թուրք սպայի յոյն կնոջմից ծնուած աղջկայ հետ, եւ արդէն երկու մանչ զաւակներ ունէր, 19 եւ 17 տարեկան, որոնք նոյնպէս Պոլիս էին ուղարկուել՝ զինուորական բարձրագոյն ուսում ստանալու: Որդիների հետ Պոլիս էր մեկնել նաև իրենց մայրը՝ իր զաւակներին հոգալու եւ Պոլսում ապրող իր հարազատների ներկայութիւնը վայելելու նպատակով:

44-ամեայ գնդապետ Մուրատը, իր մեղմ բնաւորութեամբ ու համակրելի արտաքինով, ամէնուրեք շատ սիրուած էր, Թէմուր Օղի Մուրատ էին անուանում նրան: Նա իր մանկութեան ու պատանեկութեան օրերին երբեք հայրական գուրգուրանք չէր վայելել, նախ որ իր

Հայրը իր պաշտօնի բերումով միշտ բացակայում էր տանից, իսկ նրա ներկայութեան պարագային, նրա խստարարոյ կեցուածքից ակնածում էին ներկաները: Այնպէս որ Մուրատը միայն պաշտօնական յարդանք ունէր իր հօր հանդէպ: Իսկ մօր – Ֆաթմա խանումի (Մալրիի) հետ, որը դեռ ապրում էր, որդիական անկեղծ ու անքակտելի սիրով էր կապուած:

Աշխատանքից յետոյ, երեկոներին, երբ հայր ու որդին տուն էին վերադառնում, նրանց խօսակցութեան նիւթը՝ իրենց առօրեայ աշխատանքի կամ ուզմաքաղաքական հարցերի շուրջն էր: Մուրատն իրեն ազատ ու երջանիկ էր զգում, երբ իր մօր Ֆաթմայի հետ առանձին էր լինում:

1649 թուի ամառնային մի երեկոյ էր:

Թէմուր պէյը տուն վերադարձաւ, ընթրեց եւ անմիջապէս իր ննջարանը մտաւ, յոգնած էր: Իսկ Մուրատը՝ իր մօր-Ֆաթմայի առանձնասենեակը մտաւ:

Ֆաթման նկատեց, որ Մուրատն այդ օր, սովորականի նման, չսկսեց օրուան անցուգարձերի մասին խօսել, լուռ էր ու մտածելու:

— Ի՞նչ է պատահել, որդիս, այսօր լուռ ես, չոգսե՞ր ունես:

— Ոչ, մայրս, չոգսեր չունեմ, բայց երէկուանից մի տարօրինակ զգացմունքով եմ համակուած: Ես գիտեմ, որ դու քրիստոնեայի զաւակ ես եղել, բայց մինչեւ հիմա չես պատել, թէ ինչպէս է եղել, որ մահմետականի կին ես դարձել: Ես շարունակ զգում եմ, որ դու մի խոր վիշտ ունես: Երբեմն ես հետեւում եմ քեզ, բայց ոչ լրտեսելու նպատակով, այլ քեզ շատ սիրելուց: Երբ տեսնում եմ, թէ դու ինչպիսի բուռն հաւատքով աղօթում ես, անշուշտ քո քրիստոնեայ Աստծուն եւ մեր միասնական կեանքում ինչպիսի անսահման սիրով ու զգուանքով փայփայում ես ինձ ու դոդում վրաս, այն համոզման եմ զալիս, որ բոլոր քրիստոնեաներն էլ քեզ նման բարի են ու ազնիւ: Երէկ այդ համոզմունքս էլ աւելի ամրացաւ, երբ մի

սրտաշարժ առիթ հանդիսացաւ։ Ցիշո՞ւմ ես, քեզ պատմել եմ, որ մեր գրասենեակի զլխաւոր գրագիրը Աղենց-կարասէֆէրենց Ախիջան պէյի կրտսեր որդին Վաղարչ պէյն է։ Նա էլ իմ տարիքին է, շատ համակրելի, ուսումնական ու կիրթ մարդ է։ Եւ այնքան ընդունակ եւ հմուտ մեր գործունէութեան, որ յաճախ, բարձր զինուորականներն անգամ, նրա խորհուրդին ու բացատրութեանն են դիմում՝ որոշ հարցերում։

Երէկ նա ինձ մէկ բաժակ իրենց հոչակաւոր օշարակը խմելու հրաւիրեց։ Անշուշտ, հրաւէրն ընդունեցի ու միասին իրենց ապարանքը գնացինք։

Երբ առաջին իսկ վայրկեանին Մուրատն սկսեց Վաղարչի ու Գարասէֆէրեանների մասին խօսել, Ֆաթման հազիւ կարողացաւ իր ամրող մարմնով անցնող ցնցումը զսպել եւ Մուրատին չզգացնելու համար, սկսեց իր ալեհեր մազերը, որպէս թէ, կարգի բերել։

Մուրատը, տարուած նախորդ օրուան իր ապրումների նկարագրումով, շարունակում էր պատմել.

— Ներս մտանք, բարձրացանք իրենց Քէօշքը։ Քիչ յետոյ ներս մտաւ նրա հայրը, հոչակաւոր ուազմազէտ եւ իրենց տոհմի մեծ իշխան Ախիջան Պէյը։ Ի՞նչ պատկառելի ու կիրթ մարդ է . . .

Այդ բոպէին Ֆաթման, մեծ լարուածութեամբ եւ իր զլուխը շարժելով, առաջ ծառացաւ ու իր ակնարկը Մուրատի շուրթներին սեւեռեց։ Մուրատն իր մօր այդ կեցուածքը մեծ հետաքրքրութեան նշան համարելով, շարունակեց։

— Վաղարչն ինձ ծանօթացրեց իր հօր հետ, մի քանի փոխադարձ սիրալիր խօսքիր փոխանակելուց յետոյ նա հրաժեշտ տուեց ու հեռացաւ, չուզենալով խանգարել մեզ։ Երկուսովս մնացինք մենակ, խօսակցում էինք, երբ ներս մտաւ սպասաւոր զառամեալ Մարկոսը, սիրալիր բարեւեց ու մատուցեց մեզ իրենց համագամ օշարակը, եւ ապա հրաժեշտ տալով հեռացաւ։ Նստած ըմպում էինք, երբ յանկարծ դուռը բացուեց ու ներս վազեցին Վաղարչ Պէյի 6 - 8

տարեկան հրեշտականման դուստրիկները եւ սկսեցին սովորակների նման դայլայլել։ Իրենց հօր համբոյր տալուց յետոյ ինծի մօտեցան, քաղցրահնչիւն ձայնով ինչ որ խօսքեր ասին, ինչ որ հարցեր տուին, բայց ես անշուշտ չհասկացայ։ Նրանց հմայիչ ժպիտը եւ ուրախ, անարատ մօտեցումը, մինչ այդ ինձ անծանօթ մի այնպիսի ուժեղ համակրանք ծագեցրին մէջս, որ այլեւս չկարողացայ զսպել ինձ, նրանց գիրկս առի ու անսահման գուրգուրանքով համբուրեցի նրանց թշիկները։ Այդ վայրկեանին յիշեցի քեզ, մայր իմ, թէ գու էլ իմ մանկութեան օրերին նոյն զգացմունքով, այո, քրիստոնէական մայրական սիրով գուրգուրում էիր վրաս . .

Այս խօսքերի վրայ, Ֆաթման (Սալրին) խոր ազգը-ած, չկարողացաւ այլեւս իր յուզմունքը զսպել, աչքերը արտասուբով լեցուեցին, պատկերացրեց 43 տարիներ առաջ Կարմիր գետի ափին տեղի ունեցած եղեռնը, համոզուեց, որ Մուրատի (Վահագնի) ներսում արեան ձայնն է խօսում, ու երկու ձեռքերով իր դէմքը ծածկած, սկսեց մեղմ մորմոքալ ու ողբալ։

Մուրատը տեսնելով իր մօր յուզուիլն ու ողբալը, շփոթուած մօտեցաւ նրան, իր գիրկն առաւ ու փաղաքչանքով հարցրեց.

— Մայր իմ, անուշիկ մայր իմ, ի՞նչ պատահեց, երեւի պատմած քո ցաւալի անցեալը յիշեցրեց։ Ներիր ինձ, ես չէի ուզում քեզ վշտացնել։ Ախ, ինչ խոր գաղտնիքներ ունես, ինչո՞ւ, ինչո՞ւ չես պատմում, մի՞թէ վստահութիւն չունես վրաս, մի գուցէ ես կարողանամ միսիթարել քեզ։

Ֆաթման դժուարութեամբ զսպեց իր մորմոքը, թեթեւ հոգոց հանելով պատասխանեց.

— Ոչինչ, զաւակս, այս արտասուքները թեթեւացրին վիշտա։ Այո, իրաւացի ես . . . այսօր ոչ, մի ուրիշ անգամ, մի ուրիշ առիթով կը պատմեմ պատմութիւնս . . . գու էլ կը խաղաղուես . . . ես էլ։

— Բայց ինչո՞ւ ոչ հիմա, մայր իմ, ինչո՞ւ ես ուզում, որ ես շարունակական մտատանջութեան մատ-

նուեմ, ի՞նչն է պատճառը . . .

— Ոչ, որդիս, հաւատա՛ ինձ, սպասիր, համբերիր,  
այդպէս լաւ է:

\* \* \*

«Մօր» եւ «որդու» այս զգայացունց խօսակցութիւնից երկու ամիսներ էին անցել: 1649 թուի Օգոստոս ամսուան վերջերին էր:

Մի օր երեկոյեան թէմուր պէյն ու Մուրատը սովորականից ուշ տուն վերադարձան: Թէմուր պէյր առանց ֆաթմային բարի երեկոյ ասելու, իր ննջասենեակը մտաւ ու փակուեց, իսկ Մուրատը, մտահոգուած, մօր սենեակը մտաւ:

— Ի՞նչ է պատահել, որդիս, հայրդ վրդովուած է երեւում, իսկ դու էլ մտահոգ, անհանգստութեամբ հարցրեց ֆաթման:

— Այսօր հայրս բարկացաւ ոստիկանապետի վրայ, կանչեց ու սպառնաց, պաշտօնանկ անել նրան, որ ժամանակին չի հետաքրքրուել ապստամբութեան պատրաստուող մի խումբ հայերով եւ հրամայեց իսկոյն բանտարկել յայտնուածներին եւ այսօր կէսօրին տասնեւհինգ անձերի բանտարկեցին, որոնց թւում 10 հոգի Գարասէֆէրեաններից են: Խնայել է միայն ծերունի Ախիջան մեծ պէյին: Ախիջան պէյը, իր այդ զառամեալ վիճակով, հօրս պաշտօնատեղին եկաւ, երկար տեւեց նրանց խօսակցութիւնը, բայց իվերջոյ, Ախիջան պէյը ձեռնունայն յետ վերադարձաւ: Պէտք էր տեսնէիր, թէ այդ պատկառելի մարդը ինչ ծանր տպաւորութեան տակ հեռացաւ:

— Աստուած իմ, ինչ դաժանութիւն, հայրդ փաստեր ունի, որ այդ անձեր, իսկապէս ապստամբութեան են պատրաստուում, յուզուած հարցրեց ֆաթման:

— Այո, որպէս թէ մեր ոստիկանութեան

լրտեսներից մէկը, ծպտուած, որպէս քուրտ, սայլով զէնքեր է տեղափոխել նրանց գաղտնի պահեստում ուր անձամբ տեսել ու ճանաչել է 10 անձերի։ Այսօր երեկոյեան էլ նրանց զէնքերի գաղտնի պահեստն են դտել ու խուզարկել, բայց ոչ մի զէնք չեն դտել։

— Եթէ զէնքեր չեն դտել, հապա ինչպէս կարող են մեղադրել ու բանտարկել։

— Դու չգիտես հօրս խստասրտութիւնը։ Նա Ախիջան պէյին պատասխանեց, — «զէնքերը եթէ անգամ չեն յայտնաբերուել, բաւական է, եթէ վկան դատարանի առջեւ երդուի ու վկայի, թէ զէնքերն այդ անձերին է յանձնել»։ Վաղ առաւօտեան այդ վկան պիտի գայ եւ մատնանիշ անի։ Հայրս անողոք է, ասեց, որ ցուցադրական դատավարութեամբ բոլորին էլ կախաղան բարձրացնել պիտի տամ։ Իմ բարեկամ՝ մեր գրագիր Վաղարշն էլ իր երկու եղբայրների հետ բանտարկեալների թւումն են։ Ես չեմ հաւատում, որ բոլոր Գարասէֆէրեաններն էլ մասնակիցներ են այդ ապըստամբական կազմակերպութեան։ Վաղ առտու այդ լրտեսը պիտի գայ մատնանիշ անելու իր տեսած անձերին։ պիտի սաստեմ իրեն, որ միայն մատնանիշ անի նրանց, որոնց իսկապէս տեսել է։

Ֆաթման իր նստած տեղ կսկծալով իր ծնկներն էր տրորում։ Եւ մէկէն, Մուրատին ընդհատելով գոչեց։

— Աստուած իմ, նա կրկին իր ձեռքերը արեան մէջ է թաթախում . . .

— Ի՞նչպէս թէ կրկին, մայր իմ, ի՞նչ է նշանակում այդ կրկին բառը։

— Այո, որդիս. քի՞չ է պատերազմներ մղել։ Նա իր ամբողջ կեանքի ընթացքում արիւն է թափել . . . իր այդ տարիքում ամօթ է այլեւս, արիւնը արիւնով է փոխհատուցւում . . .

— Օ, ոչ մայր իմ, գու այսօր այդ խօսքերովդ՝ քո խոր թագնուած գաղտնիքների ճոթը բացիր, ես զգում եմ, թէ ինչ ուժգնութեամբ նրանք բռնկւում են մէջդ. չեմ հասկանում, թէ ինչն է ստիպում քեզ լոել թագցնել

*ինձանից:*

— Որդիս, ես քեզ ասել եմ, որ յարժար առիթը կը հանդիսանայ, կը պատմեմ քեզ. համբերի՛ր, հոգիս: Այսօր քո այս լուրը վշտացրեց ինձ, ախ, չատ եմ յոդնած, այսօր ինձ հանգիստ թող:

Մուրատ չուզեց այլեւս ներքուստ տառապող մօր աւելի տանջանք պատճառել, նրա երեսը համբուրեց, բարի գիշեր մաղթեց՝ ասելով.

— Ների՛ր, մայր իմ, այլեւս հարցումներ չպիտի տամ՝ մինչեւ որ դու ինքդ խոստումդ կատարես:

Սալրին իր արտասուաթոր աչքերի հայեացքով հետեւեց իր հոգենորդի իշխանիկին մինչեւ դռնից դուրս ելնելը:

### Գլուխ ԺԵ.

Յաջորդ օր առաւօտեան Մուրատի հաւատարիմ սպաներից մէկը վկային բանտին բակը առաջնորդեց: Նա, Մուրատի յանձնարարութեամբ, վկային նախազգուշացրել էր ասելով, թէ իրենք ուրիշ վկաներ էլ ունեն, եթէ նա սխալ ցուցմունքներ տայ, անմեղներին էլ մատնանիշ անի, ինքն էլ, որպէս ստախօսի, բանտից դուրս չպիտի գայ:

Թէմուր պէյը, իր քարտուղարը, բանտապետն ու Մուրատը բանտի ներսի բակում կանգնած սպասում էին: Երբ վկային ներս բերին, թէմուր պէյը իր գլխի շարժումով բանտապետին նշան արեց՝ բանտարկեալներին բակ հանել: Մի դուռ բացուեց ու բանտարկեալները բակ մտան:

Լրտեսը մօտեցաւ, մէկիկ-մէկիկ ցոյց տուեց Գարասէֆէրեաններից՝ Դաւիթին, Աղաջանին, Յարութինին, Զաքարիային, Մկրտիչին, Սմբատին եւ Սէֆէտինին:

— Լաւ, կրկին բանտ տարէք. — Հրամայեց թէմուր պէյը:

— Բայց, ՎԱՂԱՐՇ, ԽԵԴԵՆԻԿ ՈՒ ԴԵՐԵՆԻԿ պէյերին այն երկու անմեղ երիտասարդների հետ ազատ արձակել, — հաստատակամ ձայնով հրամայեց Մուրատը:

Իր որդու վրայ խոժոռ նայելով, ցած ձայնով ասաց թէմուր պէյը.

— Այդ երրուանից ի վեր է, որ հօրդ ասածի վրայ խօսք ես բերում:

— Ներողութիւն, հայր իմ, ես միայն քո հրամանը լրացրի: Զէ՞՞ որ դու արդարամտութեամբ որոշել էիր միայն մեղաւորներին պատժել:

— Լաւ, լաւ, զաւակս, դու իրաւացի ես: Առանց քո ասելուն էլ ես պիտի ազատ արձակեի անմեղներին, —

իրեն արդարամիտ ձեւացնելու եւ իր որդու հեղինակութիւնը պահպանելու համար, իր գլխի շարժումով բանտարեալին հասկացնել տուեց՝ Մուրատի հրամանը գործադրել:

\* \* \*

Այդ օր երեկոյեան Մուրատը յոգնած ու մտածելու տուն վերադարձաւ: Ֆաթման անհամբերութեամբ սպասում էր միջանցքում: Երբ Մուրատը ներս մտաւ, նա անձկութեամբ հարցրեց:

— Վկայութիւնն ինչո՞վ վերջացաւ, որդիս:

— Անպիտանը 7 Գարասէֆէրեաններին եւ երեք ուրիշ երիտասարդների ճանաչեց ու մատնանիշ արեց, իսկ Վաղարշին, Խեղենիկին, Դերենիկին եւ երկու երիտասարներին չէր տեսել, ցոյց չտուեց եւ նրանք ազատ արձակուեցին, անշուշտ իմ պնդումով: Հայրս, կարծեմ գոհ չմնաց իմ խառնուելուց, բայց, այնու-ամենայնիւ համաձայնուեց, քանի որ դա անժխտելի արդարութեան պահանջն էր:

— Ախ, Աստուած իմ, ինչո՞ւ ես թոյլ տալիս, որ այսքան անմեղներ անարդարացիօրէն նահատակուեն:

— Ի՞նչպէս թէ անմեղներ, մայր իմ, չէ՞ որ նրանք իսկապէս զէնքեր էին գնել, ուզում էին ապստամբուել:

— Որդիս, գիտեմ, որ ներքին արդարացի ձայնդ լոեցնում ես, խօսում ես, որպէս Թէմուր պէյի որդի: Ես ճանաչում եմ քո ազնիւ հոգին: Տես, որդիս, հօրդ ազգը - թուրքերը եկել են, բռնութեամբ, սրով ու թրով բռնագրաւել են ու տիրացել այս ժողովրդի հայրենիքին, թալանում ու խլում են նրա ունեցուածքը, բռնանում, բռնաբարում, կոտորում ու կախաղան են բարձրացնում այս շինարար ու աշխատասէր ժողովրդի զաւակներին՝ իրենց իսկ սեփական տան մէջ: Այս է ճշմարտութիւնը, որդիս, հոգուդ թագուն անկիւնում դու էլ հաւատացած ես դրանում . . .

Այս ասելով Ֆաթման, իր բազմոցին նստեց, յուզմունքով համակռւած սկսեց օրօրուել:

— Օ, մայր իմ, հասկանում եմ քեզ, ինձ համար դեռ ոչ պարզ մի ճշմարտութիւն է խօսում մէջդ . . . դեռ ամէն ինչ չի վերջացել, դատավարութեան միջոցին նոր վկաներ էլ կը ներկայանան, քանի որ գէնքեր չեն գտել, անմեղ կը համարուեն եւ ազատ կ'արձակուեն:

— Թէմուր պէյի ձեռքի<sup>ո</sup>ց պիտի ազատուեն: Ոչ որդիս, նրա մէջ միս ու արիւն է դարձել արիւն թափելը.

Տեսնելով որ մայրը կրկին յիշելով իր հօր արիւնառուշտ անցեալը ու լսելով օրուան չարազէտ դէպքը էլ աւելի է տանջւում, գուրգուրանքով հրաժեշտ տուեց ու իր սենեակը քաշուեց: Մենակ մնալով կրկին անդրադարձաւ մօր ասած խօսքերին, ներքուստ զգաց, որ չուտով, իր համար անյայտ մի նշանակալից գաղտնիք է բացուելու, որը խոռվեցնելու է իր ներքին աշխարհը, զգաց, որ իր քրիստոնեայ մօր - Ֆաթմայի կաթի հետ իր էութեան մէջ ներմուծուել է մի այլ պարունակութիւն, որից նրա հոգու խորքում միշտ գոյութիւն է ունեցել մի այլ երկնակամար՝ պատուած մի անթափանցելի վարագոյրով, որը չուտով, չուտով պիտի բացուի . . .

### Գլուխ ՓԶ.

Յուցադրական դատավարութեան նախապատրաստական աշխատանքները երկար տեւեցին, քանի որ թէմուր պէյը տեղեկացրել էր կեդրոնին, սպասում էր զինուորական գերագոյն դատարանի ներկայացուցիչն, աղմուկ էր բարձրացրել՝ համաթրքական զայրոյթ առաջացնելու հանդէպ ստրկացուած քրիստոնեայ ժողովուրդների, կամենալով բարձրացնել նաև իր հեղինակութիւնը:

Վերջապէս, 1650 թուի Յունուարի 5-ին, Վանի ձիւնառատ ճմեռնային այդ օրը տեղի ունեցաւ ցուցադրական դատավարութիւնը:

Երեք ժամ տեւող դատավարութեամբ, նախագահութեամբ թէմուր պէյի եւ ներկայութեամբ Գերագոյն դատարանի ներկայացուցիչի, որոշուեց անմիջապէս կախաղան հանել Օսմանեան Կայսրութեան «խորտակել» կամեցող օսման ժողովրդի թշնամի 10 դաւաճաններին, որոնց թւում, ինչպէս յայտնի է, գտնուում էին 7 տղամարդիք Գարասէֆէրեան տոհմից:

Ճիշդ նոյն օր, կէսօրից յետոյ վճիռն ի կատար ածուեց: Նախօրօք կառուցուած կախաղանների վրայ ճօճուում էին 10 դատապարտեալներ:

Դատարանը որոշել էր 10 «հայրենիքի դաւաճանների» մարմինները երեք օր կախուած թողնել, ի ցոյց կեավուրների, որպէսզի զիտնային, թէ ինչ է սպասում դաւաճաններին:

Քաղաքի հայութիւնը, փակուած իրենց տներում, միայն տանիքներից զարհուրանքով ու ողբալով հեռուից զիտում էին ճօճուող դիակները: Կախաղանի շուրջ հաւաքուողները՝ քաղաքի եւ մօտ ու հեռու բնակավայրերի մահմեղական բնակիչներն էին:

Ֆաթմայի նաժիշտը, դրացիներից լսելով դատավճիռի ու նրա գործադրման մասին, իսկոյն ներս

վազեց ու տիրուհուն գումբեց այդ լուրը:

Ֆաթման լսելով նաժիշտին, մէկէն գունատուեց եւ իր կանգնած տեղում՝ ծունկի եկաւ: Նաժիշտը, շփոթուած, իսկոյն հասաւ ոտքի բարձրացրեց իր տիրուհուն ու բազմոցի վրայ տեղաւորեց: Մի քանի բոպէ հանգիստ չնչելուց յետոյ, դիմեց իր նաժիշտին.

— Հիմա լաւ եմ, աղջիկս, թուլութիւնս անցաւ. ինձ համար մի բաժակ ջուր բեր եւ ապա գնա խոհանոց, կերակուրը տաք պահիր. շուտով հայր ու որդին գալու են ընթրելու:

Երբ նաժիշտը հեռացաւ, ֆաթման մի քանի վայրկեան անշարժ նստելուց ու խոր շունչ քաշելուց յետոյ, մի վճռական շարժումով իր տեղից վեր կացաւ, մօտեցաւ պատի մէջ շինուած պահարանին, շորերի ծալքից մի կապոց հանեց, արձակեց, մի փոքրիկ տուփ դուրս բերեց եւ իր գոզնոցի գրպանում պահելով մրմնջաց.

— Այլեւս չի կարելի համրերել. ճշմարիտ երդումս կատարելու օրը եկել է, պիտի հաշիւ տաս գազանային արարքներիդ համար, ո՞վ դու մարդակեր հրէշ, այլապէս դեռ շատերի գլուխն ես ուտելու:

\* \* \*

Թէմուր պէյը, դատարանի անդամների հետ, կանգնած դատարանի շէնքի պատշգամում, դիտում էին կախաղանների վրայ տատանուող մահապարտների դիակները: Մուրատը, չուզենալով այս քստմնելի տեսարանը դիտել, քաշուել ու փակուել էր իր գրասենեակում:

Դատարանի քարտուղար՝ ճապաղաքիթ Եռևութը, դառնալով թէմուր պէյին, քծնանքով ասաց.

— Երեք օր միայն կախեալ պիտի մնան, երեք օրից յետոյ կատարեալ անկախութիւն պիտի վայելին:

Թէմուր պէյ ոչինչ չպատասխանեց, իր խոժոռ դէմքը դարձնելով, միջանցք մտաւ ու Մուրատի

գրասենեակի դուռը բանալով ասաց.

— Մուրատ, ես շատ յոգնած եմ զգում ինձ, տուն գնանք, հանգստի պէտք ունեմ, այսօր ժամանակ չունեցայ անգամ ճաշելու:

Մուրատը վեր կացաւ ու միասին սկսեցին աստիճաններից վար իջնել: Նախավերջին աստիճանի վրայ թէմուր պէյի ոտը սայթաքեց, ձախ կողքի վրայ ընկաւ եւ ամուր զարնուեց վերջին աստիճանի սուր ծայրին: Մուրատն անմիջապէս հօրն բարձրացրեց, ոտքի կանգնեցրեց: Թէմուր պէյը իր ձախ կողքը ամուր բռնած սկսեց զուսպ ձայնով տնքալ, ուզեց քայլել բայց չկարողացաւ, մնաց կանգնած: Մի քանի սպաներ իսկոյն վազեցին, եկան օգնելու: Մէկը պէյի ձիակառքը կանչեց, Մուրատի հետ զգուշութեամբ վերցրին պէյին ու կառքում տեղաւորեցին:

Տուն հասնելուն պէս, կառապանի օգնութեամբ, թէմուր պէյին իր ննջարան տարան, հագուստները հանեցին ու պառկեցրին. նա աչքերը փակած շարունակ տնքում էր:

Ֆաթման, անսովոր հոգատարութեամբ, իսկոյն մի կղմինար տաքացրեց ու ամուսնու կողքին դնելով ասաց.

— Ֆաթմիւնը կը լաւացնի ցաւդ, կը հանգստանաս եւ անպայման պիտի ընթրես, որպէսզի ուժ ունենաս դիմանալու, ամբողջ օր ոչինչ չես կերել: Ֆաթման անմիջապէս դուրս եկաւ, նախ իր ննջարանը մտաւ, իր գրպանից հանեց փոքրիկ տուփը, բաց արեց, որի պարունակութիւնը մոխրագոյն փոշի էր, որից իր մատնոցի տարողութեան կէսը լեցրեց, թեթեւօքէն մատին անցուց եւ ապա խոհանոց մտաւ, նաժիշտի լեցրած պնակը՝ կաղամբի տերեւով փաթաթուած ախորժելի բուրմունք տարածող տոլման վերցնելով դուրս եկաւ միջանցք, ուր զգուշութեամբ իր մատնոցի պարունակութիւնը տոլմայի մակերեսը ծածկող հեղուկի (շուրպվայի) մէջ լեցրեց, դգալով խառնեց ու թէմուր պէյի ննջարան մտաւ:

Այս արարողութեան ընթացքում նրա սիրտն սկսեց արագութեամբ տրոփել, ձեռքերը դողալ ու իր մտքում Արարչին դիմելով մտմտաց.

— Արարիչ Աստուած, ներիր ինձ այս արարքիս համար, արդարացիօրէն տուած երդումս եմ ի կատար ածում: Եթէ անիրաւացի եմ՝ պատրաստ եմ պատիժս կրելու:

Անկողնում պառկած պէյը, տաք աղիւսի ներգործմամբ, մի քիչ հանգստացել էր: Ագահութեամբ պնակի ամբողջ պարունակութիւնը կերաւ:

**Մուրատը հօր զառնալով ըսաւ.**

— Պէյ իմ, հանգստացիր, ես գնում եմ անձամբ հէքիմ Հրանդին բերելու, նա քաղաքիս ամենայայտնի հէքիմն է, — Ու շտապ քայլերով դուրս եկաւ:

Հէքիմ Հրանդը 43 տարիներ առաջ, իշխանաց իշխան Ախիջանի ոտը բուժող բժիշկ Բարսեղի որդին էր, իր հօրմից սովորելով այդ մասնագիտութիւնը, հօր մահուանից յետոյ ինքը դարձել էր քաղաքի ամենաաչքառու հէքիմը:

Մուրատն ու հէքիմը դեռ չին եկել: Մի քանի բարձրաստիճան թուրք սպաներ իրենց պարտքն էին համարել թէմուր պէյին այցելութեան գալ, իրենց ցաւակցութիւնը յայտնել: Նրա շուրջ նստած, խրախուսում եւ յոյս էին տալիս, թէ, եթէ մի քանի օր անկողնում մնայ եւ իրեն տաք պահի, աստուծով կ'առողջանայ:

Բայց ընթրիքից յետոյ, թէմուր պէյն սկսեց կրկին տնքալ, ցաւերը վերսկսուել էին:

Երբ Մուրատն ու հէքիմ Հրանդը ներս մտան, ֆաթման միջանցքում սպասում էր: Անմիջապէս հէքիմին դիմելով, թուրքերէնով ասաց.

— Հէքիմ էֆէնտի, խոհրեմ, խոհանոց մտէք, ձեր ձեռները լուացէք եւ ապա հիւանդին կը մօտենաք:

Հէքիմ Հրանդը ֆաթմայի տիրական կեցուածքով արած առաջարկը օրինական համարելով, միասին խոհանոց մտան, իսկ Մուրատը հօր ննջարանը մտաւ

հօրն ասելու, թէ հէքիմը եկաւ, խոհանոցում իր ձեռներն էլ լուանում:

Ֆաթման խոհանոցի դուռը փակեց, կախուած սրբիչներից մէկը վերցնելով Հրանդին մօտեցաւ ու նրա ականջին, մաքուր հայերէնով, փափսաց.

— Տղաս, Հրանդ էֆէնտի, հիմակուան ասելիքս դու ես լսելու միայն՝ Արարիչ Աստուծոյ ներկայութեամբ, Արարիչ Աստուծոյ առջեւ դու մեղապարտ չես մնայ, արդարութեան ձայնին անսալով ես կատարելու խնդրանքս . . .

Հրանդը, յանկարծակիի եկած, ապշած եւ կարծէք հիպնոսացած լսում էր իր մայրենի լեզուով անթերիօրէն խօսող այդ հանելուկային խօսակցին: Ֆաթման, ուղիղ Հրանդի աչքերին նայելով շարունակեց:

— Ուրեմն տղաս, հարցումներ մի տա, միայն խնդրանքս կատարէ՝ հիւանդին ստուգելուց յետոյ, բոլորի ներկայութեամբ կը յայտարարես, թէ պէյի աջ երիկամունքը ծանր վնասուած է, հասկացա՞ք, նա իր պատիժն է կրելու . . . այս գաղտնիքը պահիր քո հոգու խորքում, գուցէ մի օր պարզուի . . . Դէ գնա, որդիս, Աստուած քեզ հետ:

Հրանդը համոզուելով, որ այդ հանելուկային կնոջ պահանջը արդարացի վրէժի լուծում կարող է լինել միայն, յիշելով նաև այդ նոյն օրուան աղետալի դէպքը, ամրացաւ իր մէջ այդ կնոջ խնդրանքի կատարման պարտադրանքը, հասկանալով միաժամանակ, որ իր արարքը դրժումն է բժիշկների անքակտելի հաւատամքի – անաչառորէն բուժելու բոլոր տեսակի հիւանդներին – բժշկական պարտադրանքը: Այնուամենայնիւ, վճռական ձայնով պատասխանեց Ֆաթմային:

— Այո, մայրիկ, երդւում եմ՝ նոյնութեամբ կատարել ձեր խնդրանքը ու յաւիտենական լոսւթիւն պահպանել:

Հէքիմ Հրանդ խոհանոցից դուրս եկաւ ու թէմուր պէյի ննջարանը մտաւ:

Ներկաներն իսկոյն պատկառանքով ոտքի կանգնեցին ու տեղ տուին Հրանդին՝ հիւանդին մօտենալու:

Հիւանդի ցաւերը սաստկացել էին, բայց նա այնքան թոյլ էր, որ անգամ դժուարութեամբ էր տնքում:

Հրանդը մօտեցաւ նրան, նրա աջ կողքը մերկացրեց ու սկսեց չօշափել. եւ ապա աչքերի կոպերը բարձրացրեց, պտուղի դեղնութիւնը եւ սպիտակապատ լեզուն՝ մատնեցին երդուեալ վրէժառու մայրիկի արարքը: Հրանդը հասկացաւ, որ հիւանդը թունաւորուած է: Երբ երկրորդ անգամ հիւանդի աջ կողքը սեղմեց, հիւանդը իսկոյն իր բերանը բացեց ու նուաղած ձայնով տնքաց:

Հէքիմ Հրանդն իր գլուխը շարժելով, հիւանդի դէմքին նայեց:

Շրջապատողներն իրենց հարցական հայեացքներն ուղեցին Հրանդի դէմքին: Հրանդը Մուրատին դառնալով, լրջութեամբ ասաց.

— Պէյի երիկամունքը ծանր վնասուած է, ըստ երեւոյթին, արիւնակալուել է: Եթէ մէզը արեան մէջ անցնի՝ շատ վտանգաւոր կը դառնայ: Առայժմս տաք պահէք, չոր նանայից թէյ պատրաստեցէք թող խմի, մի գուցէ ցաւերը մեղմանան եւ յուսանք, որ լուրջ հետեւանքներ առաջ չպիտի գան: Աւելին չի կարելի անել: Շարունակեցէք տաք պահել: Մինչեւ առտու եթէ վիճակը չլաւանայ, ես առտու կանուխ կրկին կ'այցելեմ եւ ձեռքիցս եկածը կ'անեմ: Հիմա հանգիստ թողէք իրեն, թող փորձի քնանալ:

Այցելուները Մուրատի առաջնորդութեամբ սենեակից դուրս եկան եւ միջանցքում սպասեցին հէքիմին, իմանալու համար հիւանդի ճիշդ վիճակը:

Երբ Հրանդը, իր պայուսակը վերցնելով, միջանցք դուրս եկաւ, Մուրատն ու այցելուները նրան շրջապատեցին եւ խնդրեցին, առանց թագցնելու իր կարծիքը յայտնել՝ պէյի առողջական վիճակի մասին: Հրանդը, մի բոպէ իր հայեացքը յատակին ուղելով եւ

ապա Մուրատին նայելով պատասխանեց .

— Բայտ երեւոյթին, նա իր ձախ կողքով այնքան ամուր է զարնուել աստիճանի սուր անկիւնին, որ երիկամունքը պայթել է . . . չեմ երաշխաւորում, եթէ մինչեւ վաղ առաւօտեան կարողանայ դիմանալ, մի գուցէ պայթած տեղը փոքր է, կը միանայ. Հակառակ պարագային, նրա այդ թոյլ վիճակում, նրա ապաքինումը հրաշք կը լինի: Եթէ մէզը արեան հետ խառնուի, ամրողջ մարմինը կը թունաւորուի: Ուրեմն, պատուէրս կատարեցէք, Մուրատ պէյ: Բարի գիշեր ձեզ, յարգելի պարոնայք:

Այս խօսակցութեան միջոցին ֆաթման իր սենեակի դրան ճեղքից լսեց Հրանդի բացատրութիւնը, ի սրտէ օրհնեց նրան՝ այդքան մեծ ինքնազոհութեան, համարձակութեան ու գաղտնապահութեան համար:

Հէքիմ Հրանդը տուն վերադառնալով, երկար անդրադարձաւ ֆաթմա խանումի մաքուր հայերէն խօսելու անբացատրելի գաղտնիքին, նրա՝ թէմուր պէյին ոչ եւս անելու գործում ու գտնելով թէմուր պէյին սպառնացող մահը, որպէս հատուցում իր այդ օրուան արարքին, որոշեց այլեւս չպապտել այդ առեղծուածյին գաղտնիքի պատճառը գտնելու:

Ամրողջ գիշեր մայրն ու որդին, հիւանդի անկողնի մօտ նստած, հետեւում էին նրա հետզհետէ թուլացող վիճակին: Ֆաթման իր զննիչ հայեացքը սեւեռել էր պէյի հետզհետէ մարող աչքերին, կարծէք ուզում էր կարդալ նրանցում այդ վայրկեանին նրա ասելիք վերջին խօսքը: Որչափ գոհ պիտի մնար ֆաթման, եթէ գիտենար, որ այդ հրէշը իր կեանքի վերջին վայրկեանում հասկացել է, որ իր առեւանգած հայ կնոջ ձեռքով իր արժանաւոր պատիժն է ստանում:

Արշալոյսին նա սկսեց մեծ ընդմիջումներով շնչել:

Մի անգամ միայն նրա անփայլ աչքերի դանդաղութեամբ չարժուող պտուղները նախ ուղղուեցին դէպի Մուրատը եւ ապա ֆաթմայի դէմքին ու անշարժացան: Նա իր հոգին աւանդեց:

Սարսափազդու այդ ջարդարարը ի՞նչ մտածեց իր կեանքի վերջին վայրկեանին՝ նա մեղանչե՞ց, զղջա՞ց, թողութի՞ւն խնդրեց Ալլահից իր կատարած գաղանութիւնների համար, թէ՞ ընդհակառակը, իր երկու զոհերի վրայ նայելով գոհունակութեամբ հրաժեշտ տուեց արիւնով ոռոգուած իր կեանքին:

Առաւոտեան ամբողջ քաղաքն իմացաւ, որ այդ ամենազօր մարդը աւանդել է իր հոգին՝ երիկամունքի պայմանական հետեւանքով:

Քաղաքի փոքրաթիւ թուրք բնակչութիւնը, անշուշտ, ափսոսանքով ընդունեց այդ լուրը, իսկ մեծամասնութիւն կազմող հայութիւնը՝ ընդհակառակն, հանգիստ շունչ քաշելով հրճուեց եւ իր վրէժը մասամբ լուծուած համարեց:

Երեք օր չարունակ մեռեալի դիակը մէջիտում պահեցին: Բազմաթիւ թուրք պաշտօնեաներ գալիս էին իրենց ցաւակցութիւնն յայտնելու: Մուրատն զրադուած էր այցելուներին ընդունելով: Իսկ Ֆաթման, իր սենեակում առանձնացած, դուրս չէր գալիս, չէր ուզում բռնազրօսիկ վշտահարի դերում գտնուել, կամ Աւետարանի վրայ տուած իր վրէժառութեան երդումի գործադրումից ստացած հոգեկան բաւականութիւնը նկատելի դարձնել: Միայն Մուրատն էր նկատել այդ եւ անհամբերութեամբ սպասում էր, որ իր մայրը, վերջապէս իր սիրտը բաց անի իր անտարբերութեան պատճառը, իր հոգում լեռնացած բազմանշանակալից գաղտնիքը բացայտի:

### Գլուխ ՓԷ.

Աղենց-Գարասէֆէրեանենց գերդաստանը, իրենց բոլոր ազգական-բարեկամներով սուզի մէջ էին: Թէմուր պէյի ոչ եւս լինելը չէր մեղմացրել նրանց վիշտը: Իշխանաց իշխան Ախիջանի ինդրանքով Մուրատը հրամայել էր՝ կախաղան բարձրացուած մահապարտների դիակները տէրերին յանձնել: Գարասէֆէրեանների բակի երեք կամարների տակ, եօթ զագաղներում ամփոփուած էին իրենց նահատակները: Վեհափառի արտօնութեամբ, նրանք յաջորդ օր թաղուելու էին նոյն կամարների տակ: Իսկ նոյն օր թէմուր պէյը, իր վճիռով դատապարտուածներից մէկ օր առաջ, արդէն հողի տակն էր անցել:

Յաջորդ օր, իրենց նահատակների թաղումից յետոյ, իշխանաց իշխան Ախիջանը կանչեց իր որդուն վաղարշին ու հրահանգեց.

— Զաւակս, դու Մուրատ պէյ թէմուր օղլու հետ շատ մտերիմ ես: Մենք էլ, նրանք էլ սպուրներ ենք: Գէթ ձեւականութեան համար եւ եթէ արժանի ես համարում՝ ընկերոջդ յարգելու համար, դու էլ գնա, մեր ամբողջ ընտանիքի անունից ցաւակցութիւն յայտնիր: Միւս կողմից էլ պէտք է մեղմացնել ներկայ լարուած վիճակը, ցոյց տալ, որ մենք նրանց հանդէպ թշնամանք չունենք: Այլ կերպ չենք կարող վարուել, պէտք է գէթ առերես այդպէս ցոյց տալ, խաղաղութիւն հաստատել:

Յաջորդ օր երեկոյեան վաղարշ՝ Մուրատին այցելութեան գնաց:

Մուրատն անձամբ դուռը բաց արեց եւ վաղարշին յարգանքով ընդունեց:

— Մեծ պէյ հայրիկիս, իմ եւ մեր ամբողջ ընտանիքի անունից թոյլ տուէք մեր ցաւակցութիւնը . .

Մուրատը կտրուկ, բայց մտերմարար ընդհատելով վաղարշին ասաց.

— Ոչ, Վաղարշ պէյ, թոյլ տուէք, որ ես առաջին հերթին իմ եւ մայրիկիս կողմից մեր ցաւակցութիւնը յայտնեմ՝ ձեր ընտանիքի եօթ անդամների եղերական վախճանի առթիւ . . . օհ, չգիտեմ դուք պիտի հասկանա՞ք ինձ . . .

Վաղարշը նախօրօք նկատել էր Մուրատի եւ իր հօր միջեւ զուտ պաշտօնական կապը, բայց չհամարձակւեց Մուրատի կողմից հօր մահուան առթիւ իր յայտնած ցաւակցութեան ընդհատումը վերագրել նրա անտարրերութեան։ Վաղարշի հարցական հայեացքին յաջորդող բացատրութիւնից խուսափելու համար, Մուրատը կրկին դիմեց Վաղարշին։

— Մայրս իրեն լաւ չի զգում, առանձնացել է իր սենեակում, չէի՞ք ուզում իրեն այցելել. շատ ուրախ պիտի լինի, ձեր մասին ես նրան շատ եմ պատմել։

— Հաճոյքով պէյ իմ, — գոհունակութեամբ պատասխանեց Վաղարշը։

Երբ երկուսով ֆաթմայի առանձնասեննեակը մտան, նա բազմոցի վրայ, բարձին յենուած հրահանգներ էր տալիս իր նաժիշտին։ Տեսնելով ներս մտնողներին, ժպտաց եւ Մուրատին դիմելով ասաց։

— Զաւակս, զգում եմ, որ հիւրդ միայն Վաղարշ պէյը կարող է լինել, գիտցիր, որ նրա ներկայութիւնը մեր տան մէջ ինձ համար մեծ պատիւ է։

Եւ ապա Վաղարշին դառնալով, իր դողացող ձայնը հաղիւ զսպելով ասաց։

— Բարի եկաք, պէյ իմ, խնդրեմ, համեցէք տեղ զրաւեցէք բազմոցի վրայ, — կրկին իր յուզմունքը դժուարութեամբ զսպելով շարունակեց. — Ես ձեզ առանց տեսնելու արդէն ճանաչում էի, ուրեմն պատկերացրէք, թէ որդիս որքան է յարգում ձեզ ու որքան է պատմել ինձ ձեր մասին։

Վաղարշը հիացմունքով նայեց բարութիւն ու գուրգուրանք ճառագայթող այդ ձեր կնոջ պայծառ եւ անցեալի աննման գեղեցկութիւնը դեռ պահպանող դէմքին եւ ակամայ խոնարհուելով ֆաթմայի պարզած

ու թեթեւօրէն դողացող ձեռքը բռնելով ու համբուրելով ասաց.

— Բարի Խաթուն մայրիկ, շատ ուրախ եմ, որ վերջապէս առիթ ունեցայ ձեզ անձամբ ողջունել: Ձեր պատուական որդին Մուրատ պէյը, նոյնպէս ձեր մասին այնքան շատ է պատմել ինձ, որ ես էլ առանց ձեզ տեսնելու՝ ձեզ պատկերացնում էի ճիշդ այնպէս, ինչպէս դուք իրականութեան մէջ էք. իսկ այժմ թոյլ տուէք՝ Հօրս - Ախիջան մեծ պէյի, իմ եւ մեր ընտանիքի անունից խորին ցաւակցութիւն յայտնել . . .

— Թողէք այդ, Վաղարշ պէյ, — իր ձեռքի կտրուկ շարժումով Վաղարշին ընդհատեց Ֆաթման, — չարժի, կարիք չկայ այդ ցաւակցութեան, ընդհակառակ, ես եմ ուզում իմ խորին ցաւակցութիւնն յայտնել ձեր ընտանիքին հասցուած . . . մեծ կորուստի առթիւ, անշուշտ պատկերացնում եմ թէ ձերոնք ինչպիսի ծանր սուգի մէջ են:

Վաղարշը զարմացաւ մօր եւ որդու նոյնանման պատասխանը լսելով, որով կարծէք, ասել էին ուզում, թէ իրենց վիշտը կարեւոր չէ, սգաւորը միայն Գարասէ-ֆէրեան ընտանիքն է: Նա իր զարմացկոտ հայեացքը Մուրատին ուղղեց եւ ապա Ֆաթմային դառնալով պատասխանեց.

— Շնորհակալութիւն, խաթուն մայրիկ, ձեր անկեղծ ցաւակցութեան համար, շատ բարի էք:

Վաղարշի այս պարզ խօսքերը խոռվեցին Ֆաթմայի հոգին: Ուզեց վեր կենալ, զրկել Վաղարշին, իր զրկին սեղմել, ճակատն համբուրել ու ասել՝ «Անուշիկ պալիկ ջան, վերջին անգամ, 1606 թուին, երբ ես հօրեղորդ ընտանիքի հետ, Վահագնին զիրկս առած, Կարմիր դեմքի զղեակում ամարանոց էինք գնացել, դու էլ 4-5 ամսական փոքրիկ մանկիկ էիր, որչափ եմ քեզ զիրկս առել, ստինքովս կերակրել ու գուրզուրացել եմ զրադ»: — Բայց իրեն զսպեց ու սրտազին խօսակցութիւնը շարունակուեց:

Մէկ ժամ յետոյ, Վաղարշը խոր տպաւորուած,

հրաժեշտ տուեց ու տուն վերադարձաւ, առանց իմանալու, որ իր մտերիմ ընկեր-բարեկամը եւ նրա «մայր» Ֆաթմա խանումը, իր հարազատներն են, իրենցից խլուած, ՅԱՓՇՏԱԿՈՒԱԾ ՀՈԳԻՆԵՐ են:

\* \* \*

Մուրատը Վաղարշին ճամբու դնելուց յետոյ իր սենեակը վերադարձաւ, անկողնի վրայ պարզուեց: Չորրորդ օրն էր ինչ հոգսերի եւ անմենաբանելի մտածմունքների բեռի տակ, հոգեկան խոռվայոյզ օրեր էր ապրում: Կրկին բազում մտքեր ներխուժեցին նրա զլխում՝ անդրադարձաւ իր մօր վերաբերմունքին՝ ամուսնու հանդէպ, նրա մէջ ծագած անբացարելի անտարբերութեան՝ հանդէպ իր ամուսնու մահացման, Վաղարշի ցաւակցական խօսքերի ընդհատումին՝ իր եւ իր մօր կողմից, իր հօր կատարած դաժանութիւններին, քրիստոնեաներին հանդէպ իր մէջ ծագած անբացարելի համակրանքին եւ վերջապէս՝ իր մօր քրիստոնեայ լինելու հանգամանքին. եւ ի վերջոյ այն եզրակացութեան յանգեց, որ այդ բոլոր գաղտնիքների բանալին գտնւում է իր սիրեցեալ մօր մօտ: — «Այո, նա խոստացել է իր սիրտը բաց անել. բաւական է ինչքան նա իր լուսիթեամբ տառապում է եւ տառապեցնում է նաև ինձ: Վաղ պէտք է խօսի վերջապէս»:

Նրա մտքերը անորոշութեան ովկեանում երկար լողացին, մինչեւ որ յոգնածութիւնը յաղթահարեց եւ նա, առանց հանուելու խոր քունի մէջ խորասուզուեց:

\* \* \*

Յաջորդ առաւօտեան երբ նա զարթնեց տեսաւ, որ մայրը իր անկողնի եզրին նստած իր մազերն էր չոյում:

— Վեր կաց պաղ ջրով լուսցուիր, որդիս, կը թարմանաս: Նախաճաշն արդէն պատրաստ է, — գուրզուրանքով մրմնջաց Ֆաթման:

Նախաճաշը լուրիթեամբ անցաւ, բայց ֆաթման նկատեց, որ Մուրատը սպասողական վիճակով, չարունակ իրեն է նայում: Նախաճաշից յետոյ միասին վեր կացան ու դիմեցին դէպի ընդունարան: Երբ միասին քազմոցի վրայ տեղ գրաւեցին, Մուրատը զուսպ անհամբերութեամբ մօրը դիմեց:

— Մայր իմ, չե՞ս կարծում, որ ես հոգեկան խաղաղութիւն պէտք է գտնեմ, բաւական է, երկար սպասեցի, պէտք է որ դու գաղտնիքներիդ գուռը բաց անես, ես տառապում եմ անորոշութեան մէջ. տեսնում եմ, որ նոյն վիճակում ես գտնում նաեւ դու:

— Այո, պէյ իմ. Այս ամբողջ գիշեր չեմ կարողացել քնանալ, համոզուած էի, որ դու պիտի գայիր՝ հոգեկան տառապանքներիդ վերջ տուող խոստումս լսելու: Այս օր, հէնց հիմա մօտեցել է ժամը: Դուրս եկ, պատուիրիր նաժիշտին, որ մեզ չխանգարի, իսկոյն վերադարձիր, միջանցքի եւ այս սենեակի դռները ներսից փակիր ու եկ կողքիս նստիր:

Մուրատը անմիջապէս դուրս եկաւ, մի քանի րոպէներ յետոյ վերադարձաւ ու ֆաթմայի կողքին տեղ գրաւեց:

Ֆաթման իր ձեռքը Մուրատի ուսին դնելով խօսեց:

— Այժմ հանգստութեամբ պիտի լսես ինձ, իշխանս, հարցեր չպիտի տաս ու չպիտի ընդհատես ինձ. զինուորականի կարգապահութեամբ ու համբերատարութեամբ ունկնդրիր:

— Այո, այո, մայր իմ, խոստանում եմ, վերջապէս սկսիր:

— Ուրեմն լսիր պէյ իմ: Սրանից 43 տարիներ առաջ րոնութեամբ ստիպուել էի երդուել, որ այսօր քեզ պատմելիք գաղտնիքները հետս գերեզման պիտի տանէի: Այո, ձեռքս Ղուուանի եւ մեր Աւետարանի վրայ դրած այդպիսի երդում եմ տուել: Բայց այդ սուտ երդումից զատ իսկական երդում էի տուել՝ վրէժինդիր լինել, յարմար պարագային պատժել անմեղներին կոտորող արիւնարբու դահիճին, ուրիշների պատիւն ու

Հոգին յափշտակող մարդ-գաղանին։ Եւ ահա, չորս օր առաջ, երդումիս կէսը կատարելով յետոյ ամբողջ գաղտնիքը քեզ պատմելով ամբողջովին կատարած կը լինեմ՝ 43 տարիներ առաջ տուած երկու երդումներիս մէկը – ամենաարդարացին, ամենամաքուրը։ Հիմա, փոխհատուցման, վրիժառութեանս կատարեալ ամբողջացումը քեզանից է կախուած, քո մաքուր, անարատ հոգու արդարադատ վճիռից։ Ուրեմն, հիմա պարզում եմ՝ քեզ խոռվեցնող գաղտնիքը, պաղարիւնութեամբ լսիր։

— Այո, այո, մայր իմ։ վերջապէս սկսիր, — անհամբերութեամբ կլանուած գոչեց Մուրատը։

— Ուրեմն, պէյ իմ, սառնարիւնութեամբ լսիր, քաջութեամբ դիմացիր ու հաւատա ինձ։ նախ, ես քո մայրը չեմ, այլ քո դայեակն եմ, քո ստնքատուն . . .

— Ոչ, ոչ, մայր իմ, անուշիկ մայր իմ, դա ճիշդ չէ, — իր գլուխն ու համբերութիւնը կորցրած կանչեց Մուրատը։

Ֆաթման Մուրատի ուսերից քռնելով, նրան սթափեցնելու համար ուժգին շարժեց, յիշեցրեց, որ խօսք է տուել իրեն չընդհատել եւ ապա շարունակեց։

— Այո, իշխանս, լսիր ինձ, ճշմարիտն եմ ասում, ես քո դայեակ Սալրին եմ, քո ստնքատուն, իսկ դու Մուրատ չես, այլ Գարասէֆէրեան մեծ իշխան Ախիջան պէյի կրտսեր եղբայր Յակորջան իշխանի զաւակ վահագն ես։ Թէմուր պէյը քո հայրը չէր, այլ քո ծնողների եւ երեք հրեշտականման քոյրերիդ դահճճն էր։ 1606 թուի Մայիս 14-ին, Կարմիր գետի ափին ձեր դղեակի ճամբու վրայ, Թէմուր պէյը անձամբ, իր կատաղի ենիշէրիներով անսպասելիօրէն յարձակուեց, առանց պատճառի սրախողիսող արեց հարազատներիդ, 12 թիկնապահներին եւ սպասաւորներին։ Նա քեզ եւ ինձ խնայեց միայն այն պայմանով, որ ես երդուեմ մոռանալ իր արիւնոտ արարքը, ասեմ, որ ես իր կինն եմ եղել եւ դու էլ մեր երկուսի «Հարազատ» զաւակն ես։ Ես համաձայնուեցի նրա կինը դառնալ եւ այդ սուս

երդումը տուի քո թանկագին կեանքը փրկելու համար։ Բայց ինձ չյաջողուեց աւելի շուտ «խոստմնադրոյժ» լինել, վրէժս լուծել ու քեզ քո հարազատներին վերադարձնել։ Այժմ թէպէտ ուշ, բայց վրէժը լուծեցի։ Այս, իշխանս, գիտցիր, որ չորս օր սրանից առաջ, յարմար առիթ գտնելով, ես թունաւորեցի, ծնողներիդ դաշիճին ու մեզ յափշտակողին. եւ նա իր որոշումով կախազան հանուած քո Եօթ արիւնակիցներից, — հօրեղբայրներից ու հօրեղոր որդիներից մէկ օր առաջ մտաւ գետնի տակ։ Գիտցիր նաեւ, իշխանս, թէ ինչո՞ւ վաղարչ պէյի եւ նրա զաւակների հանդէպ անկեղծ սէր ու համակրանք էր ծագել մէջդ, թէ ինչո՞ւ երկուսովզ այդքան հարազատ մտերիմներ էք դարձել, — ձեր արեան ձայնն է մօտեցրել ձեզ իրարու, ձեր երակներում նոյն արիւնն է հոսում։

— Օչ, ճակատագիր, որքան անգութ ես եղել մեր հանդէպ, — Սալրիի ձեռքը բռնելով եւ իր այտին սեղմելով գոչեց Վահագն։

— Արիացիր, իշխանս, այժմ խզմիդ եւ արդարութեան առջեւ քննութիւն ես տալիս, դու անմեղ ես, մաքուր հոգիդ անպարտ է, սառնարիւնութեամբ որոշէ անելիքդ։

— Օչ, ինչ գերմարդկային ինքնազոհութիւն է, իմ անգին ստնքատու նանիկս. 43 տարիներ շարունակ զոհարերել ես ինքինքդ ինձ համար, ասի՛ր, ասի՛ր, ինչպէս եւ ինչով կարող եմ վարձատրել քեզ։

— Ես այժմ ինձ վարձատրուած եմ համարում, իշխանս. երդումս ամբողջութեամբ կատարել եմ եւ դու՝ իմ իշխան Վահագն ես զգում քեզ։

— Ազնիւ նանիկս, թոյլ տուր, որ սրանից յետոյ քեզ այդպէս անուանեմ։ Ես միշտ ինձ երջանիկ եմ զգացել քեզ հետ։ Քո իմ հանդէպ ցուցարերած սէրն ու զուրգուրանքը միշտ անարատ մայրական է եղել, բայց թէմուր պէյի հանդէպ՝ երբեք, երբեք հարազատի զգացմունք չեմ ունեցել։ Տարօրինակ է, կարծէք ներքուստ զգում էի, որ մեր միջեւ հարազատութեան

կապ գոյութիւն չունէր, մեր փոխ-յարաբերութիւնները միշտ պաշտօնական էին: Ես տեսնում էի նոյնպէս քո բռնազրօսիկ հպատակութիւնը, քո սահմանագծուած վերաբերունքը նրա ներկայութեան ու քո անտարբերութիւնը նրա հիւանդութեան կամ բացակայութեան պարագաներին: Երբ հասունացայ ու տեղեկացայ քո քրիստոնեայ լինելը, բռնութեամբ կնութեան վերցնելը, նոր հասկացայ, թէ ինչու ատելութեան հասնող անտարբերութեամբ ես վերաբերում այդ մարդու հետ: Եւ երբեմն ես անզրադառնում էի իմ վիճակին, ինքս ինձ լիարժէք անհատականութիւն չէի համարում. Քրիստոնեայ մօր ու խստաբարոյ մահմետական հօր զաւակ, բայց զգում էի որ քրիստոնէական յատկութիւնները գերակշռում էին մէջս: Ես զգացի, որ նրա մահւանից յետոյ դու հոգեպէս հանգստացար, բայց չզիտէի, որ վրիժառութեանդ գործադրումից ստացած բաւականութիւնն էիր ըմբոշխնում. . . համոզուած եմ՝ Արարիչը քեզ պիտի ների . . .

Վահագնի այս խօսքերի վրայ Սալրին նրա ճակատը համբուրելով ասաց.

— Իշխանս, ես օրհնում եմ քեզ, թող Արարիչը քեզ էլ վարձատրի, դու հոգովդ անարատ ես մնացել, բայց քո ներկայ վիճակը շատ լուրջ է, դու պէտք է իմաստութեամբ օգտագործես քո դիրքը, գնա, ինքդ որոշիր անելիքներդ, ես վստահ եմ խոհեմութեանդ վրայ, այժմ խիզճս ու հոգիս հանգստութիւն գտան, դու քո կեցուածքով ամենամեծ միտթարութիւնը դարձար ինձ համար, այո, ես լիովին վարձատրուած եմ:

— Այո, բարի նանիկս, պէտք ունիմ առանձնանալու . . . ներքին աշխարհս փոթորկւում է, ալեկոծւում: Վաղուանից արձակուրդ պիտի վերցնեմ՝ ինքս ինձ հետ խորհրդակցելու, անելիքս որոշելու . . . Զէ՞ որ ես այսօրուանից մի նոր մարդ եմ դարձել, վերածնուել եմ, ուրեմն, կեանքիս մի նոր ճամբար եմ որոնելու: Դու էլ հանգստացիր, նանիկ ջան:

Այս ասելով Վահագն Սալրիի ձեռքը համբուրեց ու

սենեակից դուրս եկաւ:

Սալրին նրա յետեւից մրմնջաց ·  
— Աստուած քեզ հետ, իշխանս:

### Գլուխ ԺԲ.

Յաջորդ օր Վահագն մէկ ամսով արձակուրդ վերցրեց:

Իր վերադիր մարմնի պաշտօնեաները մտածեցին՝ «Անշուշտ, հօր մահը մեծ հարուած եղաւ նրա համար, թող հանգստանայ»:

Արձակուրդ վերցնելուց յետոյ Վահագն խուսափեց իր շրջապատից: Օրուան մեծ մասը անց էր կացնում քաղաքից դուրս, դէպի արեւելք երկարող ծառաստանում, իր նանիկին տանը մենակ թողնելով, որը մտածում էր՝ «Թող առանձնանայ, որոշի իր անելիքները»:

Վահագն, երբ առաւօտները դէպի ծառաստանն էր ուղղում, անցորդները յարգանքով բարեւում անցնում էին: Երբ ծանօթ թուրքերի էր հանդիպում, նա իր մտքում մտմտում էր՝ «Եթէ սրանք զիտենան, որ ես «կեավուրի» զաւակ եմ, անշուշտ այլ վերաբերմունք պիտի ցոյց տան . . . արդեօք, լաւ չի՞ լինի, եթէ գնամ Ախմամարի մեծ Քէշիշից խորհուրդ հարցնեմ», (նա նկատի ունէր Ախմամարի կաթողիկոս Վեհափառ Մարտիրոսին) ես նորից հայերին միանամ: Զէ՞ որ նանիկս ինձ ասեց, որ ես Մեռոնով մկրտուած եմ . . . ինչ է մնում ինձ անելու, Աստուած իմ . . .»:

Եւ այսպէս, երկու շարաթներ շարունակ Վահագն առաւօտներին դուրս էր զալիս ու երեկոներին վերադառնում: Նա այլեւս ուշադրութիւն չէր դարձնում իր վրայ՝ երեսի մազերը երկարել էին, քանի որ տրամադրութիւն չունէր անգամ սափրուելու, լաւ չէր սնւում, որի հետեւանքով բաւականին նիհարել էր:

Սալրին, չնայած մեծ մտահոգութեան էր մատնըւած, բայց թողել էր, որ Վահագն իր անելիքները ինքը

որոշի:

Արձակուրդի երրորդ շարաթուան սկզբին, երեկոյ-  
հան երբ տուն վերադարձաւ, արդէն որոշել էր իր  
անելիքը: Տուն մտնելուն պէս իր նանիկի սենեակը  
մտաւ, բարեւեց ու հաստատակամութեամբ ասաց.

— Նանիկս, ես այսօր վերջապէս որոշեցի անելիքս:  
Պէտք է մի միջոց գտնել, մեծ հօրեղրօրս - Ախիջան պէյի  
հետ գաղտնի տեսակցութիւն ունենալ: Նա իմաստուն  
մարդ է, ինձ խորհուրդ կուտայ. բայց ի՞նչ կերպ գլուխ  
բերել այդ տեսակցութիւնը, որ գաղտնի մնայ. բացի  
դրանից, իմ յանկարծակի եւ անհաւատալի երեւան գալը  
կարող է այնպիսի ազգեցութիւն գործել նրա վրայ, որը  
վտանգի նրա առողջութեան. նա ծեր մարդ է, արդեօք  
կը դիմանա՞յ նման անսպասելիութեան . . . 43  
տարիներից յետոյ մեռելը յարութիւն է առնում,  
հաւատալի՞ է նման հրաշքը . . .

— Շատ լաւ ես մտածել, իշխանս, այդ ամենաճիշդ  
միջոցն է նման առեղծուածային դրութիւնը լուծելու, —  
համոզուածութեամբ պատասխանեց Սալրին, — ես շատ  
լաւ ծանօթ եմ իշխանական պալատի քունջ ու  
պուճախներին, ասեմ քեզ, թէ ինչպէս եւ երբ կարող ես  
տեսակցութիւն ունենալ մեծ իշխան Ախիջան պէյի հետ:  
Մի վախենայ, նա այդ տարիքում զեռ առողջ է,  
ամրասիրտ ու հզօր կամքի տէր: Գիշերով պէտք է գնաս,  
կէս զիշերին, երբ տներում բոլոր լոյսերը մարած կը  
լինեն: Կը գնաս ոչ թէ զիշաւոր մուտքի դուռը կը  
ծեծես, այլ Սուրբ ծիրանաւորի փողոցում բացուող  
փոքրիկ դուռը կը ծեծես: Նախ երկու անգամ կը  
զարնես, յետոյ, մի փոքր ընդմիջումից՝ երեք անգամ  
եւս: Ժամանակին ես զիտէի, որ այդպէս ծեծողը իսկոյն  
ներս էր առնելում: Այդ զրան մինչեւ հիմա էլ հսկում է  
բարի ծերուկ, մեծ իշխանի մատակարար Մարկոսը,  
որին կարծեմ դու ճանաչում ես: Նա է ինձ ծեր  
պալատը բերել, նրա հովանաւորութեամբ եմ ես  
դաստիարակուել: Երբ հասունացած աղջիկ դարձայ,  
վերջի տարիներին հրաշագեղ ազնիւ իշխանուհի

ժայրիկդ ինձ վերցրեց, որպէս քո ստնքատու-դայեակ:  
Գնա իշխան, Աստուած քեզ հետ, իմ կարօտալի  
ողջոյններս էլ չմոռնաս հաղորդելու:

## Գլուխ ԺԹ.

Ուշ գիշեր էր: Վահագն, դիտումնաւոր կերպով իր սպայական նոր հազուսաները հագաւ, որպէսզի փողոցներում հսկող ոստիկանների մօտով անարգել անցնի: Լապտերը վերցնելով տանից դուրս եկաւ:

Քաղաքի հրապարակից անցնելով ուղղուեց դէպի Աղենց թաղ. անցաւ Սուրբ ծիրանաւոր փողոցի երկարութեամբ: Երբ այդ փողոցի վրայ բացուող Գարասէֆէրեանենց տան դրան մօտեցաւ, լապտերը մարեց եւ իր կողքից կախուած սպայական սուրբ դաստակով սկսեց, ըստ նանիկի ցուցմունքի, դուռը ձեծել:

Քիչ յետոյ աստիճաններից վար իջնող ոտնաձայներ լսուեցին: Իջնողը դրան մօտենալով հարցրեց:

— Ո՞վ է:

— Մարկոս եղբայր, ներիր, այս անժամանակ պահին եկել եմ՝ ոչ թէ ողորմութիւն խնդրելու, քաւ լիցի, այլ եկել եմ մեծ իշխանի բարի ու փրկարար խորհուրդը լսելու:

Մարկոսը, դուռը ձեծողի մաքուր թուրքերէն գրական լեզուով խօսելն ու իր անուն տալը լսելով զարմացաւ եւ առանց կշտամբանքի, մեղմութեամբ հարցրեց.

— Լաւ, ինչո՞ւ ցերեկով չէք գալիս, էֆէնտի: Մեծ իշխանը քնած է, ի՞նչպէս կարելի է այս ուշ ժամին նրան արթնցնել. վաղը եկէք:

— Ոչ, Մարկոս եղբայր, ես ստիպուած եմ այս ժամին գալ, որ ոչ ոք ինձ չտեսնի, ցերեկով, անկարելի է, խնդրում եմ, Մարկոս եղբայր, իմաց տուր մեծ իշխանին, գիտեմ, որ նա չի մերժի, խնդրում եմ, զեկուցիր, չես զղջայ . . .

Այդ միջոցին, աստիճանների վերից լսուեց իշխանաց իշխանի ձայնը.

— Ի՞նչ է պատահել, Մարկոս. ո՞վ է:

— Չերդ մեծութիւն, մի թուրք է, ուսումնական մարդ է երեւում եւ ինձ էլ կարծես ճանաչում է. ասում է, որ ձեր խորհուրդին կարիք է զգում, ցերեկով չի կարող գալ, խնդրում է . . .

— Այս ժամին եկողը, անշուշտ ճարահատեալ է, խորհուրդի եւ օդնութեան կարիք է զգում: Ներս առ, թող վեր բարձրանայ սրահում սպասի, մինչեւ ես հագնուեմ:

Լսուեց մեծ իշխանի հեռանալու ոտնաձայնը:

Մարկոսը երբ գուրը բաց արեց ու իր բռնած մոմի լոյսով լուսաւորուեց Վահագնի դէմքը, շփոթուած ու խոնարհուելով մրմնջաց.

— Թէմուր օղի պէյ, այդ դո՞ւք էք, ներողութիւն, հապա ինչո՞ւ չյայտնեցիք:

— Ոչինչ, Մարկոս եղբայր, ներելու կարիք չկայ, ինձ վեր առաջնորդիր:

Մարկոսն առաջ ընկաւ, Վահագնի առջեւից աստիճանները լուսաւորելով, միասին վեր բարձրացան:

Սրահի մոմերն վառելուց յետոյ Մարկոսը Վահագնին դիմեց.

— Բազմոցի վրայ տեղ գրաւեցէք, պէյ իմ. Հիմա մեծ իշխանը կգայ:

— Ո՛չ, չնորհակալ եմ, բարի Մարկոս եղբայր, ես կանգնած կը մնամ:

Մարկոսը նկատեց, որ «Թէմուր օղին» շատ յուզուած էր, իր արտասուրբներով լի փայլող աչքերով իր շուրջն էր դիտում, անհամբերութեամբ սրահի մէջ բացուող դրան՝ է նայում:

Քիչ յետոյ դիմացի դուռը բացուեց եւ իշխանաց իշխանը, մուշտակի մէջ փաթթուած ներս մտաւ:

Երբ նայեց եկողին ու ճանաչեց, մեծ զարմանքով հարցրեց.

— Այդ դո՞ւք էք, Թէմուր օղի պէյ, ի՞նչ է

պատահել, այդ ի՞նչ օրի էք . . . իշխանաց իշխանը չկարողացաւ իր խօսքը վերջացնել, Վահագն արագութեամբ մօտեցաւ, ծունկի եկաւ, բռնեց իշխանի երկու ձեռները, համբուրեց եւ իր այտերին սեղմելով ազատութիւն տուեց իր փխրուող սրտին ու հառաչանքով պատասխանեց.

Այս, իմ մեծ իշխան, մինչեւ սրանից երեք շարաթներ առաջ ես էլ էի կարծում, որ Թէմուր պէյի որդին Մուրատն եմ, բայց Թէմուր պէյի թաղումից մէկ օր յետոյ, իմ անգին ստնքատու նանիկը, որը դեռ ապրում է, եւ որին մինչ այդ կարծում էի, որ հարազատ մայրս է, ինձ պատմեց, թէ ինչպէս 1606 թուին Կարմիր գետի մօտի մեր դղեակի առջեւ, Թէմուր պէյը իր ենիշէրիներով ծնողներիս, քոյրերիս ու միւսներիս կոտորել է, իսկ Սալրի նանիկիս ու ինձ խնայել է, միայն այն պայմանով, որ նանիկս Աւետարանի եւ Ղուռանի վրայ երդուի, որ ինքը թէմուր պէյի կինն է լինելու եւ ես էլ իրենցնից ծնուած որդին եմ համարուելու: Եւ նանիկս, իմ կեանքը փրկելու համար երդուել է, բայց միհեւնոյն ժամանակ նաեւ իր ներսում իսկական երդում է տուել՝ վրէժինդիր լինել: Եւ ահա, 43 տարիներ տառապելուց յետոյ, երեք շարաթներ առաջ, երբ թէմուր պէյը 10 հայերի, նոյն թւում մեր հարազատներից 7-ին կախազան բարձրացրեց, ճիշդ նոյն օրն էլ Սալրի նանիկն իր երդումը ի կատար ածեց՝ թէմուր պէյին ի'ր ձեռքով թունաւորեց: 43 տարիներ շարունակ մեր երկուսի յափշտակման գաղտնիքը իր սրտում պահած, յափշտակիչին թունաւորելուց մէկ օր յետոյ, իր վրէժը լուծած համարելով, երեկոյեան պատմեց ինձ ամրող ճշմարտութիւնը: Երեք շարաթներից ի վեր, ես խելայեղի նման թափառում էի քաղաքից դուրս, ամայի վայրերում, չէի կարողանում որոշել անելիքս: Եւ այսօր երեկոյեան, վերջապէս, որոշեցի գալ ու ձեր խորհուրդը հարցնել: Իմ անձնուէր ստնքատու Սալրի նանիկս էլ անհրաժեշտ համարեց ձեր խորհրդին դիմել, խնդրեց նաեւ անհուն կարօտով իր

ողջոյնները յղել ձեզ, իշխանուհուն եւ տոհմի բոլոր անդամներին: Դուք հասկանում էք, անշուշտ, որ պարագաների թերումով, առայժմս նա չի կարող գալ, անձամբ ձեր միսիթարանքը վայելել . . . Հիմա անգին հօրեղբայր իմ, ասացէք, ի՞նչ է լինելու վիճակս . . . թուրք կին ունեմ, թլփատւած թուրք զաւակներս, պաշտօնս, հեղինակութիւնս, միջավայրս թողնեմ հեռանա՞մ, ո՞ւր, ի՞նչ է լինելու վիճակս . . . , ազնիւ հօրեղբայր՝ խորհուրդ տուէք . . .

Վահագնի խօսակցութեան ամբողջ ընթացքում՝ իշխանաց իշխանը յանկարծակիի եկած այդ անսպասելի անակնկալից, անսահման յուզմունքից իր տեղում քարացել կանգնել էր: Վահագնի վերջին խօսքերը նրան սթափեցրին, եւ նա առանց կարողանալու մէկ բառ անգամ արտասանել, բարձրացրեց Վահագնին, իր կրծքին սեղմեց ու սկսեց երջանկութեան արցունքներ թափել:

Այս սրտառուչ տեսարանին ականատես եղան նաեւ պալատին հաւատարմօրէն սպասարկող ծերունիներ՝ Մարկոսն ու Շաւարշը, որոնք ուրախութեան յուզմունքից լալով ու դողալով կանգնել՝ իրենց արցունքներն էին սրբում:

Իշխանաց իշխանը, մէկէն սթափուելով, կերկերուն ձայնով Շաւարշին ու Մարկոսին դիմեց.

Շաւարշ, Մարկոս, ի՞նչ էք քարացել կանգնել. կանչեցէք Ալմաստին, Վաղարշին, Դերենիկին եւ Խեղենիկին. ասացէք, որ հրաշք է տեղի ունեցել, աներեւակայելի մի հրաշք . . . ասացէք, ասացէք, որ հանդերձեալ կեանքից մեր հարազատն է վերադարձել . . .

Մի քանի բոպէներից յետոյ, իշխանուհի Ալմաստը, Վաղարշը, Խեղենիկն ու Դերենիկը, արդէն տեղեակ տեղի ունեցած հրաշքին, ներս վազեցին:

Իշխանուհի Ալմաստը, որն արդէն 80-ը անց էր, արագութեամբ մօտեցաւ իր ամուսնուն, նրա գրկից խլեց Վահագնին, գրկելով սկսեց նրա ճակատը համբուրել, դէմքը շոյել ու լացակումած ձայնով մրմնջալ.

— Որդի՛ս, որդի՛ս, անբախտ կորուցեալ որդիս,  
սա ինչ հրաշք է, ինչ բախտաւորութիւն . . .

Եւ ապա մօտեցան Վաղարշը, Դերենիկն ու Խեղե-  
նիկը, իրենց գիրկն առան Վահագնին, երջանկութեան  
յուղումնալի խօսքեր տեղացին:

Առանձին փոխաղարձ մտերմագին յուզմունքով  
տեղի ունեցաւ Վաղարշի ու Վահագնի գրկախառնումը:  
Եղբայրական սրտագին փարումից յետոյ, Վաղարշը,  
Վահագնի ուսերից բռնելով ասաց.

— Վահագն, եղբայր իմ, մեր ծանօթութեան  
առաջին իսկ վայրկեանին մի տարօրինակ զգացմունք,  
մի անբացատրելի անկեղծ մտերմութեան զգացմունք  
ծագեց հոգում քո հանդէպ: Ես զգացի նաեւ, որ այդ  
զգացմունքը փոխաղարձ էր, բայց՝ անբացատրելի . . .  
յիշում ես այն օրը, երբ մեր վերի պատշգամում նատած  
օշարակ էինք ըմպում, երբ իմ երկու փոքրիկները ներս  
վաղեցին եւ այդ րոպէին, ինձ համար դեռ նոյն  
անմեկնարանելի պատճառով, նրանք առաջին հերթին  
քեզ մօտեցան, որպէս հարազատի ընդունեցին քեզ, եւ  
ես տեսայ ու համոզուեցի նաեւ, որ դու էլ, որպէս  
հարազատներիդ, գուրգուրացիր նրանց վրայ: Երբ դու  
հրաժեշտ տուիր ու դուրս եկար, գիտե՞ս մեծ աղջիկս —  
Անահիտը, ինչ հարց տուեց: — Հարցրեց — «Հայրիկ,  
նորի՞ց է գալու այս հօրեղբայրը. ես նրան շատ եմ  
սիրում»: Անահիտի համակրանքը քո հանդէպ սո-  
վորական երեխայական զգացմունքի արդիւնք չէր, այլ  
նրա անմեղ հոգում հարազատի հանդէպ ծագած զգաց-  
մունքի, մեր երակներում հոսող նոյն արիւնի  
հաղորդակցման դրսեւորումն էր:

Իշխանաց իշխանը, ընդհատելով Վաղարշին,  
ասաց.

— Տղաս, դեռ շատ առիթներ կ'ունենաք բացատրը-  
ւելու այժմ, երեքդ էլ օգնեցէք Մարկոսին ու  
Շաւարչին, մի փառաւոր սեղան բաց արէք՝ այսօր, մեր  
նահատակների եղերական վախճանից 43 տարիներ  
յետոյ, եւ այս օրերի մեր 7 նահատակների սուզը

ընդհատելով, տօնենք «Յարութիւն առած» մեր հարազատի վերադարձը:

Կարօտակէզ սրտակիցները, մինչեւ առտու, իրարու սէրը վայելեցին:

Վահագն, ամենայն մանրամասնութեամբ, նկարագրեց իր ստնքատու Սալրիի վերապրած արիւնոտ ջարդը Կարմիր գետի ափին, պատմեց իր նանիկի անսահման նուիրուածութեան, գուրգուրանքի եւ անտրտունջ ինքնազոհութեան մասին: Եւ ապա, նկարագրեց՝ վերջին երեք շարաթների ընթացքում իր կրած հոգեկան ծանր վերապրումները:

Ճնշիչ էր ընդհանուր տպաւորութիւնը:

Կարճ լուսութիւնից յետոյ, Վահագն իշխանաց իշխանին դիմելով հարցրեց.

— Ի՞նչ խորհուրդ էք տալիս, Հայր իմ, թոյլ տուէք այսուհետեւ Ձեզ այդպէս անուանել: Այժմ Դուք գիտէք, թէ ես ինչ աննախանձելի պայմաններում եմ գտնուում . . . մանաւանդ այս վերջին օրերում տեղի ունեցած յուզումնալից դէպքերից յետոյ . . .

Իշխանաց իշխանը, լրջութեամբ անգրադառնալով Վահագնի համար ստեղծուած բարդ պայմաններին, իր ձեռքը նրա ուսին զնելով ասաց.

— Լսիր ինձ, զաւակս: Դու քո կեանքի կէսն ապրել ես արդէն, չես կարող յետ վերադառնալ, նոր միջավայր ստեղծել: Դու ճանաչուած ես, որպէս Թէմուր Օղլի, բացայատ վերադարձդ կապուած է անյաղթահարելի դժուարութիւնների հետ. թուրք զաւակներդ, կինդերեք չպիտի ուզենան կեավուր դառնալ, արհամարհուել: Եթէ դու մենակ վերադառնաս, նախ վտանգաւոր է, եւ երկրորդը, հոգեկան հանգստութիւն երբեք, երբեք չպիտի ունենաս: Քանի որ ճակատագիրը քեզ այդ վիճակին է դատապարտել՝ մնացիր, որպէս Թէմուր Օղլի, օգտագործիր հեղինակութիւնդ: Բաւական է, որ դու քեզ հոգովդ Հայ ես դգում, մնա զիրքիդ վրայ, աշխատիր ամէն կերպ օգտակար լինել քո ճնշուած հարազատ ազգիդ: Օրինակ վերցրու քո ազնիւ

ստնքատու Սալբիից, որը իր ամբողջ կեանքը զոհել է՝ յանուն քո կեանքի փրկութեան։ Գուցէ յաջողուի քեզ, հետագայում, զաւակներիդ էլ հասկացնել նրանց ով լինելը, մի գուցէ նրանք էլ շարունակեն քո ընթացքը եւ կարողանան օգտակար լինել իրենց հօր տառապեալ ազգին . . . մինչեւ որ մեր գալիք սերունդներին յաջողուի՝ մէկդի նետել իրենց ուսերին ծանրացած ստրկական լուծը, տէր դառնալ իրենց սեփական Հայրենիքին։

### ՎԵՐՋ

Մեպտեմբեր 1977  
Միւնխեն

## ԵՐՐՈՐԴ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԼՈՒՍԱԲԱՆՈՂ ՊԱՏՄԱԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐ

1.- Հստ Գարասէֆէրեան տոհմի սեփական հինաւուրց մագաղաթեայ Աւետարանի վերջին ազատ էջերում արձանագրուած տուեալների, իրենց տոհմը շառաւիդն է Սէֆէտինեան իշխանական հարստութեան:

Սէֆէտինեանները, իրենց տոհմակից արծրունիներին յաջորդելով, իշխել են Վասպուրականում մինչեւ 15րդ դարու վերջերին, երբ թուրքերը վերջնականապէս զրաւում են համայն Արեւմտեան Հայաստանը:

Պատմութիւնն արձանագրում է, որ 1463 թուին, վանում թագաւոր է օծում Սմբատ Սէֆէտինեանը:

Սէֆէտինեանները հետագայում կորցնելով իրենց քաղաքական անկախութիւնը, իրենց տոհմի անդամներից Ախմամարում նստած կաթողիկոսների զեկավարութեամբ, ընդդիմանում ու պաշտպանում էին հայ բնակչութեան, մոլլաների կողմից գործադրուող բոնի կրօնափոխութեան դէմ:

2.- Եւ որովհետեւ Ախմամարում նստած Սէֆէտինեան կաթողիկոսները սեւ վեղար ու Փառաջա էին կրում, իշխողների կողմից անուանեցին՝ ԿԱՐԱ ՍէֆէՏԻՆ, այսինքն, Սեւ Սէֆէտին:

Հետագայում արաբական տառերով Սէֆէտին անունը գրելիս, այդ լեզուով գրուող S (Ճ) տառը R-ի (Ջ) է փոխում եւ Կարասէֆէտինը Կարասէֆէրին է դառնում. 16րդ դարու սկզբին Կարասէֆէրինն արդէն Գարասէֆէրեան-Կարասէֆէրենց է դառնում:

3.- Թրքական տիրապետութեան օրերին, Սուլթան Սուլէյմանի թագաւորութեան շրջանում, հայերից վԱՆԿՈՒԼԻԱԿԱՆ հեծեալ գնդեր են կազմուել եւ որպէս թրքական բանակի մաս կազմող ուժեր, պաշտպանել են արեւմտեան Հայաստանի հարաւ-արեւմտեան սահմանները՝ պարսկական բանակի առաջխաղացումից: Եւ Սուլթանի հրովարտակով, Գարասէֆէրեան Աղաջանը նշանակւում է 7 Վանկուլիական հեծեալ գնդերի ընդհանուր հրամանատար: 1599 թուին, Աղաջանի մահուանից յետոյ, նրա կրտսեր եղբայր Ախիջանն է գլխաւոր Վանկուլի նշանակւում, կրկին իշխանաց իշխանի տիտղոսով: Եւ այս Ախիջանն է, որ դարձել է երրորդ վկայութեան գլխաւոր հերոսներից մէկը:

Գարասէֆէրեանների գլխաւոր Վանկուլի լինելու մասին, պատմական տուեալների վրայ հիմնուելով, գրում է նաեւ Կարօ Սասունին իր՝ «Քուրտերու եւ հայերու ազատազրական շարժումներու փուլերը եւ անոնց փոխ-յարաբերութիւնները» յօդուածի 152րդ էջում, տեղաւորուած «Հայրենիք» ամսագրի 1930 թուականի համար 4-ում:

Մինչեւ 18րդ դարու սկիզբներին, Գարասէֆէրեան տոհմի աւագը գեռ պահելիս է եղել իշխանաց իշխանի կոչումը: Այդ մասին վկայում է Ակադեմիկոս Աշոտ Ցովհաննիսեանը իր «Դրուագներ հայ ազատազրական մտքի պատմութեան» աշխատութեան 2-րդ հատորի 245-րդ էջում: Գարասէֆէրեանները օտար պետութիւնների տիրապետութեան ժամանակաշրջաններում, հարիւրաւոր տարիներ շարունակ, Վասպուրականի հասարակական ու վարչական աշխատանքների ղեկավարութեան մէջ կատարած իրենց կարեւոր դերի պատճառով, հայ եւ թուրք բնակչութեան կողմից անուանել են նաեւ «Աղենց Տուն»:

Այս մասին վկայում է Համբարձում Երամեանը իր «Յուշարձան» աշխատութեան մէջ այդ տոհմի մասին խօսելիս:

4.- Ըստ Գարասէֆէրեանների նոյն հնամեայ մագաղաթեայ Աւետարանի վերջին ազատ էջերում արձանագրուած տուեալների, 16-րդ դարու սկզբին, Գարասէֆէրեան տոհմից իշխան Աստուածատուրը պարսկաստան է գործուղուում, որոշ յանձնարարութեամբ եւ այնտեղ էլ մշտական բնակութիւն հաստատում: 16-րդ դարու վերջերին այս Աստուածատուրի թոռը, նոյնպէս Աստուածատուր անունով, ծառայութեան է մտնում Պարսկական բանակում եւ իր բացառիկ ընդունակութիւնների չնորհիւ զօրավարի աստիճանի է հասնում, իսկ Շահ Ապասի թագաւորութեան օրերին՝ Պարսից զօրաց ընդհանուր հրամանատար նշանակւում, Ալլահ-վէրտի անունով: Ըստ նոյն Աւետարանում յիշատակւած արձանագրութեան, մօտաւորապէս 1660-ական թուականներին, Շահը, «Հայասէր» սուլթան Մուրատ 4-րդին մի ոսկեայ սնդուկ է ուղարկում, որպէս նուէր, որպէսզի, ըստ ընդունուած սովորութեան, եթէ նուէրառուն անձամբ բաց անելու լինի սնդուկը՝ սնդուկում լարուած նետ ու աղեղի թունաւոր նետով նետահարուի:

Այս գաղտնիքը ծերունի Ալլահվէրտին իմանալով իսկոյն նամակ է զրում սուլթանի պալատում, որպէս պատանդ ապրող Յարութիւն պէյ Գարասէֆէրեանին, որպէսզի առ «Հայասէր» սուլթանի կեանքը փրկի այդ դաւադրութիւնից: Յարութիւն պէյին յաջողուում է տեսակցութիւն ունենալ Սուլթանի հետ ու խնդրել, որպէսզի սնդուկը՝ բերողին բանալ տայ: Երբ միամիտ սնդուկ բերողը բաց է անում սնդուկը՝ նետահարում եւ իսկոյն մահանում է:

Սուլթանն ուզում է Յարութիւն պէյին այդ փրկարար ծառայութեան համար մեծ չնորհներով պարզեւատրել, բայց Յարութիւն պէյը Սուլթանից միայն խնդրում է՝ պոլսոյ կենդրոնում մէկ գոմէշի կաշու բռնած տարածութիւն նուիրել իրեն: Սուլթանը խոստանում է. եւ յաջորդ օր Յարութիւն պէյը մի մեծ գոմէշի կաշուց թել (սիրիմ) է քաշել տալիս եւ այդ

սիրիմով, Պոլսոյ կենդրոնում գտնուող Շիշլի թաղամասում մի մեծ հողային տարածութիւն է շրջապատում:

Սուլթանը հիանալով թարութիւն պէյի սրամտութեան վրայ, իր խոստումին տէր է մնում: Յարութիւն պէյը այդ տարածութիւնն ստանալով, իր հերթին, նուիրում է պոլսոյ հայ գաղութին՝ գերեզմանոց դարձնելու պայմանով: Քանի որ, մինչ այդ, քրիստոնեաներն իրաւունք չունէին իրենց մեռեալները պոլսում թաղել: Այդ գերեզմանատունը, մինչեւ այսօր էլ, կոչում է «Շիշլիի հայոց գերեզմանատուն», կամ «Շիշլիի ազգային գերեզմանատուն հայոց»:

Այս մասին համառոտ տեղեկութիւն է տալիս «Շիշլիի ազգային գերեզմանատուն հայոց» գրքի 11-րդ էջում տեղաւորուած յիշատակութիւնը:

5.- «Յափշտակուած Հոգիների» այս երրորդ վկայութիւնում յիշուած է, որ Վանի յայտնի թուրք Թէմուր օղլիների տոհմը սկիզբ է առել Գարասէֆէրեան տոհմից յափշտակուած Վահագն մանչ զաւակից:

Դեռ մինչեւ 1915 թիւը, Մեծ Եղեռնը, Թէմուր օղլիները պահպանում էին իրենց բարեկամական փոխ յարաբերութիւնները Գարասէֆէրեան տոհմի հետ: Կրօնական եւ ազգային մեծ տօներին գիշերով, գաղտնի, այցելութեան էին գալիս իրենց հեռաւոր արիւնակիցներին - Գարասէֆէրեաններին:

Թէմուր Օղլիների Գարասէֆէրեան ծագում ունենալը յիշում է նաև Համբարձում Երամեանը իր «Յուշարձան» աշխատութեան 27-րդ էջում:

6.- Գարասէֆէրեան իշխանական տան տնտեսավար Մարկոսը եւ իշխանաց իշխանի աւագ թիկնապահ Շաւարչը Գարասէֆէրեանների տուն հարս բերուած կանանց ազգականներն էին, որոնք իրենց ընտանիքներով միասին, ապրում էին պալատի սահմանում գտնուող սպասաւորներին տրամադրուած շնչքում:

Վանկուլիական հեծեալ գնդերի լուծումից յետոյ, նոյն ծառայութիւնը շարունակող սրանց սերունդները երբ հեռացան պալատից, ինքնուրոյն դարձան, չնայած իրենց ազգանուններով տարբեր էին, բայց իրենց երկարամեայ ծառայութիւնը Գարասէֆէրեաններին պատճառ գարձաւ ժողովրդի կողմից նրանց անուանել «Կարասէֆէրենց Մարկոս, կամ Կարասէֆէրենց Շաւարչ», նոյնպէս եւ սրանց յաջորդող սերունդներին:

Մինչեւ 1970-ական թուականներին Երեւանում գեռ ապրում էին՝ Մարկոսի ժառանգների ժառանգներից Օգուէնը իր ընտանիքով Գարասէֆէրեան ազգանունով եւ Շաւարչի ժառանգների ժառանգներից Աղասին իր քոյրերով ու եղբայրներով, նոյնպէս Գարասէֆէրեան ազգանունով:

ՀԵՊԻՆԱԿ

## ՅԱՓԾՏԱԿՈՒԱԾ ՀՈԳԻՆԵՐ

Վկայութիւն Չորրորդ

### ԿՐԿՆԱԿԻ ՅԱՓԾՏԱԿՈՒԱԾԸ

Գլուխ Ա.

Մանօթ հայրենակցի վեցամեայ մանչուկի հետ հանրակառքով քաղաքիս կենդրոնը պիտի իջնէինք, մանչուկին կանգառում սպասող իր հօր յանձնելուց յետոյ, կեանքի ապահովութեան գրասենեակն անցնելու: Հանրակառքը մօտեցաւ, մենք իսկոյն ներս բարձրացանք: Մանչուկին կողքիս նստարանի վրայ տեղաւորեցի: Նստելուն պէս նա սկսեց իր ոտքերը յետ ու առաջ շարժել:

Դիմացի նստարանի վրայ նստած երկու երիտասարդ կանանցից մանչուկի զէմ նստողը տհաճութեամբ զիտում էր տղեկի արարքը. նրան կողքիս սեղմելով սստեցի, անշուշտ հայերէնով.

— Հանգիստ նստիր, Գրիգորիկ, տեսնում ես, որ տհաճութիւն ես պատճառում տիկնոջ:

Գրիգորիկին ուղած խօսքերս դեռ չվերջացրած, զիմացս նստած թիւադէմ եւ արեւելեան նուրբ դիմագիծեր ունեցող երիտասարդ կինը մէկէն առաջ ծառացաւ, իր յուզմունքը դժուարութեամբ զսպելով, գերմաներէնով խօսեց.

— Այս, դուք հայեր էք, պարոն: Վերջապէս հայերի հանդիպեցի:

Ես յանկարծակիի եկած իրեն նայեցի. նա առանց պատասխանիս սպասելու շարունակեց.

— Երբորդ օրն է, ինչ ամուսնուս հետ Միւնիէնումն ենք գտնուում. Հայերի հանդիպելու յոյս չունէի, բայց ահա, ձեզ հանդիպելու բախտն ունեցայ: Նրա համակրելի դէմքից ցոլացող հմայքից կախարդը-ւած, չկարողացայ իսկոյն պատասխանել:

Նա ընդհատեց իր խօսակցութիւնը եւ բուռն կարօտ արտայայտող իր հայեացքը սեւեռեց Գրիգորիկի վրայ:

Ես այլեւս ինքզինքս գտած իրեն դիմեցի.

— Անշուշտ դուք էլ հայ էք, տիկին:

Նա իսկոյն չպատասխանեց. տրտմութիւն արտայայտող իր հայեացքը վար առնելով, անհամարձակութեամբ պատասխանեց.

— Եւ այո, եւ ոչ, պարո՞ն:

Այս հանելուկային պատասխանը հետաքրքրութիւն առաջացրեց մէջս, որով կրկին իրեն դիմեցի.

— Ի՞նչպէս կարող եմ հասկանալ ձեր այդ «եւ այո՞ն եւ ոչ-ը», տիկին:

Տրտմութեամբ դէմքիս նայելով պատասխանեց.

— Ախ, պարո՞ն, ձեր հարցին երկու խօսքով չեմ կարող պատասխանել:

Այդ միջոցին հանրակառքը կանգ առեց, մենք արդէն քաղաքի կենգրոնումն էինք: Գրիգորիկին կանգառում սպասող իր հօրն յանձնելուց յետոյ, տիկնոջ հետ մօտակայ մէթրոյի կայանը դիմեցինք: Մի քանի քայլ առնելուց յետոյ, համարձակուեցի տիկնոջ դիմել՝ առաջարկելով.

— Կը կամենայի՞ք, տիկին, միասին այս մօտակայ թէյարան մտնել, մէկական բաժակ թէյ կը վերցնենք կարկանդակով, եւ դուք «երկու խօսքով չպատմուող» ձեր պատմութիւնը կը պատմէք:

Տիկինը հաճոյքով ընդունեց առաջարկս եւ իր ձեռքի ժամացոյցին նայելով պատասխանեց.

— Այո, պարո՞ն, ուրախութեամբ. դեռ մէկուկէս ժամ ժամանակ ունեմ, որից յետոյ ամուսնուս պիտի միանամ:

Թէյարան մտանք եւ վերի անկիւնում գտնուող

սեղանի շուրջ տեղ գրաւեցինք, եւ նա սկսեց պատմել իր ընտանիքի հետեւեալ եղերական պատմութիւնը.

\* \* \*

— Նախնիներս, այսինքն, մեծ հայրս, մեծ մայրս, մայրս եւ իր երկու եղբայրները Սվազցի հայեր են եղել: 1915 թուի ապրիլեան եղեռնի օրերին թուրք ժանտարմները քաղաքի հայ բնակչութեան աքսորի են քչում: Ճանապարհին՝ մեծ մասին կոտորում են, նոյն թւում նաեւ մեծ ծնողներիս:

Այդ օրերին մայրս եօթնամեայ մի գեղեցիկ աղջիկ է լինում: Աքսորեալներին քաղաքից դուրս քշելու միջոցին, դրացի թուրքերից մէկը, գիտնալով աքսորեալներին սպասող վախճանը, ուղղակի բռնութեամբ յափշտակում է մայրիկիս ու տանում որդեգրում:

Տարիներ յետոյ, 1924 թուին, մայրիկիս որդեգրող թուրքը՝ 16ամեայ մայրիկիս կնութեան է տալիս իր ազգականներից մէկի որդուն՝, որը տեղական դպրոցում ուսուցչութիւն է անելիս լինում: Մայրս 11 տարիներ շարունակ ամուկ է մնացել: Ամուսնու ծնողներն ուղեցել են իրենց կեավուր հարսին տանից դուրս վռնտել, քանի որ, ըստ իրենց սովորութեան, տան տիկնոջ ամլութիւնը ամենամեծ ամօթանք եւ անպատւութիւն է համարւում: Բայց մայրիկիս գեղեցկութիւնից հրապուրուած հայրս հանդուրժել է ու մերժել է իր ծնողների առաջարկը:

Մայրս, 1936 թուին, վերջապէս, մի մանչ զաւակ է պարգեւում իր ամուսնուն: Այդ մանչը, 14 տարեկան հասակում, թոքերի բորբոքումով հիւանդանում ու մեռնում է: 1951 թուին ես եմ ծնւում, հօրս անսահման գուրգուրանքին արժանանում: Հայրս մայրիկիս արդիլում է՝ հետև հայութեան եւ իր հայ լինելու մասին խօսել:

Մինչեւ 7 տարեկան հասակս տանն եմ եղել ու

**միայն մօրս ներկայութիւնը վայելել:**

1958 թուին սկսեցի յաճախել հօրս պաշտօնավարած դպրոցը: Առաջին իսկ օրերից՝ դասարանիս ընկերուհիներից երեքը ինձ մօտեցան եւ այդ օրուանից մեր միջեւ ընկերական սերտ կապ հաստատուեց: Առաջին եռամսեակից յետոյ, երբ պարզուեց, որ մենք չորսովս դասարանի լաւագոյն աշակերտներից ենք, մեր մտերմութիւնն էլ աւելի խորացաւ:

Այդ երեք ընկերներիցս մէկի անունը տարօրինակ էր թւում ինձ համար, ՍԱԹՈ էինք կանչում: Մի օր անդրադարձայ ու հարցրի, — «Սաթօ, այդ ի՞նչ անսովոր անուն ունես»: Այդ միջոցին, չորսովս, դպրոցի բակի անկիւնում առանձնացել էինք: Սաթոն երեքիս իրարու մօտ բերելով շնչաց, — «Ծնողներս հայեր են, տանը թուրքերէն ենք խօսում, հայերէն խօսելու իրաւունք չունենք, վախսենում ենք»: Իսկ միւս ընկերուհին, իր կողքին կանգնածի մէջքից բռնելով ինձ մօտեցրեց ու փսփսաց, — «Մեր մայրերն էլ քո մօր նման հայուհիներ են»: Այս խօսքերից մէկէն ցնցուեցի, շշմած ընկերուհիներիս նայեցի: Նրանք հասկացան, որ ես մինչ այդ չգիտէի մօրս հայ լինելը:

Մեր կամքից անկախ մեր գլուխներն աւելի մօտեցան իրարու, կարծէք հարազատ քրոջական երդում էինք տալիս իրարու:

Այդ օր հասկանալի եղաւ ինձ համար՝ թշուառ մայրիկիս շարունակ տիսուր ու լուակեաց լինելու պատճառը:

Այդ օր յուզուած տուն վերագարձայ: Մայրս, սովորականի պէս, միջանցքում զիմանորեց ինձ: Ես չկարողացայ զսպել ինձ, արտասուաթոր աչքերով նրան փարուեցի ու ասացի, — «Մայրիկ, ինչո՞ւ ինձանից գաղտնի էիր պահում հայ լինելդ»:

Նա ինձ աւելի ամուր սեղմելով իր կրծքին, պատասխանեց, — «Հայրդ այդպէս էր հրամայել ինձ: Ի սէր Աստուծոյ, նրան զգացնել չտաս, որ հայ լինելս գիտես»:

Այդ օրուանից մօրս հանդէպ ունեցած սէրս աւելի խորացաւ ու ինձ մի տեսակ բախտակից համարեցի:

Առաջին դպրոցական տարին վերջացաւ: Թուանշաններ յայտնելու ու յանձնելու օր, ամբողջ դասարանը գիտցաւ, որ մենք չորսովս դասարանի ամենայառաջադէմ աշակերտուհիներն էինք: Գիտցան նաև մեր կիսահայ ու հայկական ծագում ունենալը: Ումանք մեր հանդէպ ատելութեամբ լեցուեցին:

Յաջորդ օր, իրենց հայատեաց ծնողներից դաս առած, մի խումբ թուրք աշակերտուհիներ բակում մեզ շրջապատեցին, սկսեցին անարգել մեզ. նրանցից մէկը, աւելի տարիքոտը, բարձրաձայն կանչեց, — «Մեր հայրերը շատ լաւ են արել, որ բոլոր հայերին կոտորել են: Հիմա աշխարհումն հատ ու կէտա կեավուր հայեր են մնացել, նրանք էլ չուտով կը սատկեն»:

Պարապմունքներից յետոյ լալով տուն վերադաշայ:

Գուրգուրալից մայրս, արտասուքներս տեսնելով, ինձ իր գիրկն առաւ, գուշակելով լալուս պատճառը դառնացած մրմնջաց, — «Տէրն այդպէս է տնօրինել մեր ճակատագիրը, պալա ջան . . . երբ խելահաս դառնաս, մի գուցէ կարողանաս հեռանալ այս անգութներից . . . նոր միջավայր ստեղծես . . . իսկ ինձ համար, այլեւս փրկութիւն չկայ»: Լսելով նրա յուսակտուր մրմունջը, ես աւելի յուզուեցի, աչքերից սուատօրէն հոսող արցունքներիս կաթիլները թրջեցին նրա բազմատանջ ու սմբած մայրական կուրծքը:

Այդ օր, թշուառ մայրս ազատութիւն տալով իր խոցուած սրտին, արտասուելով պատմեց 1915 թուին տեղի ունեցած հայասպանութեան եւ իր հարազատների ոչնչացման մասին, թէ ինչպէս դանակի բազմաթիւ հարուածներով ծակծկել էին իր հօր մարմինը եւ ապա, մօր ու երկու եղբայրներին կացնահար արել: Այս մանրամասնութիւնները հետազայում պատմել էին մօրս՝ ականատես խղճահարուած դրացիները:

Նոյն երեկոյիան, երբ հայրս տուն վերադաշայ,

արդէն գիտէր թուրք աշակերտուհիների վերաբեր-  
մունքի մասին մեր հանդէպ եւ հասկացել էր նոյնպէս,  
որ ես իմացել եմ մօրս հայ լինելլ:

Արտասուելուց կարմրած աչքերս տեսնելով, ինձ  
իր մօտ կանչեց ու սկսեց խրատել. — Դուք չորսովդ  
չպէտք է ձեզ միշտ հեռու պահէք միւսներից, աշխատէք  
մօտենալ նրանց, անդամ օգնել. ձեր այդ ընթացքով  
նախանձ էք առաջացնում նրանց մէջ ձեր հանդէպ:  
Առանձնապէս դու, աղջիկս, հօրդ պատիւը պահելու  
համար, չպէտք է հեռու պահես քեզ միւսներից, պէտք է  
օգնես, մտերմութիւն հաստատես բոլորի հետ . . .»:

Հօրս խրատառութեան ընթացքում յիշելով  
մայրիկիս պատմածները, ինձ թուաց, որ եթէ հայրս էլ  
հայկական ջարդերի օրերին հասունացած մարդ լինէր,  
նա էլ կը մասնակցէր այն անմարդկային արարքներին:  
Այդ օրուանից ես սկսեցի սառել հօրմիցս եւ աւելի ատել  
շրջապատս, թուրքերին: Այդ օրերին դեռ փոքր էի,  
բայց անհասկանալիօրէն, հոգեպէս տառապում էի: Հա-  
սունանալուց յետոյ միայն զգացի, թէ ինչ էր տեղի  
ունեցել իմ հոգու խորքում՝ խորտակուել էր թրքական  
հոգեկան աշխարհս եւ աւերակների վրայ նորը  
կառուցելու անընդունակ, միակ միխթարանքս էր  
մնացել ՀԱՅ ՄԱՅՐՍ: Ինձ համար կեանքի իմաստը  
միայն քրիստոնեայ մայրս էր դարձել:

Այնուամենայնիւ, այդ երեկոյեան, հօրս  
հանգստացնելու, նրա թրքական ինքնասիրութիւնը չը  
վիրաւորելու համար, հլու ձեւանալով պատասխանեցի,  
— «Այո, հայր, խոստանում եմ ասածիդ պէս  
վարուել», — մեր խօսակցութեան նիւթը փոխելու  
նպատակով եւ ինքինքս հանգստացած ձեւացնելով,  
հարցուցի, — «Հայր, թուարանութեան տան դասը  
դպրոցում, միջաղաղարի պահին լուծեցի, ուզո՞ւմ ես  
ստուգել, կարծում եմ, որ ճիշդ եմ լուծել»:

Եւ այդպիսով վերջ տրուեց մեր ընտանիքում  
առաջին անդամ ստեղծուած լարուածութեան. բայց  
մէջս սկիզբ առած հակակրանքը հանդէպ հօրս, հետրդ-  
հետէ զօրանում էր:

### Գլուխ Բ.

1966 թուին ութնամեայ դպրոցն աւարտեցի: Սվազի քաղաքային կրթական վարչութիւնը որոշել էր ինձ, որպէս լաւագոյն աւարտական նիշեր ստացողի, պետութեան հաշուին Պոլիս ուղարկել՝ լեզուագիտութեան հետեւելու:

Պոլիս մեկնելուց մէկ ամիս առաջ, հիւծուած ութուլացած մայրս անկողին ընկաւ: Երեք շաբաթներ շարունակ տանջուելուց յետոյ կնքեց իր մահկանացուն՝ ինձ միայնակ ու մեծ սուզի մէջ թողնելով:

Վախճանուելուց մի քանի օր առաջ, երբ երկուսովս մենակ էինք, ձեռքիցս բռնելով մրմնջաց, — «ՊԱԼԻԿՍ չմոռնաս, որ դու հայ մօրմից ես ծնուել, ես օրհնում եմ քեզ, գնա, հեռացիր այս անհաւատներից, մի հայու, մի քրիստոնեայի հետ ամուսնացիր, մարդավայել ապագայ հիմնիր քեզ համար»:

Մայրիկիս մահուանից յետոյ ես ինձ բոլորովին խորթ զգացի իմ «սեփական» ընտանեկան յարկի տակ: Մեծ կամքի ուժ գործ դրի, որպէսզի հակակրանքս հօրս հանդէալ ու զգուանքս հանդէալ շրջապատիս զգացնել չտայի՝ մինչեւ Պոլիս մեկնելս:

Վերջապէս հասաւ այդ ցանկալի օրը: 1966 թուի Յուլիսին, դպրոցիս աւարտականով, քաղաքի կրթական բաժնի վարչութեան գրութիւնով ու Պոլսոյ լեզուագիտական դասընթացքների վարչութեան հրաւիրագրով զինուած ճամբայ ելայ: Պոլիս հասայ եւ ընդունուեցի՝ անդլերէն, ֆրանսերէն եւ գերմաներէն լեզուների դասընթացքներում: Առաջին տարում հայրիկիս, ձեւականութեան համար, մի քանի պարզ նամակներ գրեցի: Վերջին նամակովս յայտնեցի, որ

չափազանց զրադուած լինելուս համար չպիտի կարողանամ յաճախ զրել։ Այդպիսով, բոլոր կապերս կորեցի «Հարազատներից»։

Ուսանողական առաջին տարուան ընթացքում ծանօթացայ մի շարք հայ ուսանող-ուսանողունիների հետ, որոնք շատ բարեացակամ վերաբերմունք ցոյց տուին իմ հանդէպ։ Բատ երեւոյթին, նկատեցին ոչ մաքուր թրքական ծագում ունենալս, բայց երբեք չը հետաքրքրուեցին։ Ես էլ, ի հարկէ, չհամարձակուեցի մայրիկիս հայ լինելը յայտնել։

Մի քանի հայ ուսանող-ուսանողունիների հետ այնքան մտերմացայ, որ բախտ ունեցայ հիւրասիրուել ու գտնուել զուտ հայկական ընտանեկան յարկի տակ։ Երբ նրանց շրջապատումն էի գտնուում, ինքս ինձ հարազատ միջավայրում էի զգում, համեմատում էի հայ կենցաղը իմ ապրածի, տեսածի - թրքականի հետ, զգում էի իմ ճակատագրի հասցրած հարուածի ծանրութիւնը։ Ճետգհետէ մօտիկից ծանօթացայ Պոլսոյ հայ գաղութի կենցաղին, նրա տարած ազգային, մշակութային ու կրօնական աշխատանքների հետ, որով, կատարելապէս համոզուեցի, որ դժբախտ մայրս միանգամայն իրաւացի էր, երբ շարունակ պարծանքով էր խօսուում իր ազգի բարձր արժանիքների մասին։ Ինքս տեսնում էի, թէ ինչ համբերութեամբ Պոլսոյ հայ գաղութը՝ իր դպրոցներով, հրատարակչութեամբ՝ եկեղեցիներով ու բազմազան մշակութային ձեռնարկումներով, պաշտպանում ու պահպանում էր իր ազգային բնոյթն ու մշակութային բարձր առանձնայատկութիւնները։ Երբ առանձին էի մնում, լաց լինելու աստիճանի յուզուում էի ու բողոքում Արարչին, թէ ինչո՞ւ ինձ այդ արժանաւոր ազգի զաւակը լինելու իրաւունքից զրկել է։

Պոլսահայութեան թափած այդ հերոսական ճիգերի հետ նկատեցի նաև մի ցաւալի երեւոյթ, որը կարծէք եկաւ իմ վիճակն «արդարացնելու»։ Բայց իմ այդ կարծեցեալ ինքնարդարացումը անհիմն էր, քանի որ ես,

կամքիցս անկախ, բռնութեան եւ առեւանգումի պառող էի, իսկ Պոլսահայ երիտասարդութեան, ձիչդ է, աննշան մասը, ինքնակամ ձուլում էր յետադէմ ու վայրենի թրքութեան հետ։ Այդ ինքնակամ ձուլումը, պէտք է խոստովանել, որ հետեւանք է շահամոլական մի տգեղ սովորութեան՝ – պոլսահայ աղջիկը պէտք է հարուստ բաժին տանի իր հետ ամուսնանալու պարագային, չքաւոր ընտանիքի աղջիկները զոհ են գնում այդ նիւթամոլական սովորութեան՝ ամուսնանում են հնագանդ ու մաքրասէր Կեավուր աղջիկներ փնտող թուրք լամուկների հետ։ Երբեմն էլ հակառակն է պատահում՝ ծոյլ ու չուայլ թրքուհիներ որսում են ազգային պատուախնդրութիւնից եւ ինքնասիրութիւնից զուրկ հայ երիտասարդների, որոնք այդ ամօթալի քայլին են դիմում՝ միայն իրենց առեւտրական մութ գործերը թուրք պաշտօնեաների միջոցով դիւրութեամբ զլուխ բերելու նպատակով։

Նման ձուլումը ՍՊԻԾԱԿ ԶԱՐԴԻ ամենաամօթալի տեսակն է հայերի համար։

Պոլսահայութեան աննշան մասի այս արատը, անշուշտ չնուազեցրեց իմ բարձր գնահատանքն ու համակրանքը հանդէպ մայրիկիս ծնող հայ ազգը, որին, ճակատագիրիս բերումով, լիահիրաւունք անդամ դառնալու իրաւունքից զրկուած եմ մնացել։

Պոլսում եղած միջոցիս շատ ազբիւրներ ձեռք բերի ու կարդացի հայ ժողովրդի պանծալի ու միեւնոյն ժամանակ տիսուր անցեալի մասին։ Մեծ կլանուածութեամբ կարդացել եմ ժամանացի միսիոնէր Իոհան Լեփցիուսի սարսուեցուցիչ վկայութիւնները՝ թուրքերի կողմից հայ ժողովրդի հանդէպ կատարած գաղանութիւնների մասին։ Նաեւ բազմաթիւ տարբեր աղբիւրներ՝ հայ ժողովրդի կատարած մեծ դերի մասին, մարդկութեան բերած ծառայութիւնների՝ գիտութեանց ու մշակոյթի ասպարէզներում։

Մեծ համակրանք ծագեց մէջս խօսակցիս հանդէպ, շատ քիչ հայուհիներից էի լսել ինքնազիտակցութեան նման արտայայտութիւններ, ուզում էի ընդհատել նրան ու ասել, — «Զաւակս, դու էլ իրաւունք ունես քեզ հայ համարել», բայց նա չարունակեց.

— Այո, ներքուստ տառապում էի, համարձակութիւն չունեցայ սիրտս բանալ, ցաւերս յայտնել: Երբ ես ինձ համեմատում էի հայ ընկերուհիներիս հետ, ինքս իմ աչքի առջեւ նսեմանում էի, մի ելք էի փնտում իմ ծանր հոգեկան տանջանքներից ազատուելու: Եւ ահա, 1973 թուին, լեզուարանական դասընթացքները յաջողութեամբ աւարտելուց յետոյ, ծանօթացայ Շուէտացի մի գործարանատիրոջ որդու հետ եւ նոյն տարին ամուսնացանք . . .

Նրա այս խօսքերի վրայ, կամքիցս անկախ, դէմքիս մկանունքները պրկուեցին, զարմացկոտ հայեացքս նրա դէմքին ուղղելով, ուզում էի ասել, — «Հապա ո՞ւր մնացին ձեր անսահման սէրն ու յարգանքը հանդէպ ձեր մօր ծնող հայ ժողովուրդը . . .», — բայց նա նկատելով հիամթափութիւնս, ձեռքերս բռնեց ու աղաչական ձայնով շարունակեց, — «Մի՞ք մեղաղը ինձ, պարոն եւ մի՞ դատապարտի արարքս . . . Եթէ անգամ ինձ յաջողուէր հայու հետ ամուսնանալ, հոգեպէս շարունակ պիտի տանջուէի, ինձ շրջապատողները վրաս պիտի նայէին որպէս ոչ գտարիւն հաւասարահրաւունք ազգակցի . . . Ահա իմ երկու խօսքով չպատմուող պատմութիւնը: Իր ժամացոյցին նայելով, տիկինը շարունակեց, — «Ներեցէք, պարոն, ես պէտք է շտապեմ, կէս ժամից յետոյ ամուսնուս պէտք է միանամ: Չէք կարող պատկերացնել, թէ որչափ ուրախ եղայ ձեզ հանդիպելու բախտն ունենալուս համար»:

Ես ուզում էի նրա բերած պատճառարանութիւնները հերքել, ասել, որ իրաւացի չէք, տիկին, ձեզ նման շատերն են վերադարձել ու հայ ժողովուրդը զրկարաց ընդունել է նրանց, բայց ի զուր համարեցի, քանի որ նա արդէն երկրորդ անգամն էր յափշտակուած,

այլեւս անվերադարձ էր հայութեան համար:

Տիկինը ոտքի ելաւ, իր ամառնային վերարկուն բռնեցի, հագնուեց եւ միասին դուրս եկանք:

Մէթրոյի կայարանի մուտքին մօտեցանք:

Հրաժեշտ տալու վերջին բռպէին, կատարեալ հիասթափութիւնս իրեն զգացնել չտալու համար, քաղաքավարութեամբ իր ձեռքը սեղմեցի ու բաժանուեցինք:

ՎԵՐՋ

## ՅԱՓԾՏԱԿՈՒԱԾ ՀՈԳԻՆԵՐ

Վկայութիւն Հինգերորդ

### ԱՆՎԵՐԱԴԱՐՁԸ

Բարեկամս՝ պարոն վ. Գ.-ն ինձ այցելութեան էր եկել:

Գրասեղանիս վրայ գտնուող գրուած էջերը տեսնելով հարցրեց, թէ ինչ եմ գրում:

Պատասխանեցի, որ հայ ժողովրդի եղերական անցեալից զրուագներ եմ գրում, վկայութիւններ:

Նա մօտեցաւ գրասեղանիս, նայեց գրութեան շապիկին ու բարձրաձայն կարդաց.

— Ցափշտակուած հոգիներ, շատ հետաքրքիր վերնազիր է: — Ապա վերցրեց առաջին «Վկայութեան» տետրը, նախ մէջ ընդ մէջ թերթեց եւ ապա տարուածութեամբ սկսեց կարդալ:

Հետզհետէ նրա հետաքրքրութիւնը մեծցաւ, մէկ ամբողջ ժամ կարդալուց յետոյ, ըստ երեւոյթին, վերապրելով ու յիշելով մեծ եղեռնի օրերին իր կրած տառապանքները, ինձ դիմեց ասելով.

— Հետաքրքիր է, շատ հետաքրքիր, սիրելի Ռւբարտացի, նման վկայութիւնները շատ ուսանելի են, մանաւանդ ներկայիս ասպրող հայ նոր սերունդի համար: Թող գիտնան, թէ ինչ տառապանքներ ենք կրած ու որչափ հայորդիներ խլուած ու ձուլուած են: Ես ալ կ'ուզեմ մէկ այլ յափշտակուած հոգու մասին պատմել քեզ, կրնաս պատմելիքս ալ գրի առնել՝ այս միանգամայն յարմար վերնազրի տակ:

Եւ բարեկամս սկսեց հետեւեալը պատմել:

— 1971 թուին Վիեննայէն Միւնիխ կը վերադառնայի: Գնացքի նկուղիս մէջ ծանօթացայ մտաւորական Աւստրուհու մը հետ: Երբ գիտցաւ հայ ըլլալս՝ համակրանքով ու գովիստով խօսեցաւ հայերուս մասին, վկայեց, որ հայերը բարձր մշակոյթի տէր ժողովուրդի մը բարձր յատկութիւններով օժտուած են, բայց դժբախտաբար, իրենց ծանր ճակատագրի բերումով, իրենց հանճարեղ զաւակներէն ոմանց կորսնցուցած են: Եւ պատմեց հետեւեալ ցաւալի օրինակը. — «Ես բժշկուհի եմ, պարոն: Քանի մը տարիներ առաջ կ'աշխատէի Վիեննայի քաղաքային հիւանդանոցին մէջ: Օր մը Աւստրիոյ ականաւոր փաստաբան Հ-ին, որը թիֆով ծանր հիւանդացած էր, մեզ մօտ տեղափոխեցին: Յաջորդ օր անոր վիճակը ծանրացաւ՝ ճգնաժամն էր սկսած: Իր անկողնին մօտեցայ, ուշագնաց էր, քրտինքի ու տաքութեան մէջ կը տառապէր: Մէկէն սկսեց զառանցել. իր ձեռքերը վերմակի տակէն հանելով, վեր պարզեց ու սկսեց անհասկանալի բառեր արտասանել: Կէսօրէն ետք կրկին այցելեցի իրեն: Այս անգամ աւելի յուղուած, աղաչանքով ու մորմոքով նոյն բառերը կրկնեց: Ուղեցինք դիտնալ, թէ ի՞նչ կ'ուզէր, բայց ի՞նչպէս, չզիտէինք թէ ի՞նչ լեզուով կը խօսէր: Ստիպուած զանգահարեցինք պետական համալսարանի տնօրէնին, բացատրեցինք եղելութիւնը ու խնդրեցինք լեզուաբաններ ուղարկել՝ հասկնալու համար, թէ հիւանդը ի՞նչ լեզուով կը խօսի եւ ի՞նչ կ'ուզէ: Ժամ մը ետք երկու լեզուաբաններ եկան, ուշադրութեամբ լսեցին հիւանդի մրմունջը, բայց անոնք ալ չհասկցան: Լեզուագէտներէն մէկը կրկին կապուեցաւ համալսարանի հետ: Քիչ յետոյ ալեհեր լեզուագէտ մը հիւանդին սենեակը մտաւ: Երբ հիւանդը, պահ մը յետոյ, նոյն բառերը կրկնեց, ծերունին լսելով ժպտաց ու ըսաւ,

— Հիւանդը հայերէն կը խօսէ, կ'ըսէ «Մայրիկ, ջուո՛ւր . . . մայրի՛կ, ջուո՛ւր»:

Ես արտօնեցի ումաք մը ջուր տալ հիւանդին: Երբ

գթութեան քոյրը անոր զլուխը բարձրացուց ու գաւաթով ջուրը անոր շրթունքներուն մօտեցուց, ան ազահութեամբ ըմպեց եւ ապա բարձին ընկնելով, սկսեց խաղաղութեամբ չնչել:

Նոյն երեկոյեան հիւանդին կինը այցելութեան եկաւ: Այցելութենէն յետոյ տիկնոջ գրասենեակս հրաւիրեցի ու հետաքրքուեցի իր ամուսնու անցեալով: Պարզուեց, որ 1915 թուին, հայկական մեծ եղեռնի օրերուն, աւստրիացի հոգեւորական միսիոնէր մը, Գոնիա քաղաքէն դուրս, ճամբու մը եզերքին, 4 տարեկան Հ-ին գտած է՝ իր առեւանգուած ու սպաննուած մօր դիակի քով նստած, ծարաւէն պապակւած, իր մօրմէն ջուր է խնդրած:

Շարաթներ յետոյ, երբ Հ-ն կազզուրուեցաւ, իրեն մօտեցայ ու հարցուցի, — Պարոն Հ., զարմանալի է, 56 տարիներէ յետոյ դուք ձեր մայրենի լեզուն — հայերէնը չէք մոռցած:

Հ-ն, զարմացած պատասխանեց, որ ոչ մէկ բառ հայերէն գիտէ: Երբ իրեն ըստի, թէ տաքութեան եւ ուշագնացութեան մէջ դուք հայերէնով ձեր մայրիկէն ջուր կը խնդրէիք, ան երկար մտածելէն յետոյ պատասխանեց.

— Ուրեմն, ուշագնացութեանս միջոցին ենթագիտակցութիւնս է բացայայտուած, — ու աւելացուց, — տարօրինակ է, ես երբեք չեմ անդրադարձած հայկական ծագում ունենալուն վրայ, ինքզինքս միշտ Աւստրիացի եմ զգացած: Պէտք է հասկնաք, տոքթոր, 4 տարեկանէս ի վեր, որպէս Աւստրիացի եմ դաստիարակուած, կրթուած, էութեամբս աւստրիացի եմ դարձած, հայկական ոչինչ կայ ըմբռնումիս ու էութեանս մէջ:

Բարեկամս վ. Գ.-ն աւարտելով իր պատմութիւնը եզրակացուց.

— Ահա յափշտակուած հոգի մըն ալ, սիրելի  
Ռւրարտացի: Գրիր, այս յափշտակուած հոգու մասին  
ալ զրիր: Մենակ այս Հ-ն չէ, որ այս ձեւով յափշտակ-  
ւած է, ձուլուած է, կորսուած, անվերադարձ:

ՎԵՐՋ

## ՅԱՓԾՏԱԿՈՒԱԾ ՀՈԳԻՆԵՐ

**Վկալութիւն Վեցերորդ**

### ԱՆՕԳՈՒՏ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Մեծ եղեռնի արիւնածութի օրերին 12-ամեայ Անտոնը, իրանից մի քանի տարով մեծ քրոջ Մարիամի հետ, հրաշքով ազատում են ջարդերից եւ ապաստան գտնում Ռումանիայում:

1920 թուին Մարիամն ամուսնանում է եւ ամուսնու հետ Պրազիլիա են արտագաղթում: Իսկ Անտոնը Ռումանիա է մնում, ճգնաժան աշխատանքով ինքնուրոյն դառնալուց յետոյ ամուսնանում է մի ոռումանուհու հետ:

1929 թուին, Պուխարեստում աշխարհ է գալիս նրանց անդրանիկ մանչ զաւակը, որին հայրը կնքում է Օհաննէս անունով:

1931 թուին Անտոնը, ինչ ինչ պատճառներից դրդուած, լքում է իր ոռումինուհու կնոջ ու երեքամեայ զաւակին եւ մեկնում Պրազիլիա, իր քոյր Մարիամի մօտ, նոր բախտ որոնելու:

Օհաննէսը, մնալով ամուսնու հանդէպ ատելութեամբ լեցուած իր մօր մօտ, աննախանձելի մանկութիւն ու պատանեկութիւն է անցկացնում:

1941 թուին, մօր հետ, Ռումանիոյ Արատ քաղաքն են տեղափոխուում, ու Օհաննէսը շարունակում է ուսանել ոռումինական դպրոցում:

1947 թուին մայրը վախճանուում է, որի պատճառով Օհաննէսը կրկին Պուխարեստ է տեղափոխուում՝ իր բարի մօրաքրոջ քով ապաստան գտնելով, ուր միեւնոյն ժամանակ մասնագիտական ուսում է ստանում:

Երբ Օհաննէսը 18 տարեկան է դառնում, անդրադառնալով իր վիճակի վրայ, ցաւով յիշում է իր հայ հօրը, նրա աններելի վերաբերմունքը իր որդու հանդէպ, որ իր 15 տարիների բացակայութեան միջոցին, մէկ նամակ անգամ չի գրել իր անդրանիկ որդուն:

Իր հարազատ հօր տեսնելու ցանկութիւնը զօրանում է եւ նա որոշում է՝ իր հօր գտնել, կապ հաստատել նրա հետ:

Այդ նպատակով, 1960 թուին, վերցնում է 1930 թուին իր հօր հետ նկարուած լուսանկարը եւ գնում է Ռումանիոյ Քաղաքուց էր հայարնակ քաղաքը, հարց ու փորձով մի հայկական սրճարան է գտնում, որը հանդիսանում է հայ տարեցների հաւաքատեղի: Ներս է մտնում, մի սեղանի շուրջ նստած ծերունիներին նկարը ցոյց տալով, հարցնում է, թէ արդեօք մէկնումէկը իր հօր ճանաչում է եւ նրա հասցէն գիտէ<sup>o</sup>: Ծերունիներից մէկը զննելով լուսանկարը, ասում է, որ ճանաչում է, բայց հասցէն չգիտէ միայն լսել է, որ հայրը Պրաղիլիայումն է, Սան Փառվոյից հեռու մի քաղաքումն է ապրում, 1934 թուին ամուսնացել է Պոլսից արտագաղթած մի հայուհու հետ, որից երկու զաւակներ ունի եւ բաւականին խոշոր կարողութեան տէր է դարձել:

Երկար հարց ու փորձերից յետոյ, առանց իր հօր հասցէն ձեռք բերելու, ձեռնունայն տուն է վերադառնում, շարունակում է որպէս ատամի տեխնիկ աշխատել:

Մի օր էլ տեղեկանում է, որ իր արհեստակիցներից մի հրեայ գործով Պրաղիլիա է մեկնում: Օհաննէսը խնդրում է հրեային, որպէսզի նա, Սան Փառվոյի հայկական շրջանակներից մի կերպ իր հօր հասցէն ձեռք բերի: Ճարպիկ հրեան, տեղ հասնելուն պէս, կատարում է Օհաննէսի խնդրանքը:

Հօր հասցէն ստանալով, Օհաննէսը իսկոյն մի նամակ է գրում, բայց հայրը, անտարեր է մնում, չի պատասխանում: Մօրաքոյր Մարիամը, իմանալով իր

եղրօր անտարբեր վերաբերմունքը հանդէս 0հաննէսի, ամօթանք է տալիս Անտոնին եւ սպառնում՝ ասելով, — «Հետդ չպիտի խօսեմ, քանի դեռ անդրանիկ որդուդ հետ կապ չես հաստատել», — միեւնոյն ժամանակ նամակ է գրում 0հաննէսին ասելով՝, — «Եթէ ուզում ես հօրդ դարձի բերել, պէտք է որ անձամբ գաս, հետը տեսնուեն»:

Տարիներ են անցնում: Վերջապէս 1972 թուին 0հաննէսը որոշում է հօրն այցելել:

Օդանաւը Սան Փառլո է իջնում: 0հաննէսը ուղեւորւում է Սան Փառլոյից 600 քիլոմետր հեռաւորութեան վրայ գտնուող Պենեպոլիս քաղաքը, ուր հաստատուել են՝ իր հայրը՝ Անտոնը եւ հօրաքոյր Մարիամը, իրենց ընտանիքներով:

0հաննէսը, նախ, իր հօրաքրոջն է այցելում, որը ուրախութեամբ ու գրկարաց ընդունում է իր եղրօր որդուն:

Ցաջորդ օր, հօրաքրոջ նախաձեռնութեամբ, նա հրաւիրում է մի հայ ընտանեկան հաւաքոյթում ներկայ գտնուելու, ուր հրաւիրուած էին նաև 0հաննէսի հայր Անտոնը՝ իր ընտանիքով:

0հաննէսը նախ ծանօթանում է իր կէս-եղրօր ու կէս-քրոջ հետ, որոնք, որպէս հարազատի ընդունում են նրան: Եւ ապա հօրն է ներկայանում: Անտոնը, յանկարծակիի եկած, անշարժանում ու մնում է իր կանգնած տեղում քարացած: 0հաննէսը, ուրախութեան արցունքները աչքերին, ուզում է հօրը իր գիրկն առնել, բայց հայրը, չհաւատալով իր աչքերին, չփոթուած յետ, յետ է քաշւում, ոտքից-գլուխ դիտելով 0հաննէսին, որպէս պատասխան, իր գլուխն է շարժում միայն:

0հաննէսը տեսնելով հօր անտարբեր ու սառն վերաբերմունքը, յուզմունքից դողացող ձայնով ասում է:

— Հայր, հազարաւոր քիլոմետրներ անցնելով, եկել եմ 41 տարիների որդիական կարօտս առնելու

քեզանից ու քո հայրական սէրն ու օրհնութիւնը՝ հայցելու, իսկ դո՞ւ, ասիր, ինչո՞ւ ես մերժում ինձ. կարծում ես, որ եկել եմ քեզ վրայ աւելորդ բե՞ռ դառնալու, ո՞հ, ոչ, գիտցի՛ր, որ ես ապահովուած մարդ եմ, հաստատուն մասնագիտութեամբ։ Մրայն անգիտէն իր որդուն մոռցած հօր կարօտն է ինձ բերել, այստեղ հասցըել, եթէ գիտենայի, որ անգութ ճակատագիրս այսպէս է տնօրինելու, չպիտի գայի։ Աւելի լաւ կը լինէր, եթէ դու յիշողութեանս մէջ մնայիր, որպէս հեռաւոր ու անծանօթ հայր։

Օհաննէսը, լալագին, իր գրպանից մի կապոց հանեց ու իր հօր պարզելով շարունակեց,

— Առ, սրանք քո Աւետարանն ու թզպեհն են, խաչով։ Տունն էիր թողել, որպէս միակ յիշատակ ու ժառանգութիւն պահում էի, այժմ կարիք չեմ զգում . . վերցրու, մնաս բարով, թող խիզնդ քեզ գատապարտի։

Այս ասելով, Օհաննէսը թողնում է հաւաքոյթի սրահն ու դուրս գալիս, առանց ուշադրութիւն դարձնելու իր կէս-քոյր, կէս-եղրօր խնդրանքներին որ մնայ։

Ոչ հեռու գտնուող հիւրանոցում վարձած իր սենեակը մտնելով, Օհաննէսը, ալեկոծուող յուզմունքով բռնուած, անկողնի վրայ ընկնում՝ կրկնելով, — «Անգութ ճակատագիր, ո՞ր մեղքիս համար այսքան խիստ ինձ պատժում ես . . .»։

Մինչեւ կէս գիշերը նա չկարողացաւ քնանալ։ Ժամը մէկն անց էր, երր նա վեր կացաւ, հանուեց եւ անկողին մտաւ, առանց սենեակի դուռն անգամ կողպելու։

Առաւօտեան ժամը վեցն էր, Օհաննէսը, կիսարթուն վիճակում զգաց, որ մէկը իր զլիի մազերն է շոյում։ Երր իր աչքերը բաց արեց՝ ինչ զարմանք, իր կողքին, անկողնի եղրին նստել էր իր հայրը, արտասուաթոր աչքերով իրեն էր նայում։

Օհաննէսը չհաւատաց իր աչքերին, կարծում էր թէ երազում է։

Հայրը տեսնելով, որ Օհաննէսն իր աչքերը բացեց, աղաչական ձայնով ու յուզուած մրմնջաց.

— Օհ, աղնիւ պալէս, ներիր ինձ. ես էլ չգիտեմ, թէ ինչու երէկ երեկոյեան աններելի սառնութեամբ ընդունեցի քեզ: Քո հեռանալուց յետոյ միայն անդրադարձայ տգեղ արարիս . . . ամչցայ ու զղջացի . . . ամբողջ զիշեր չեմ քնել, կինս ու զաւակներս էլ միւս կողմից նախատում էին ինձ, հանգիստ չէին տալիս . . . ամբողջ զիշեր դու քո արտասուալից աչքերով չէիր հեռանում առջեւից: Օհ, որդիս, ներիր ինձ, ահա ճակատդ համբուրելով, կրկին ու կրկին ներողութիւն եմ խնդրում, ներիր ինձ:

Օհաննէսը, ուրախութեան յուզմունքից անխօս փղձկալով, հօր վզին փաթաթուեց:

Հօր եւ որդու երջանկութեան արցունքներն իրարուխառնուեցին:

Օհաննէսը, մի քանի օր ծնողական ու քոյր-եղբայրական սէր ու գուրգուրանք վայելելուց յետոյ Միւնիէն վերադարձաւ, միւրճուեց կրկին իր աշխատանքներում: Որպէս տնտեսապէս ապահովուած անհատ, անհոգութեամբ ապրում է իր գերմանուհի կնոջ ու երկու երեխաների հետ, գերմանական հպատակութիւն է ստացել: Ո՞վ է նա հիմա՝ հա՞յ, ուռմանացի՞ն, թէ՞ գերմանացի:

Խե՞ղճ հայ հայր, կարծեցիր, որ վերադարձած անդրանիկ որդիդ նեցուկ պիտի դառնայ հայկական օճախիդ: Այդ վերադարձը անօգուտ էր, այո, ԱՆՕԳՈՒԻՑ ՎԵՐԱԴԱՐՁ:

ՎԵՐՁ

## ՊԱՏԳԱՄ

Զօնում եմ՝

Դարեր շարունակ ազատագրական մարտերում ընկած հայ հերոսների եւ անգթօրէն խողիողուած միլիոնատր հայ նահատակների անմոռաց յիշատակին:

Դարերի ծալքից, պայքարի բովով,  
Փշրել կաշկանդող շղթան պատմոթեան,  
Բազում վերքերիդ խոր սպիներով,  
Յաւերժացել ես Ազգ իմ Հայկազեան:

Յ. ՌԻՔ.

## ՆԱԽԵՐԳԱՆՔԻ ՓՈԽԱՐԷՆ

Ո՞վ անմահութեան վեհ դափնեկիրներ,  
Ժամանակների փոքորկասլաց  
Թափը վերապրած մեր նախահայրեր,  
Զեր հանճարաբուխ ու բազմաթանձար  
Մտքով վարարուն, բազուկներով պիրկ,  
Դարեր շարունակ ժրաջան, զեղուն,  
Ցղկեցիք ժայռեր, բացիք ջրանցքներ,  
Հրաշակառոյց վանքեր, պալատներ,  
Եւ անկրկնելի նարտարարուեստի  
Բազում կորողներ դուք կանգնեցրիք.  
Յառաջդիմութեան ու բարօրութեան

Անսպառ պահեստ, անտակ ամբարդակ  
 Դարձրիք տունը մեր հայրենական:  
 Ամէն անգամին, երբ ասպատակող  
 Յափշտակիչներ ներս էին խուժում՝  
 Սպառնում տիրել տանն մեր հայրենեաց,  
 Դուք միասնօրէն դուրս էիք գալիս՝  
 Ասպետն ամրոցից, ուանչպարը դաշտից,  
 Դպրութեան մշակք իրենց խուցերից,  
 Մանի փոխարէն, գրչի փոխարէն,  
 Սուրն էիք բռնում, մարտի դաշտն իջնում:  
 Մարտերից յետոյ յոզնած, բայց անպարտ  
 Դուք կառչում էիք կրկին Մայր հողին,  
 Նորից վառում էր Կանթեղը մեր հին՝  
 Յոյսի, տքնումի անմահ դպրութեան:  
 Մշոյ դաշտերից մինչ անպարտ Սիւնիք,  
 Պոնտոսի փէշից մինչ Տիգրանակերտ՝  
 Կրկին բարձրանում ծուխն երդիկներից  
 Աստուածապարգեւ հայ բռնիրների:  
 Մշակներն՝ անխոնց մեղուների պէս,  
 Կրկին դաշտն իջնում, հորովէլ կանչում,  
 Բացուած հերկերում քրտինքն էր հոսում  
 Ռանչպարի նակտից սուրը, վաստակարեր,  
 Խսկ պալատներում, վանքի խուցերում՝  
 Կրկին դպրութեան գետն էր վարարում,  
 Ու պլազցող կանթեղների տակ  
 Նարեկացիներ կրկին արգասում:  
 Այդ հեղեղումից քրտինքի, մտքի  
 Բեղմնաւորում էր ցանքսը հայրենի,  
 Որի ուռնացած նեկտարով հիւրեղ՝  
 Սնուում էր գալիք սերունդն հանճարեղ:

## ՍԿԻԶԲ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ

Բայց չյաջողուեց ձեզ ամրապնդուել  
Միշտ ալեկոծուող ժամանակներում,  
Երբ վայրի ցեղեր հոծ հորդաներով  
Դէպի Արեւմուտքն էին արշաւում.  
Սհա, Ասիոյ անապատներից,  
Որպէս հրկիզող, ժայթքած լավայի,  
Խուժեց վոհմակը արհինածարաւ  
Թաք-արօ-մոնկոյ քուրք սելջուքների,  
Որն Կասպից ծովից մինչ Միջերկրական  
Զնչեց, խորտակեց, մահ, սուզ տարածեց  
Իր անցած նամրու լայնեռվ-երկայնեռվ:  
Վոհմակի նամրում՝ դէպի Նւրոպա  
Կամուրջ էր յարմար մեր լեռնաշխարհը.  
Դուք քուով ածու, հատուած ու լքուած  
Նախանձ ու խարդախ դրացիներից,  
Անկարոյ եղաք կասեցնելու  
Թուով ու գենեռվ Հորդան գերազանց,  
Որն հետզհետէ քննագրաւեց  
Եւ ամուր նստեց մեր հայրենիքում:  
Վեց հարիւր երկար տարիներ գերուած  
Հայ մարդը այլիւս տէր չէր իր գոյքին,  
Իր սուրբ վաստակին, իր ընտանիքին,  
Իր դարաստեղծ սրբութիւններին.  
Քննագրաւիչը անգութ ու դաժան,  
Խլեց, գողացաւ մանուկներ բազում  
Գերուած ու բանտուած ժողովուրդներից,  
Ենիշերիներ մարզեց նրանցից,

Որոնք արնախում դահիճներ դարձան,  
 Զարիք ու պատիժ մարդկութեան գլխին:  
 Համոզուելով, որ հայը անսասան՝  
 Կառչած է մնում իր տանն, կրօնին,  
 Աստուածապարգեւ իր հայրենիքին,  
 Եւ պիտ գայ մի օր, երբ իր ուսերից  
 Պիտի թօքափի շղթան գերութեան,  
 Հորդան որոշեց գտնել մի առիք,  
 Որպէսզի տիրոջն իր խլած երկրի  
 Աշխարհից ի սպառ անհետացնի:  
 Եւ ահա եկաւ առիքն այդ յարմար,  
 Երբ պետութիւններ «կիրք» Եւրոպայի,  
 Հազար իննիարիւր տասնեւչորս թուին,  
 Աշխարհակործան մարտի դուրս եկան:  
 Արիւնակարօտ Ժէօն դահնապետներ,  
 Համայն թուրք եւ բուրտ վոհմակների հետ,  
 Նախ զօրակոչի պատրուակի տակ,  
 Առանձնացրին ու կոտորեցին  
 Բազում անտեղեակ հայ կտրիճների.  
 Ապա նենգօրէն ձերքակալեցին  
 Ազգային պարծանք, հանճարածնունդ  
 Մտքի եւ ոգու մեր տիտաններին՝  
 Սիամանթռներ ու Վարուժաններ,  
 Եղեմնազեղգեղ Կոմիտասը մեր,  
 Եւ դարանուէք Զոհրապների հետ  
 Գերեվարուեցին, գանգահարուեցին . . .  
 Անրիւ հայ գիւղեր բոցի մէջ կորան,  
 Բազում բաղադրներ աւեր ու կործան.  
 Մէկ ու կէս միլիոն անմեղ, նազանի  
 Սիրասուն հարսներ, աղջիկներ գեղուն,  
 Մայրեր, մանուկներ՝ ողբացող, լացող,  
 Դէ՛ՌԶՕՌ քշուեցին, նահատակուեցին:  
 Մեր հայրենածին գետերը սգուոր՝  
 Տիգրիս ու Եփրատ եւ Արածանին,  
 Մինչ ափունք լեցուն բիւր դիակներով  
 Հարսների ու կոյս հայուհիների,

Որոնք ինքնակամ մահն էին ընտրել,  
 Քան գիրկը խենէց, լկտի ոսովի:  
 Զեյթունի, Սասնոյ, Գարահիսարի  
 Եւ ամէնուրեք մեր լեռնաշխարհի  
 Բազում ծերպերում ապաստան գտած  
 Արծուորդիք չը յանձնուեցին,  
 Այլ պահած իրենց վերջին գնդակով,  
 Անձամբ կտրեցին թելն իրենց կեանքի:

## ԴԱԻԱԴՐՈՒԹԻՒՆ՝ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՐԾԱԼՈՅՑՄԻՑ

Խսկ Վասպուրական ու Մուսա լեռը,  
 Ծանր օրհասական խիզախումներով,  
 Թուռվ գերազանց հզօր թշնամուն  
 Ընդդիմադրեցին՝ փրկութեան հասան:  
 Վասպուրականի հերոսամարտում,  
 Երկրորդ Արամներ ու Արմենակներ  
 Կուռ, միասնական վեռական զարկով,  
 Բոնազրաւիչին դուրս վոնտեցին,  
 Քսանեօք դարեր առաջ կառուցուած  
 Արամ առաջնի թերդի պարսպին՝  
 Ազատ հայութեան դրօշն պարզեցին:  
 Բայց, աւա՛ղ, շատ կարն տեւեց ձեռք թերուած  
 Ազատութիւնը Վասպուրականում.  
 Հիւսիսից հայուն, «օգնութեան» եկած  
 Սպիտակ Ցար Քենին, չնայած յաղթական,  
 Բոնազրոսիկ նահանջի դիմեց,

Եւ ահա «Քեռու» կամքով, իրամանով,  
 Վասպուրականցին լքուած, հիասթափ,  
 Թողեց հինաւուրց իր հայրենիքը  
 Եւ ապաւինեց Մասիսի փէշին:

Շինծու նահանջից բուրքը սիրտ առած,  
 Փախուստի նամրից յետ վերադարձաւ,  
 Պէնտի Մահույի կիրճով ընթացող  
 Գաղթականութեան նամրան կտրելով,  
 Նոր սպանդ սարքեց, մի նոր նապաղիք:

Եւ ահա, այսպէս, յոյժ առաջադէմ  
 «Կրթեալ» մարդկութեան աչքերի առջեւ  
 Շարունակուում էր այս անկրկնելի  
 Ողբերգութիւնը ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ:  
 Այս տագնապալի ու ծանր օրերում,  
 Ցարը գահընկէց մեր «Քեռու» երկրում,  
 Բանակը անդեկ ու խունապահար,  
 Ոչ միայն լինեց նոր գրաւած վայրեր,  
 Այլ եւ իր տիրած մեր տան անկիւնը՝  
 Հայու վերջին յոյսն - Դաշտն Արարատեան:  
 Մեծուած, անօթի ոսոխ թշնամին,  
 Իր վերագրաւուած սահմանի վրայ,  
 Տիրելով «Քեռու» բողած զէնքերին  
 Եւ լեռնակուտակ մթերքեղէնին,  
 Կրկին ուժ առած առաջ շարժուեց,  
 Ուզեց այս անգամ ջնջել հայութեան՝  
 Եւ Արարատի փէշերում թաղել:

ՆՈՐ ԱՒԱՐԱՅՐԸ

Կեանիքի ու մահուան անխուսափելի  
Վերջին պայքարի ժամն էր մօտենում,  
Նոր Աւարայրի, մարտը վարելու  
Վարդաններ անպարտ յարութիւն առին.  
Արամ, Սիլիկեան եւ Արարատեան,  
Վարդանի նման անձնազոհ, խիզախ,  
Շփորուած, անյոյս հեզ խլեակներին  
Ճակատագրական մարտի կոչեցին, -  
«Սա է մեր վերջին մարտը վեռական,  
Ով բազմաչարչար դու հայ ժողովուրդ,  
Կամ մենիր պատուով հերոսի նման,  
Կամ ձեռք բեր անձամբ ազատութիւնդ»:  
Եւ ահա հրաշք անսպասելի  
Տեղի ունեցաւ Մասիսի փէշում՝  
Նախորդ մարտերում կոփուած հայդուկներ,  
Զառամեալ ծերեր, սէզ պատանիներ,  
Հարսներ, մայրիկներ՝ այրերն կորցրած  
Ճակատ նետուեցին սպառագինուած.  
ՍՍ.ՐԴԱԾԱ.ՊԱՏԻ, Պաշապարանի,  
Ղարաքիլիսէի ոազմադաշտերում,  
Թուով ու զենքով հուժկու ոսխին  
Խորտակիչ զարկով յետ շպրտեցին:  
Որպէս մասնակից եւ ականատես  
Սարդարապատի ճակատամարտին,  
Թոյլ տուել պատմել անյայտ զինուորիս՝  
Հերոսապատման մի դրուագ անմոռ,  
Որը գալիս է ապացուցելու

Հայ մարդու ներսում միս-արիւն դարձած  
Այն հաւատամբը իր նախնիների,  
Թէ «Մահն գիտեցեալ՝ անմահութիւն է»:  
Վճռական մարտի նախորդ օրն ի բուն,  
Շտապ կազմուած օօրաբաժիններ,  
Ողջ արեւմտեան ճակատի լայնեռվ,  
Դասաւորուեցին իրենց դիրքերում:  
Ճինգերորդ գնդի երկրորդ վաշտը մեր,  
Ղեկավարութեամբ գնդապիտ Հայկի,  
Դիրքեր գրաւեց միջին նակատում:  
Գիշեր էր արդէն, երկինքը յստակ,  
Մաշուող կեռ լուսին թեքուել էր դեպ վար.  
Այս խորհրդաւոր պահին, քիչ հեռու,  
Գնդի վրանում, մոմի լոյսի տակ,  
Սպայակոյտն էր խորհրդի նստել:  
Կէս գիշերն անց էր, երբ մեր վաշտապետն  
Հապճեապ քայլերով դիրք վերադարձաւ.  
Շարքի կանգնեցինք, եւ նա զսպուած  
Ցուզմունքի ձայնով դիմեց Բոլորիս, -  
«Իմ հայ եղայրներ, մենք տեղեկացանք,  
Որ մեր թշնամին, վաղ առտու կանուխ,  
Ամրող նակատի լայնեռվ-երկայնքով,  
Պիտ համապարփակ յարակման անցնի.  
Հրահանգուած է սառնարիւնութեամբ  
Սպասել՝ մինչեւ ոսխն մօտենայ,  
Հակայարձակման կը դիմենք, երբ մեր  
Գնդացիրային համազարկն լոի.  
Որպէս ձեր աւագ, ձեր մեծ եղայրը,  
Երդուել պիտի տամ ձեզ այս օրհասին,  
Կրկնեցեք խօսերս, երդուենք միասին՝  
Զոհուել յանուն մեր ազատագրման»:  
Եւ ամրող վաշտը բարեւի կանգնած՝  
Կրկնեց խօսերը իր վաշտապետի, -  
«Երդւում ենք պատուով, սուրբ անուններով  
Մեր մարտիրոսուած նահատակների,  
Որ պատրաստ ենք մեր կեանքը զոհելու՝

Յանուն փրկութեան մեր հայրենիքի»:  
 Երդումի այս կարն արարից յետոյ,  
 Հրամանատարը կրկին մեզ դիմեց, -  
 «Այսօր ամրող օր մեծ լարուածութեամբ  
 Շարժուել ենք, բայլել, հանգիստ չենք առել,  
 Անցեք ձեր դիրքեր, զենքերդ ստուգէք,  
 Աշխատէք նաև ֆիշ հանգստանալ,  
 Որպէսզի առտու, արեւածագին,  
 Թարմացած ուժով մարտի դաշտ իջնեք»:  
 Բայց ո՞վ կարող էր արդ հանգստանալ,  
 Երբ համբերութեան բաժակն էր լեցուել,  
 Երբ ամէն ոքի տնեքացող սրտում,  
 Դարերում կիտուած վրէժն էր ժայթում,  
 Երբ միլիոնաւոր նահատակների  
 Կանչն էր կրկնեում փոխհատուցումի:  
 Մեզ իր շուրջն առած մեր շարքապետը  
 Պատմում էր իր դառն տառապանքներից,  
 Թէ ինչպէս Խնուսի ջարդերից փրկուած,  
 Վիրաւոր, հիւանդ Խգտիր էր հասել:  
 Մօտըս տեղ բռնած տասնեւինինգամեայ  
 Պարբեւ, ամրակազմ սասունցի Վարդանն,  
 Որի հետ որպէս անտուն, անծնող  
 Քարշ էինք գալիս նոյն որրանոցում,  
 Դողացող ձայնով բռլորիս դիմեց՝  
 Ուզեց, որ լսենք իր պատմութիւնն էլ.  
 Մէկ կէտի յառած իր խոշորացած  
 Սեւրակ աչքերն՝ այսպէս սկսեց, -  
 «Տասնեւինինգ բուին Սասնոյ լեռներում,  
 Մի անհաւասար արիւնոտ մարտում,  
 Նախ հայրս ընկաւ հերոսի մահով  
 Մի բանի տասնեակ ընկերների հետ.  
 Ապա քուրք եւ քուրդ ջարդարարները,  
 Բոլոր անպաշտան մնացողներիս՝  
 Կանանց, ծերերին, երեխաներին,  
 Աբսորի-մահուան նամրով քշեցին.  
 Կէս նանապարհին մի քուրդ ցեղապետ

Մայրիկիս խլեց, մեզնից բաժանեց,  
 Ես եւ տատիկս մեր նամքան մահուան  
 Կարաւանի հետ շարունակեցինք:  
 Ամէն մի գիւղի մօտով անցնելիս,  
 Թուրք կամ քուրդ խուժան մեզ շրջապատում,  
 Վերջին շորն ու իր կրկին բալանում:  
 Մի օր էլ, ահա, երը յոգնած, անուժ  
 Կանգ առինք մի քուրք գիւղի կենտրոնում՝  
 Մեզնից բռնութեամբ խլեցին տասնեակ  
 ինձ հասակակից պատանիների,  
 Մեզնից քեչ հեռու - մեր աչքի առջեւ  
 Ծունկի բերեցին ու գլխատեցին.  
 Կտրած գլուխներ մէջտեղ նետեցին  
 Թուրք լամուկների ոտքերի առջեւ,  
 Որոնք քրքիջով սաղայէլական,  
 Հայ մանուկների արնոտ գանգերով  
 Գնդակ խաղացին ու հրճուեցին . . .  
 Կիսախելագար հայ մայրիկները  
 Զենները դէպի երկինք երկարած,  
 Պաղատում էին սրբերին բարձրեալ . . .  
 Որոնք վերեւից նայում անտարբեր . . .  
 Խսկ ես քազնուած տատիս փէշի տակ՝  
 Սարսուով, դողով տեսայ նախնիրն այդ:  
 Չորս երկար տանջող տարիներ անվերջ,  
 Եւ մինչեւ այսօր հանգիստ չունէի,  
 Հարազատներիս եւ թիւր զոհերի,  
 Բզկտուած դիերն, այլայլուած դէմքերն  
 Աչքերիս առջեւ ելնում, մրմնջում,  
 Ու ցնցում էին եռթիւնս համակ,  
 Վերյիշեցնում յոյժ պարտադրանքով՝  
 Փոխհատուցումի երդումս անխախտ:  
 Եւ ահա այսօր ես երջանիկ եմ,  
 Որ վաղուց տուած երդումս կրկնեցի,  
 Որ առտու կանուխ իղաս է կատարում . . .»:

Արշալոյսն արդէն բացւում էր դանդաղ,  
 Երբ մեր թիկունքից ձայներ լսեցինք,  
 Կանացի ձայներ, ձայներ սրտագին,  
 Դեպի մեզ դիմող հայուհիների՝  
 Մատադ, դեռահաս ՈՐԲՈՒՀԻՆԵՐԸ  
 Գրութեան քրոջ տարագներ հազած,  
 Տներից ելած մայրեր, աղջիկներ  
 Ուտելեղէնի կապոցներ բռնած,  
 Ցրուեցին ամրող ճակտի երկայնքով,  
 Որոնցից մէկ խումբ մեզի մօտեցաւ  
 Քաջալերանքի սրտարուխ կանչով, —  
 «Մենք ենք, եղրայրներ, ձեր հոգուն մատադ,  
 Դեղներ ենք բերել, գինի, հաց-պանիր,  
 Մենք ձեզ հետ կմնանք, ձեզ հետ կմհննենք,  
 Կամ յաղթանակով տուն կվերադառնանք»:

\* \* \*

Աղօթարանը արդէն կարմրել էր՝  
 Զոհարերութեան ալթարի նման,  
 Մենք կազմ ու պատրաստ դիրքերում պառկած,  
 Ճակայարձակման անզուսպ տենչանքով,  
 Անհամբերութեամբ սպասում էինք  
 Ճակառակորդի առաջխաղացման:  
 Ահա, վերջապէս, հիւսիսից-հարաւ,  
 Ամրող ճակատի լայնենք-երկայնքով,  
 Թշնամու շղթան առաջ շարժուեց,  
 Անվերջ գոռալով՝ «Սալավարթ, Ալլա՛ա՛հ».  
 Եւ ահա եկաւ րոպէն ցանկալի,  
 Երբ լոեց ձայնը գնդացիրների,  
 Որին յաջորդեց սարտոեցուցիչ,  
 Մեր միահամուռ կանչը երկնացունց, —  
 «Յանուն փրկութեան, ազատագրման  
 Բռնագրաւուած մեր Ճայրենիքի».  
 Դիրքերից ելած, միշտ կրակելով,  
 Խելահեղ քափով առաջ նետուեցինք,

Խսկ մեզ հետեւող հայուհիները՝  
 Եռագոյն դրօշը ծածանեցնելով,  
 Մեզ որպէս պատգամ ու քաջալերանք  
 «ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ» երգեցին խրոխտ:  
 Թշնամին մէկէն շշմեց, սասանեց,  
 Խուճապը տիրեց նրա շարժերում.  
 Մեր շանթող, խոցող համազարկերից  
 Ստիպուած եղաւ երես դարձնել.  
 Ահա այդ պահին, աջից ու ձախից,  
 Սուսեր նօնելով, ուռա կանչելով,  
 Առաջ նետուեցին փոքրաբիւ, արի  
 Նախլին կամաւոր հայ հեծեալները:  
 Թշնամու վարած ինքնապաշտպանումն,  
 Այլիւս յուսահատ փախուստի փոխուեց,  
 Մահուան մանգաղը, այլիւս այս անգամ,  
 Դարեր խոշտանգուած հայու ձեռքն անցաւ,  
 Նոր Աւարայրի դաշտը ծածկուեց՝  
 Ոստի արեամբ ու դիակներով.  
 Հալածում էինք անարգ թշնամուն,  
 Որ կրակելով յետ էր նահանջում:  
 Այդ պահին կողքիցս վազող Վարդանը,  
 Յանկարծ օրօրուեց ու ծունկի եկաւ,  
 Ես կարծեցի, թէ ոստից զարնուեց,  
 Իրեն մօտեցայ, ուզեցի օգնել,  
 Բայց նա իր կրծքի աջ կողմը բռնած,  
 Ուսիս յենուելով թոյլ ձայնով խօսեց, -  
 «Մի մտահոգուիր, եղբայր ուազմակից,  
 Յաղթանակը միշտ զոհ է պահանջում . . .  
 Ոչ, չեմ ափսոսում, հաւատացիր ինձ,  
 Քանի որ վրէժս լուծուած եմ տեսնում,  
 Ես համոզուած եմ՝ այս յաղթանակով  
 Սկիզբ է տրում մեր ազատութեան . . .  
 Վերջին խնդրանէս է, որ ապագային,  
 Մեր այս յաղթութեան տարեդարձներին,  
 Յիշես այս բռպէն, յիշես նաև ինձ,  
 Որ գէք իմ հոգին անէութիւնից,

Գայ սաւառնելու ազատագրուած  
 Մեր լեռնաշխարհի երկնակամարում . . .  
 Տես, այս դաշտի մէջ մեր մարտնչումի,  
 Թշնամու շարքից հազարներ ընկան,  
 Մենք չսպանեցինք, չը գլխատեցինք  
 Անմեղ մանուկներ, ծերեր անկարներ,  
 Սա հերոսական, նակատ առ նակատ  
 Թուրքին հասցուցած փոխ-հատուցում է . . .»:  
 Մէկէն նա բուլցաւ, ձայնը նուաղեց,  
 Գունատ շուրթերով հազիւ փսխաց, -  
 «Դեռ ասելիիներ ունեի, աւա՞ղ,  
 Տեսնում ես շուտով ես չժանում եմ . . .  
 Փակիր աչքերս . . . մօրս փոխարէն . . .  
 Վերջին հրաժեշտը դու տուր, եղրայր իմ . . .»  
 Երբ ես կուացայ ու համբուրեցի  
 Լուսաշող նակատն մարող հերոսի՝  
 Նա այլեւս չկար, այլեւս անշարժ էր.  
 Ու երբ փակեցի սառ ժպիտով լի,  
 Գարնան վաղամեռ ծաղկանց թերթի պէս  
 Նրա աչքերի կոպերը տժգոյն՝  
 Անշարժ, կիսարաց շուրթերից ի վար  
 Հոսեց արիւնը խոցուած թռերից:  
 Ճիշդ այդ վայրկեանին փախուստի դիմող  
 Վախկոտ թշնամու անուժ գնդակից  
 Ճակտիս կենդրոնում բացուած փոքր վերքից՝  
 Կարիլ առ կարիլ հոսեց արիւնս,  
 Ու խառնուելով զինակցիս թերնից  
 Դեռ դանդաղորէն ծորացող արեան,  
 Լճացաւ գետնին նոր Աւարայրի.  
 Եւ ինձ բուաց, թէ այդ լինն լայնացաւ,  
 Փորորկող արեան մի ովկեան դարձաւ,  
 Որից խոյանեռով գունդ առ գունդ ելան՝  
 Դարեր շարունակ խիզախած, ընկած  
 Անթիւ ուազմիկներ, հայ ֆետայիներ,  
 Փողեր հնչեցին, առաջ նետուեցին . . .  
 Երբ ես սրափուած շուրջս նայեցի՝

Կողքիս կանգ առած մի հսկայ ծերուկ,  
 Ոտքից վիրաւոր, իր զէնքին յենուած  
 Խնճունեօթնամեայ Ղարաբաղցի Սէթն,  
 Իր ձեռքը ուսիս վրայ դնելով,  
 Խօսեց հայրական փաղաքշանենվ, -  
 «Վեր կաց, այ պալէս, մի յուզուի այդպէս,  
 Եթէ եղրայրդ է, կամ ազնիւ ընկերդ՝  
 Նա իր սրբագոյն պարտքը կատարեց,  
 Եւ անմահացաւ հերոսի մահով.  
 Ահա զալիս են գրութեան ժոյրեր,  
 Վեր կաց, մօտեցիր, թող վերքդ կապեն.  
 Դու պարտաւոր ես արիւնդ խնայել,  
 Ո՞վ է իմանում, զալիք օրերին,  
 Դեռ ինչժան նման մարտեր պիտ վարենք» . . .

\* \* \*

Եւ այսպէս երեք ուազմադաշտերում,  
 Միեւնոյն օրուան միեւնոյն ժամին,  
 Դարեր շարունակ մեզ գերող, ննշող  
 Թուրքը յաղթուած փախուստի դիմեց,  
 Խսկ երկու օր վերջ - ՄԱՅԻՍ ՔՍԱՆՈՒԹԻՆ,  
 Առաջին անգամ ի լուր աշխարհի,  
 ՀԱՅԸ ԱԶԱՏՈՒԱԾ, ԱՆԿԱՆ ՀՌԶԱԿՈՒԵՑ:

## ՎԵՐԱԾՆՄԱՆ ՑՈՅՑԸ

Չնայած հատուած, աղբատ, չարատանց,  
 Բայց ստեղծագործ ազգիս բեկորը,  
 Իր վերածնունդն սկսեց ապրել՝  
 Իր խոր վերբերը բուժել, դարմանել,  
 Որպէսզի նորեկ հայ քանաստեղծներ,  
 Փոխանակ լալով արտասանելին  
 «Ուրի հայրենիք, որքի հայրենիք»,  
 Երգէին գովքը վերածնունդի,  
 Ու գոչէին գոռ - ՀՐԱՇՔԻ ՀԱՅՐԵՆԻՔ:  
 Բայց աւաղ, աշխարհս դեռ չէին քաժնել  
 Յաղթող եւ յաղթուող ներհակ ուժերը,  
 Իրարու հանդէպ քակարդներ լարում,  
 Նոր դաւեր սարքում մուր անկիւններում,  
 Թոյլ եւ փոքրաթիւ ազգութիւնների  
 Ազատութիւնը վաճառքի հանում . . .  
 Քաններորդ դարում առաջին անգամ  
 Թուրքը կատարեց ազգասպանութիւն,  
 Բոլոր մեծերը մեղսակից դարձան  
 Անպատիժ մնացած այդ զազանութեան,  
 Այնինչ, դեռ երեկ մի քանի հազար,  
 Հիրլերեան նացի դահնապետների,  
 Կատարած անգութ ազգասպանութեան  
 Տուգանքը արդար դեռ մինչեւ այսօր,  
 Ողջ գերման ազգն է փոխհատուցանում:  
 Եւ անցեալում թոյլ Ազգերի Լիգիան,  
 Նոյնպէս խրտուիլակ ՄԱԿը այսօրուան,  
 Լուռ եւ անտարբեր կոյր վկաներ են  
 Մեր մարտիրոսման ու նահատակման:  
 Օ՛հ, մի՛քէ սա մի կծու ծաղրանք չէ  
 Նետուած երեսին գիտակ մարդկութեան,

Երբ այսօր անյայտ եւ անպատմութիւն  
 Ցեղերը արդէն ինքնուրոյն դարձան,  
 Խսկ մենք՝ ազգութիւն չորսհազարամեայ  
 Մեր մշակոյթով վառ փարոս դարձած,  
 Աշխարհով ցրիւ, իրաւագրկուած,  
 «Անվերջ ննշումից աղամանդ դարձած»,  
 Օտար ձեռքերում շրջան կատարում,  
 Անուրդի հանւում սեւ շուկաներում . . .  
 Երբ մեր դարաւոր ոսոխը կրկին,  
 Առաջ էր շարժւում, լուծել էր ուզում՝  
 Վրէժն իր կրած ծանր պարտութեան՝  
 Մեր նորաստեղծ հանրապետութիւնն  
 Խարուած ու լքուած նենգ արեւմուտից  
 Զը կարողացաւ պահել, պահպանել  
 Ազատագրուած հայ նահանգները,  
 Անգամ իր տիրած փոքրիկ անկիւնը . . .  
 Մենակ մնացած թեկորն ազգութեան,  
 Անկարող կերտել նոր Սարդարապատ,  
 Օգնութիւն հայցող իր ձեռքն երկարեց  
 Հիւսիսից եկող իր մեծ դրացուն,  
 Որով փրկուեց մի կիսուած անկիւն,  
 Իր հին, սեփական մեծ հայրենիքից,  
 Ուր մեր եղբայրներ, բոյրեր տքնաչան,  
 Վերշինում են, ստեղծագործում,  
 Հիմքերն են շարում մեր ապագայի:  
 Այնտեղ հաննարեղ հայորդիները,  
 Գիտութեան մշակ անքիւ հերոսներ,  
 Համբարակումեաններ, Ալիխանեաններ,  
 Պարոյր Սեւակներ, Կապուտիկեաններ,  
 Հայրենապահանջ յախուռն Շիրազներ  
 Եւ հրաշագործ բիւր հայորդիներ,  
 Էն փոքր անկիւնը մեր հայրենիքի  
 Դարձրել են ԿԱՃԱՌ համաշխարհային:  
 Ու երբ մօտեցան Յիսունամեակներ՝  
 Մեր աննախընթաց նահատակութեան  
 Եւ անկրկնելի նոր Աւարայրի,

Էն փոքրիկ բոյնում, Մասիսի դիմաց,  
Վրէժի, փառքի նոր ատրուշաններ,  
Անմահ կորողներ, բուրգեր կերտեցին,  
Ծէս մատուցեցին յարգանքի, սիրոյ  
Մէկ ու կէս միլիոն նահատակներին,  
Ոգեկոչեցին, փառարանեցին  
Անմոռաց Քաջաց Սարդարապատի,  
Եւ փոխանձեցին խիզախումն նրանց,  
Ներկայ ու գալիք նոր սերութղներին:  
Որպէս արձագանգ այս խնկարկումի,  
Հայրենիքից դուրս քշուած, հալածուած  
Աշխարհացրի հայ խլեակների  
Հայրենապահանջ կիզուող սրտերից,  
Ժայռքեց բողոքի կանչը հատուցման:

## ԱԶԳԱՍՊԱՆԸ, ՈՐՊԵՍ ԱԶԳԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

Համայն հայութեան այս կանչը արդար,  
Լսելի չեղաւ էն խուլ, խրտութիւնկ  
ՈՒՆՕ-ի «Ազգաց իրաւութեների  
Պաշտպան» համարուող դատի սեղանին,  
Ուր որպէս «Դատող եւ իրաւարար»  
Նստել է գայլը գառան մորթիով -  
Արիւնակզակ սելցուկ Օսմանը,  
Դարաւոր դահինն հայ ժողովրդի, -  
Ի՞նչ ամօք, ծաղրանք ՈՒՆՕ-ի «պատուին»:

## ՊԱՏԳԱՄԻ ԱՒԵՏՈՒՄԸ

Այս կոչն հայութեան արդար բողոքի,  
 Արձագանգ չգտաւ, յետ վերադարձաւ,  
 Եկաւ զարնուեց սէգ Արարատին,  
 Յորդեց, խոյացաւ դէպ զագարն ի վեր,  
 Եւ էն ծիւնածածկ թիւրեղ զագարում,  
 Մի ամպրոպ պայթեց, կայծակ, որոտում,  
 Անհունի խորքից լոյսի խուրձերը  
 Վար իշեցրին հին, հին դարերում՝  
 Վեհ Աւարայրի, Զէյթունի, Սասնոյ,  
 Վասպուրականի, Սարդարապատի  
 Բազում Մարտերում ազատագրական,  
 Խիզախած, ընկած թիւր հերոսների  
 Լոյս հոգիներին հայրենանուեր,  
 Որոնք միաձայն այս պատգամն տուին, -  
  «Ո՞վ հայորդիներ, մենք - հոգիներս  
 Չեր մարտիրոսուած թիւր նախնիների,  
 Դարեր շարունակ մեր հայրենիքի  
 Ազատագրման համար պայքարել,  
 Ցաղթանակներով, պարտութիւններով,  
 Լեցուն փորձերը, որպէս դաս, ուղի,  
 Չեզ ենք փոխանձել, յուսալով, որ դուք  
 Մեր դարաւոր իղձն ի կատար կ'ածէք:  
 Այդ սպասումով դեռ մինչեւ այսօր,  
 Սաւառնում էինք, որպէս կարօտ, տենչ,  
 Խլուած մեր երկրի երկնակամարում:  
 Եւ ահա այսօր իշանին ձեր կանչով  
 Գերուած Մասիսի խորան - զագարին,  
 Ուրկէ յդում ենք մեր ՊԱՏԳԱՄԸ ձեզ. -  
 Նախ ձեզ ենք դիմում՝ հայրենիքից դուրս  
 Ցրուած, քաժանուած անտուն զաւակներ, -  
 Ցիսուն տարիներ եւ մինչեւ այսօր,  
 Զէիք միացել, չէիք շանացել

Արդարացնել յոյսը՝ խիզախող  
 Հայրենակառոյց ձեր եղբայրների:  
 Եւ դուք Հայ ՄԱՅԹԵՐ, դարերէ ի վեր  
 Սրբութիւն սրբոց, անրիծ էք եղել,  
 Ծնել էք անթիւ կտրին հերոսներ՝  
 Վարդաններ Կարմիր եւ Անդրանիկներ.  
 Պայքարի բովում, տանջանքի ծովում,  
 Անապատների աւագի վրայ,  
 Մարաւի, սովի, մահուան նիրանում,  
 Զեր գաւակներին լոյս էք ներշնչել,  
 Ցոյս էք ներշնչել յարատեւութեան,  
 Մահուան վտանգից նրանց փրկեցիք,  
 Այժմ նրանք անել, հանճարներ դարձել,  
 Բայց ոմանք նրանցից մոռացել են ձեզ,  
 Մոլորուել թմրել, հեռացել ազգից.  
 Որպէսզի փրկէք նրանց կորստից,  
 Սպիտակ շարդի անողոք նանկից՝  
 Ցիշեցրէք նրանց՝ իրենց պարտքը մեծ –  
 Զեր կրծքից ծծած կարի հատուցման:  
 Եւ դու, Մեսրոպիան լոյսը վառ պահող  
 Վեհափառ երէց Հայ Նկեղեցի,  
 Որ հայ հանճարի, մտքի, գոյութեան  
 Եւ յաւերժական յարատեւութեան  
 Հովանաւորողն, դեկողն ես եղել.  
 Բայց հիմա նայիր՝ ինչ է կատարում  
 Քո միասնական հին անդաստանում, –  
 Արդ դու կէս արուած արեգակի պէս,  
 Բաժանուած երկու երկնակամարում,  
 Այլեւս չես սփռում լոյսդ միասնական,  
 Որ ժողովուրդդ մէկ նամրով բայլի,  
 Հետեւի մեն-մէկ Ղեւոնդ նրէցի,  
 Առաջնորդութեամբ մէկ նոր Վարդանի,  
 Մի նոր Աւարայր, մի նոր փառք կերտի,  
 Որ Ախրամարի, Սուրբ Կարապետի  
 Տաճարներն կրկին վերանորոգուեն,  
 Որպէսզի կրկին ողջ Հայաստանից,

Մէկ «ԱՆԼՈԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՆԻՑ»,  
 Զանգերն ողանցեն, աղօք-ի կանչեն,  
 Որ միասնական մէկ կուռ տանարից,  
 Մէկ սուրբ խորանից համահայկական,  
 Լուսի մեղեդին էն հոգեպարար՝  
 «Առաւոտ լուսուն Արեգակն արդար» . . .  
 Այժմ ձեզ ենք դիմում – մեր յոյսի սիւներ՝  
 Եւ հայրենիքում ստեղծագործող,  
 Եւ գաղութ-ներում հայրենակարօտ  
 Կարող, ընդունակ հայ նոր սերունդներ, –  
 Եթէ չը կուէ համահայկական  
 Մի անխոցելի հուժկու միութիւն,  
 Եթէ չը կազմէք մէկ պատկառելի  
 Փոխ-հատուցումի բռունցք մարտական,  
 Ու մեր ոսխից ԲՌՆՈՒԹԵԱՄԲ չխլէք  
 ԲՌՆՈՒԹԵԱՄԲ խլուած մեր տունն հիմաւորց,  
 Մէկ ափ հող անգամ չէք ստանալու՝  
 Ոչ բարեկամից, ոչ էլ բշնամուց:  
 Ցիշէք պատուերը ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿի,  
 Երբ նա Պերլինեան համաժողովից,  
 Դառն, հիասքափուած տուն վերադարձաւ,  
 Ցայտարարեց նա ի լուր հայութեան, –  
 «ԵՐԿԱԹԷ ՇԵՐԵՓ ՊԻՑԻ ՈՒՆԵՆԱՍ,  
 ՈՐ ՀԱՐԻՍԱՑԻՑ ԲԱԺԻՆ ՍՏԱՆԱՍ»:  
 Նոյնն է այսօրուան մեր յորդորանքը,  
 Որպէս պատասխան այս հոգեկոչման:  
 Դեռ որքան երկար, միշտ քափառական,  
 Մենք – հոգիներս պիտի սաւառնենք,  
 Մեր գերուած երկրի երկնակամարում:  
 Լսէ՞ք, խստութեամբ ձե՛զ ենք պարտադրում,  
 Հանճարեղ, կարող հայ նոր սերունդներ՝  
 Դուք էք որ պիտի ձեռք-ձեռքի տուած,  
 Վանն ու Սեւանը, Սիւնիքն ու Սասուն,  
 Ալիսն ու Արախ, Մասիսն ու Սիփան,  
 Հաւաքէք, բերէք դարձնէք մի տուն:  
 Եւ այդ երջանիկ պահին է միայն,

Որ հոգիներս պիտ հանգիստ գտնենք,  
 Պիտի վար իշնենք, որպէս ցող, անձրեւ,  
 Պիտի միանանք մեր լեռնաշխարհում  
 Ցրուած, մոխրացած մեր անհւներին,  
 Պիտի վերածուենք նիւթի, ընդերքի,  
 Որպէս բոյս, ծաղկի, որպէս լոյս, շարժում  
 Ու թարմացնող զեփիւռ, մեղեդի,  
 Մասնակից դառնանք ձեր արարչութեան:  
 Եւ քող ձեզ համար, որպէս սուրբ ՊԱՏԳԱՄ,  
 Գրուեն դրօշին ձեր վաղուան երթի,  
 Մեր սրտից բխած ու աղօթք դարձած  
 ՊԱՏԳԱՄԸ յորդոր, դարուդ մեծագոյն  
 Ու նահատակուած հայ բանաստեղծի, -  
 «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը՝  
 քո հաւաքական ուժի մէջն է»:

\* \* \*

Այս պատգամաւանդ ձայնը երբ լոեց,  
 Հոգիները բիւր մեր նախնիների,  
 Բոցեր շանթեցին Արարատն ի վար,  
 Զահեր վառեցին համայն հայութեան  
 Վաղուան պայքարի նոր ուղիներում,  
 Եւ ապա, իրենք դէա վեր սլացան՝  
 Սպասումներով ՓՈԽ-ՀԱՏՈՒՑՈՒՄԻ:

## ՎԵՐՋ

Յ. ՈՒՐԱՐՏԱՑԻ

1965 թ.

Ապրիլ - Մայիս  
Միւնխեն

## ՎԵՐԶԱԲԱՆ

Յարգելի ընթերցող

Մեծ եղեռնի արիմածութ օրերուն, նրաշրով ազատ-  
թելով մեր դարաւոր թշնամու հաթաղանէն, որպէս ականա-  
տես վկայ բազում զարմութելի նախճիրներու, աշխարհա-  
ցունց բողոքագիր դարձուցի այս Յափշտակուած Հոգիներ  
ԵՊԵՐԱԳԻՐԱ, որու վեց ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ, կը նկա-  
րգեմ անիրաւուած Հայ ժողովուրդի վեցնարիմանայ  
ԳՈՂԳՈԹԱՅԻ անշան մանրանկարը միայն:

Յափշտակուած այս սահմուկեցուցիչ դեպքերը՝ ոչ առա-  
ջիններն են և ոչ ալ վերջինները, որոնք պիտի շարունակ-  
ին, բոնի կամ ինքնակամ, այնքան ժամանակ, քանի դեռ  
չենք տիրացած մեր պատմական Հայրենիքի ամբողջական  
սահմաններուն, քանի դեռ ԱԶԳԱՀԱԽԱՔ չենք կատարած  
ու ազգովին չենք հաւաքուած ՄԵԿ-ՄԻԱՍՆԱԿԱՆ Հայկա-  
կան պետականութեան հովանու տակ:

Անհրաժեշտ կը համարեմ ընթերցողներու ուշադրու-  
թեան յանձնել վկայութիւններու, Հերոսներու ազգային  
ինքնազիտակցութեան ըմբռնումներու տարրերութիւնները:  
Յափշտակուածներէն երկուքը հարիր տոկոսով զտարին  
Հայ ըլլալով մէկտեղ, հակառակ իրենց կամքին,  
հանգամանքներու ստիպման ներոյ, չեն կրցած միամալ  
իրենց ծնունդ տուող ազգին, միաները՝ պարձանքով կը  
խօսին իրենց կիսահայկական ծագում ունենալու մասին,  
կ'ողբան, որ որպէս զտարին Հայ չեն ծնուած, իսկ մէկն ալ,  
միջազգային մասշտապով նշանաւոր մասնագէտ դարձած,  
բացարձակապէս կ'անտեսէ իր զուտ հայկական ծագում  
ունենալը: Ասոնք բոլորն ալ, անխտիր, դատապարտուած են  
վերջնական ձուլման:

**Ի գիտութիւն.** - Երրորդ եւ վեցերորդ վկայութիւններու «հերոսներու» անունները ճշորէն արձանագրուած են. իսկ  
չորս վկայութիւններու «հերոսներու» անունները, որոց  
նկատառումներով, փոխուած են:

ՀԵՊԻՒԱԿ

